Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություն-ներ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասի-րությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրություն-ների հեղինակներին, հրատարակիչներին:

*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝*[**http://www.armin.am**](http://www.armin.am)

*Էլ. փոստ՝*[**info@armin.am**](mailto:info@armin.am)

Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

# ԹՈՒՂԹ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ

Գրաբարից աշխարհաբարի վերածեցին՝
ՏԷՐ ՄԵՍՐՈՊ ՔԱՀԱՆԱՅ ԱՐԱՄԵԱՆԸ,
ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐԵԱՆԸ,
ՍԵԴԱ ՍՏԱՄԲՕԼՑԵԱՆԸ

«ԳԱՆՁԱՍԱՐ» հանդէս 1991

Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

# ԹՈՒՂԹ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ

Գրաբարից աշխարհաբարի վերածեցին՝
ՏԷՐ ՄԵՍՐՈՊ ՔԱՀԱՆԱՅ ԱՐԱՄԵԱՆԸ,
ՏԻԳՐԱՆ ԽԱՉԱՏՐԵԱՆԸ,
ՍԵԴԱ ՍՏԱՄԲՕԼՑԵԱՆԸ

«ԳԱՆՁԱՍԱՐ» հանդէս 1991

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
Տ. Տ. ՎԱԶԳԷՆԻ Ա
ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ
ՀԱՅՈՑ

ՀՐԱՄԱՆԱՒ
ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ԱՐՑԱԽԱՅ
Տ. ՊԱՐԳԵՒԻ
ՍՐԲԱԶԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

# ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Մեր օրերում ակներեւ հետաքրքրութիւն է դիտւում Եկեղեցու հայրերի աստուածաբանական ժառանգութեան նկատմամբ: Այս ոչ միայն զգացւում է Արցախում, այլեւ՝ մայր հայրենիքի ողջ տարածքում: Ցաւօք, այսօր արդի հայերէնով գրեթէ չկայ համապատասխան գրականութիւն, որպէսզի բաւարարի մարդկանց օրաւուր աճող հոգեւոր պահանջները:

Մեր հայրերի կողմից գրաբարով մեզ աւանդած հսկայական ժառանգութիւնը վերածել արդի հայերէնի, դասակարգել, վերլուծել եւ ապա մատուցել ժողովրդին՝ այնքան էլ դիւրին գործ չէ: Սակայն, տեսնելով մի կողմից տարբեր բնոյթի աղանդաւորական հոսանքների զգալի աշխուժացմամբ եւ լուրջ հոգեւոր գրականութեան բացակայութեամբ պայմանաւորուած անմխիթար վիճակը եւ միւս կողմից՝ անտեղեակութեան պատճառով մեր ժողովրդի արթնութեան ապակողմնորոշման եւ խեղաթիւրման վտանգը, ստիպուած եղանք, ի վերջոյ, մեր համեստ ուժերով լոյս աշխարհ բերել «Գանձասար» հանդէսը:

«Գանձասարը» Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմի կրօնական հանդէսն է: Այն հիմնադրուել է Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնութեամբ եւ մեր հրամանով: «Գանձասար» հանդէսը կիսամեայ աստուածաբանական պարբերական է, որը լոյս է տեսնելու 1992 թ. յունուարից: Հանդէսն իր հնարաւորութեան սահմաններում արտացոլելու է Հայոց Եկեղեցու աստուածաբանական ժառանգութեան բոլոր կողմերը՝ թարգմանութիւններ Եկեղեցու հայրերից, անտիպ ձեռագրերի քննական բնագրերի հրատարակումներ, դաւանական, խրատական, մեկնողական, ծի-

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
Տ. Տ. ՎԱԶԳԷՆԻ Ա
ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ
ՀԱՅՈՑ

ՀՐԱՄԱՆԱՒ
ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ԱՐՑԱԽԱՅ
Տ. ՊԱՐԳԵՒԻ
ՍՐԲԱԶԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

# ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Մեր օրերում ակներեւ հետաքրքրութիւն է դիտւում Եկեղեցու հայրերի աստուածաբանական ժառանգութեան նկատմամբ: Այս ոչ միայն զգացւում է Արցախում, այլեւ՝ մայր հայրենիքի ողջ տարածքում: Ցաւօք, այսօր արդի հայերէնով գրեթէ չկայ համապատասխան գրականութիւն, որպէսզի բաւարարի մարդկանց օրաւուր աճող հոգեւոր պահանջները:

Մեր հայրերի կողմից գրաբարով մեզ աւանդած հսկայական ժառանգութիւնը վերածել արդի հայերէնի, դասակարգել, վերլուծել եւ ապա մատուցել ժողովրդին՝ այնքան էլ դիւրին գործ չէ: Սակայն, տեսնելով մի կողմից տարբեր բնոյթի աղանդաւորական հոսանքների զգալի աշխուժացմամբ եւ լուրջ հոգեւոր գրականութեան բացակայութեամբ պայմանաւորուած անմխիթար վիճակը եւ միւս կողմից՝ անտեղեակութեան պատճառով մեր ժողովրդի արթնութեան ապակողմնորոշման եւ խեղաթիւրման վտանգը, ստիպուած եղանք, ի վերջոյ, մեր համեստ ուժերով լոյս աշխարհ բերել «Գանձասար» հանդէսը:

«Գանձասարը» Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմի կրօնական հանդէսն է: Այն հիմնադրուել է Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնութեամբ եւ մեր հրամանով: «Գանձասար» հանդէսը կիսամեայ աստուածաբանական պարբերական է, որը լոյս է տեսնելու 1992 թ. յունուարից: Հանդէսն իր հնարաւորութեան սահմաններում արտացոլելու է Հայոց Եկեղեցու աստուածաբանական ժառանգութեան բոլոր կողմերը՝ թարգմանութիւններ Եկեղեցու հայրերից, անտիպ ձեռագրերի քննական բնագրերի հրատարակումներ, դասական, խրատական, մեկնողական, ծի-

սական, արուեստաբանական բնոյթի վերլուծական յօդուածներ, ինչպէս նաեւ՝ սրբոց վարքեր եւ տօնախօսական քարոզներ: Բացի այս, «Գանձասար» հանդէսը ձեր ուշադրութեանը ներկայացնող գրքոյկով հիմնում է համանուն մատենաշար: Մատենաշարով լոյս են տեսնելու Եկեղեցու հայրերի եւ վերջին դարերի նշանաւոր վարդապետների առանձին երկեր, Աստուածաշնչի առանձին գրքերի խմբագիր մեկնութիւններ, խրատական ժողովածուներ եւ այլն: Խորապէս հաւատում ենք, որ այս ամէնը կօգնի լուսաւորելու մեր ժողովրդի միտքն ու հոգին՝ բերելով Աստուծոյ փրկարար մխիթարութիւնը, որի կարիքը, մանաւանդ՝ այս ծանր փորձութեան ժամանակաշրջանում, մենք բոլորս ունենք: Յուսով ենք, որ մեր այս համեստ ճիգերը իրենց նպաստը կբերեն մեր ժողովրդի ապաշխարութեան ճանապարհին, քանզի առանց ապաշխարութեան չկայ մաքրութիւն, լուսաւորութիւն, զօրութիւն, սէր, միաբանութիւն եւ ի վերջոյ՝ փրկութիւն եւ յաղթանակ:

Այս հոգեշահ եւ ծանր պարտականութիւնը սիրով ստանձնեցին մեր Եկեղեցու հաւատարիմ եւ ուսեալ մի խումբ երիտասարդ զաւակներ, որոնք աղօթքով, հաւատքով եւ տքնաջան աշխատանքով տաս ամսուայ ընթացքում պատրաստեցին «Գանձասար» հանդէսի մի քանի համարներ եւ համանուն մատենաշարի առաջին հինգ գրքերը: Մեր խորին շնորհակալութիւնը, երախտագիտութիւնը եւ օրհնութիւնը՝ հանդէսի պատասխանատու քարտուղար Տիգրան Խաչատրեանին, տեխնիկական խմբագիր Յովհաննէս Կիզողեանին, հանդէսի խմբագրութեան անդամներին՝ Մարթա Արաբեանին, Սեդա Ստամբոլցեանին, Աշխէն Ղարագեօզեանին, Արմէնուհի Պապեանին, Գանձասար վանքի դպիր Լեւոն Զաքեանին եւ վերջապէս հանդէսի գլխաւոր խմբագիր արժանապատիւ տէր Մեսրոպ քահանայ Արամեանին: Թող Աստուծոյ ամենազօր Աջը, մեր օրհնութիւնն ու ընթերցողների աղօթքները միշտ լինեն արժանապատիւ քահանայ հօր եւ նրա աշխատակից ընկերների հետ:



Մեր այս բարի մղումները եւ ժողովրդին անկեղծօրէն ծառայելու ցանկութիւնները ժամանակին ըստ արժանւոյն խրախուսեցին Վեհափառ Հայրապետի կողմից՝ ստանալով Նորին Սուրբ Օծութեան հայրապետական օրհնութիւնը:

Ինչպէս յայտնի է, սոյն թուի սեպտեմբերի 29—ին պէտք է տեղի ունենայ Սրբալոյս Միւռոնի օրհնութիւնը: Այս առիթով Վեհափառ Հայրապետին ենք ընծայում մեր աշխատանքի երախայրիքը՝ ս. Ներսէս Շնորհալու «Թուղթ ընդհանրականի» արեւելահայերէն թարգմանութիւնը՝ մաղթելով ի համբոյր Սուրբ Աջոյն եւ յայտնելով մեր որդիական խորին ակնածանքն ու սէրը:

**Պարգեւ եպիսկոպոս Մարտիրոսեան**
**Առաջնորդ Արցախի թեմի**

սական, արուեստաբանական բնոյթի վերլուծական յօդուածներ, ինչպէս նաեւ՝ սրբոց վարքեր եւ տօնախօսական քարոզներ: Բացի այս, «Գանձասար» հանդէսը ձեր ուշադրութեանը ներկայացնող գրքոյկով հիմնում է համանուն մատենաշար: Մատենաշարով լոյս են տեսնելու Եկեղեցու հայրերի եւ վերջին դարերի նշանաւոր վարդապետների առանձին երկեր, Աստուածաշնչի առանձին գրքերի խմբագիր մեկնութիւններ, խրատական ժողովածուներ եւ այլն: Խորապէս համոզուած ենք, որ այս ամէնը կօգնի լուսաւորելու մեր ժողովրդի միտքն ու հոգին՝ բերելով Աստուծոյ փրկարար մխիթարութիւնը, որի կարիքը, մանաւանդ՝ այս ծանր փորձութեան ժամանակաշրջանում, մենք բոլորս ունենք: Յոյսով ենք, որ մեր այս համեստ ճիգերը իրենց նպաստը կբերեն մեր ժողովրդի ապաշխարութեան ճանապարհին, քանզի առանց ապաշխարութեան չկայ մաքրութիւն, լուսաւորութիւն, զօրութիւն, սէր, միաբանութիւն եւ ի վերջոյ՝ փրկութիւն եւ յաղթանակ:

Այս հոգեշահ եւ ծանր պարտականութիւնը սիրով ստանձնեցին մեր Եկեղեցու հաւատարիմ եւ ուսեալ մի խումբ երիտասարդ զաւակներ, որոնք աղօթքով, հաւատքով եւ տքնաջան աշխատանքով տաս ամսուայ ընթացքում պատրաստեցին «Գանձասար» հանդէսի մի քանի համարներ եւ համանուն մատենաշարի առաջին հինգ գրքերը: Մեր խորին շնորհակալութիւնը, երախտագիտութիւնը եւ օրհնութիւնը՝ հանդէսի պատասխանատու քարտուղար Տիգրան Խաչատրեանին, տեխնիկական խմբագիր Յովհաննէս Կիզողեանին, հանդէսի խմբագրութեան անդամներին՝ Մարթա Արաբեանին, Սեդա Ստամբօլցեանին, Աշխէն Ղարագէօզեանին, Արմէնուհի Պապեանին, Գանձասար վանքի դպիր Լեւոն Զաքեանին եւ վերջապէս հանդէսի գլխաւոր խմբագիր ար-



ժանապատիւ տէր Մեսրոպ քահանայ Արամեանին: Թող Աստուծոյ ամենազօր Աջը, մեր օրհնութիւնն ու ընթերցողների աղօթքները միշտ լինեն արժանապատիւ քահանայ հօր եւ նրա աշխատակից ընկերների հետ:

Մեր այս բարի մղումները եւ ժողովրդին անկեղծօրէն ծառայելու ցանկութիւնները ժամանակին ըստ արժանւոյն խրախուսուեցին Վեհափառ Հայրապետի կողմից՝ ստանալով Նորին Սուրբ Օծութեան հայրապետական օրհնութիւնը:

Ինչպէս յայտնի է, սոյն թուի սեպտեմբերի 29—ին պէտք է տեղի ունենայ Սրբալոյս Միւռոնի օրհնութիւնը: Այս առիթով Վեհափառ Հայրապետին ենք ընծայում մեր աշխատանքի երախայրիքը՝ ս. Ներսէս Շնորհալու «Թուղթ ընդհանրականի» արեւելահայերէն թարգմանութիւնը՝ մատչելով ի համբոյր Սուրբ Աջոյն եւ յայտնելով մեր որդիական խորին ակնածանքն ու սէրը:

**Պարգեւ եպիսկոպոս Մարտիրոսեան**

**Առաջնորդ Արցախի թեմի**

# Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

Ս. Ներսէս Շնորհալին ծնուել է Կիլիկիայի Տլուք գաւառի Ծովք դղեակում մօտ 1100 թ.: Նրա հայրը՝ Ապիրատ Պահլաւունի իշխանը, սպանուեց պատերազմի ժամանակ, երբ Ներսէսը դեռեւս մանուկ էր: Ներսէսի երկու կրտսեր եղբայրները՝ Վասիլը եւ Շահանը, դարձան զինուորականներ, իսկ Ներսէսը իր աւագ եղբայր Գրիգորի հետ նախընտրեց Աստուծոյ նեղ եւ անձուկ ճանապարհը:

Գրիգորը եւ Ներսէսը կրթւում եւ դաստիարակւում են Քեսունի Կարմիր վանքում՝ առաջին երկու Պահլաւունի կաթողիկոսներ Գրիգոր Վկայասէրի եւ Բարսեղ Անեցու հոգածութեամբ եւ հոգեւոր հայրութեամբ: Երկու եղբայրները աշակերտում են նշանաւոր Ստեփանոս Մանուկ գիտնական վարդապետի մօտ: Բարսեղ կաթողիկոսի (1105—1113) անակնկալ մահից յետոյ Հայոց կաթողիկոս է դառնում Ներսէսի մեծ եղբայր Գրիգորը, երբ հազիւ 20 տարեկան էր: Գրիգորի կաթողիկոսական պաշտօնավարութեան շրջանը ամենաերկարն է մեր Եկեղեցու պատմութեան մէջ (1113—1166): Ներսէսը իր եկեղեցական բոլոր կարգերը (սարկաւագութիւն, քահանայութիւն, երբ 18 տարեկան էր եւ եպիսկոպոսութիւն՝ 30 տարեկան հասակում) ստանում է իր կաթողիկոս եղբօրից՝ դառնալով նրա զօրեղ աջակիցը եւ փոխանորդը հայրապետական բոլոր գործերի մէջ:

Շուտով Ներսէսը իր առաքինասէր վարքի, իմաստութեան հանճարի եւ անձանձիր քարոզչութեան շնորհիւ սիրւում է շատերի կողմից: Նրա իմաստութեան եւ սրբութեան բոյրը տարածւում է ողջ աշխարհում: Սակայն Ներսէսը իր



մեծ խոնարհութեան պատճառով խուսափում էր մեծարանքներից եւ միշտ ձգտում առանձնութեան եւ ճգնութիւնների:

Մօտ 1150 թ. Տիրոջ նախախնամութեամբ Պահլաւունիների ձեռքն է անցնում Հռոմկլայի ամուր բերդը: Այստեղ է հանգրուանում աստանդական հայրապետական աթոռը եւ շուրջ մէկուկէս դար մնում համեմատաբար խաղաղ ու անխռով պայմաններում: Ներսէսի անունը սերտօրէն կապուեց այս դղեակի հետ, եւ այս իսկ պատճառով պատմութեան մէջ յայտնի է նաեւ Կլայեցի մականունով: Կեանքի մնացած մասը՝ գրեթէ քառորդ դար, նա անցկացնում է այս «տօթ» բերդի մէջ: Միայն մէկ անգամ է առիթ ունենում կարեւոր առաքելութեամբ դուրս գալու այս «բերդարգելութիւնից»: Կիլիկիոյ երկու մեծ հայ իշխանները՝ Թորոս Լեւոնի Ռուբինեանը եւ Լամբրոնի բերդի տէր Օշինը, իրար դէմ զէնք էին վերցրել (1164 թ.): Շնորհալին ուղարկւում է նրանց հաշտեցնելու համար: Նրա առաքելութիւնը յաջողութեամբ է պսակւում. երկու իշխանները հաշտւում են եւ վերջ տալիս եղբայրասպան կռուին:

Վերադարձի ճանապարհին Մամեստիա քաղաքի մէջ Շնորհալին հանդիպում է Բիւզանդիայի կայսեր փեսային եւ ներկայացուցչին՝ Ալէքս դուքսին, որը եկեղեցիների բաժանման կապակցութեամբ հետաքրքրւում է Հայոց Եկեղեցու դաւանութեամբ: Այստեղից սկիզբ են առնում միարարական բանակցութիւններ Հայոց Հայրապետութեան եւ Բիւզանդիայի կայսեր եւ յունաց պատրիարքի միջեւ: Այս բանակցութիւնները շարունակւում են մինչեւ Ներսէսի կեանքի վերջը: Բանակցութիւնների թղթակցութիւնները պահպանուել են թէ՛ հայերէնով, թէ՛ յունարէնով:

# Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

Ս. Ներսէս Շնորհալին ծնուել է Կիլիկիայի Տլուք գաւառի Ծովք դղեակում մօտ 1100 թ.: Նրա հայրը՝ Ապիրատ Պահլաւունի իշխանը, սպանուեց պատերազմի ժամանակ, երբ Ներսէսը դեռեւս մանուկ էր: Ներսէսի երկու կրտսեր եղբայրները՝ Վասիլը եւ Շահանը, դարձան զինուորականներ, իսկ Ներսէսը իր աւագ եղբայր Գրիգորի հետ նախընտրեց Աստուծոյ նեղ եւ անձուկ ճանապարհը:

Գրիգորը եւ Ներսէսը կրթւում եւ դաստիարակւում են Քեսունի Կարմիր վանքում՝ առաջին երկու Պահլաւունի կաթողիկոսներ Գրիգոր Վկայասէրի եւ Բարսեղ Անեցու հոգածութեամբ եւ հոգեւոր հայրութեամբ: Երկու եղբայրները աշակերտում են Շչանաւոր Ստեփանոս Մանուկ գիտնական վարդապետի մօտ: Բարսեղ կաթողիկոսի (1105—1113) անակնկալ մահից յետոյ Հայոց կաթողիկոս է դառնում Ներսէսի մեծ եղբայր Գրիգորը, երբ հազիւ 20 տարեկան էր: Գրիգորի կաթողիկոսական պաշտօնավարութեան շրջանը ամենաերկարն է մեր Եկեղեցու պատմութեան մէջ (1113—1166): Ներսէսը իր եկեղեցական բոլոր կարգերը (սարկաւագութիւն, քահանայութիւն, երբ 18 տարեկան էր եւ եպիսկոպոսութիւն՝ 30 տարեկան հասակում) ստանում է իր կաթողիկոս եղբօրից՝ դառնալով նրա զօրեղ աջակիցը եւ փոխանորդը հայրապետական բոլոր գործերի մէջ:

Շուտով Ներսէսը իր առաքինասէր վարքի, իմաստութեան հանճարի եւ անձանձիր քարոզչութեան շնորհիւ սիրւում է շատերի կողմից: Նրա իմաստութեան եւ սրբութեան բոյրը տարածւում է ողջ աշխարհում: Սակայն Ներսէսը իր մեծ խոնարհութեան պատճառով խուսափում էր մեծարանքներից եւ միշտ ձգտում առանձնութեան եւ ճգնութիւնների:

Մօտ 1150 թ. Տիրոջ նախախնամութեամբ Պահլաւունիների ձեռքն է անցնում Հռոմկլայի ամուր բերդը: Այստեղ է հանգրուանում աստանդական հայրապետական աթոռը եւ շուրջ մէկուկէս դար մնում համեմատաբար խաղաղ ու անխռով պայմաններում: Ներսէսի անունը սերտօրէն կապուեց այս դղեակի հետ, եւ այս իսկ պատճառով պատմութեան մէջ յայտնի է նաեւ Կլայեցի մականունով: Կեանքի մնացած մասը՝ գրեթէ քառորդ դար, նա անցկացնում է այս «տօթ» բերդի մէջ: Միայն մէկ անգամ է առիթ ունենում կարեւոր առաքելութեամբ դուրս գալու այս «բերդարգելութիւնից»: Կիլիկիոյ երկու մեծ հայ իշխանները՝ Թորոս Լեւոնի Ռուբինեանը եւ Լամբրոնի բերդի տէր Օշինը, իրար դէմ զէնք էին վերցրել (1164 թ.): Շնորհալին ուղարկւում է նրանց հաշտեցնելու համար: Նրա առաքելութիւնը յաջողութեամբ է պսակւում. երկու իշխանները հաշտւում են եւ վերջ տալիս եղբայրասպան կռուին:

Վերադարձի ճանապարհին Մամեստիա քաղաքի մէջ Շնորհալին հանդիպում է Բիւզանդիայի կայսեր փեսային եւ ներկայացուցչին՝ Ալէքս դուքսին, որը եկեղեցիների բաժանման կապակցութեամբ հետաքրքրւում է Հայոց Եկեղեցու դաւանութեամբ: Այստեղից սկիզբ են առնում միարարական բանակցութիւններ Հայոց Հայրապետութեան եւ Բիւզանդիայի կայսեր եւ յունաց պատրիարքի միջեւ: Այս բանակցութիւնները շարունակւում են մինչեւ Ներսէսի կեանքի վերջը: Բանակցութիւնների թղթակցութիւնները պահպանուել են թէ՛ հայերէնով, թէ՛ յունարէնով:

Արդէն ծերացած եւ հիւանդ Գրիգոր Գ. Պահլաւունին, 1166 թ. ապրիլի 17–ին, իր եղբօրը՝ Ներսէսին, ձեռնադրում է կաթողիկոս ու երեք ամիս յետոյ վախճանւում: Ս. Ներսէսը, 7–8 տարի խաղաղութեամբ պաշտօնավարելով, 1173 թ. վախճանւում եւ թաղւում է եղբօր կողքին՝ Հռոմկլայ բերդում:

Նրա գերեզմանը մեծ ուխտատեղի էր մինչեւ առաջին համաշխարհային պատերազմը: Ս. Ներսէս Շնորհալու յիշատակը տօնւում է ս. Թարգմանչաց հետ՝ Խաչվերացին յաջորդող հինգերորդ շաբաթ օրը:

* * *

Ներսէս Շնորհալին թողել է հարուստ աստուածաբանական ժառանգութիւն: Նրա երկերն աչքի են ընկնում աստուածաբանական մտքի յստակութեամբ, քրիստոնէական ապրումի ազնւութեամբ եւ խօսքի նուրբ հանճարով: Շնորհալին մեծածաւալ քերթողական գրականութեան հեղինակ է. բազմաթիւ շարականներ, երգեր, ներբողներ, գանձեր, աղօթքներ եւ այլն: Նա իր հոգեբուխ աղօթքներով եւ քարոզներով, ինչպէս նաեւ հոգեզմայլ շարականներով եւ երգերով բոլորից առաւել ճոխացրեց մեր Շարակնոցը եւ Ժամագիրքը: Ս. Ներսէսի «Հաւատով խոստովանիմ» աղօթքը հայ հաւատացեալի ամենասիրելի աղօթքն է: Շնորհալին մեր Եկեղեցու գանձարանը հարստացրել է նաեւ մեծարժէք արձակ գործերով: Նրա արձակ գործերի մէջ նշանաւոր են դաւանական թղթերը, «Ատենաբանութիւնը», Մատթէոսի Աւետարանի



մեկնութիւնը (առաջին 5 գլուխ), վկայաբանութիւնները եւ յատկապէս՝ «Թուղթ ընդհանրականը»:

«Թուղթ ընդհանրականը» ս. Ներսէս Շնորհալու անդրանիկ կոնդակն է՝ ուղղուած համայն հայ ժողովրդին: Իր գրութեան օրուանից մինչեւ այսօր «Թուղթ ընդհանրականը» պահել է իր բացառիկ զօրութիւնը եւ արդիականութիւնը. այն այսօ՛ր էլ լաւագոյն ուղեցոյց է հոգեւոր կեանքի եւ եկեղեցական բարեկարգութեան: Այս գրուածքում Շնորհալին հանդէս է գալիս որպէս իր Եկեղեցու մանկանց դէպի փրկութիւն առաջնորդող արթուն հովիւ եւ իր զաւակներին պէս–պէս փորձութիւնների մէջ մխիթարող հայր: Սուրբի խօսքը ներծծուած է Աստուծոյ խորը երկիւղով, անհեղ Դատաստանի հատուցման սարսափով եւ արարածի նկատմամբ կարեկցանքով ու գորովով:

Թղթի ներածականում սուրբ Հայրապետը մասնաւորաբար անդրադառնում է քրիստոնէական հաւատքի հիմքը կազմող ճշմարտութիւններին: Երկրորդելով աստուածային Պօղոսին [տե՛ս Ա Կոր. Գ 11–12]՝ նա սովորեցնում է, որ հաւատքի ճշմարիտ դաւանութիւնը մեր միջի աստուածային տաճարի հիմքն է, իսկ բարի գործերը այդ հիմքի վրայ բարձրացրած շինուածքն են: Այս տաճարը պէտք է կառուցել թանկարժէք շինանիւթերով՝ «ոսկով», որն արդարութիւնն ու ճշմարտութիւնն է, «արծաթով», որը մտքի մաքրութիւնն ու սրտի սրբութիւնն է, «թանկարժէք քարերով», որոնք բազմապատիկ առաքինութիւնների տեսակներն են՝ սէր, խոնարհութիւն, ողորմութիւն, անոխակալութիւն, պահք, աղօթք, ժուժկալութիւն եւ այլն: Նա, ով ունի կենդանի հաւատք, այսինքն՝ ճշմարիտ դաւանութիւնը եւ հաւատքի գործերը, երբեք չի յանդգնում սրտում չարութիւն

Արդէն ծերացած եւ հիւանդ Գրիգոր Գ. Պահլաւունին, 1166 թ. ապրիլի 17–ին, իր եղբօրը՝ Ներսէսին, ձեռնադրում է կաթողիկոս ու երեք ամիս յետոյ վախճանւում: Ս. Ներսէսը, 7–8 տարի խաղաղութեամբ պաշտօնավարելով, 1173 թ. վախճանւում եւ թաղւում է եղբօր կողքին՝ Հռոմկլայ բերդում:

Նրա գերեզմանը մեծ ուխտատեղի էր մինչեւ առաջին համաշխարհային պատերազմը: Ս. Ներսէս Շնորհալու յիշատակը տօնւում է ս. Թարգմանչաց հետ՝ Խաչվերացին յաջորդող հինգերորդ շաբաթ օրը:

* * *

Ներսէս Շնորհալին թողել է հարուստ աստուածաբանական ժառանգութիւն: Նրա երկերն աչքի են ընկնում աստուածաբանական մտքի յստակութեամբ, քրիստոնէական ապրումի ազնուութեամբ եւ խօսքի նուրբ հանճարով: Շնորհալին մեծածաւալ քերթողական գրականութեան հեղինակ է. բազմաթիւ շարականներ, երգեր, ներբողներ, գանձեր, աղօթքներ եւ այլն: Նա իր հոգեբուխ աղօթքներով եւ քարոզներով, ինչպէս նաեւ հոգեզմայլ շարականներով եւ երգերով բոլորից առաւել ճոխացրեց մեր Շարակնոցը եւ Ժամագիրքը: Ս. Ներսէսի «Հաւատով խոստովանիմ» աղօթքը հայ հաւատացեալի ամենասիրելի աղօթքն է: Շնորհալին մեր Եկեղեցու գանձարանը հարստացրել է նաեւ մեծարժէք արձակ գործերով: Նրա արձակ գործերի մէջ նշանաւոր են դաւանական թղթերը, «Ատենաբանութիւնը», Մատթէոսի Աւետարանի



մեկնութիւնը (առաջին 5 գլուխ), վկայաբանութիւնները եւ յատկապէս՝ «Թուղթ ընդհանրականը»:

«Թուղթ ընդհանրականը» ս. Ներսէս Շնորհալու անդրանիկ կոնդակն է՝ ուղղուած համայն հայ ժողովրդին: Իր գրութեան օրուանից մինչեւ այսօր «Թուղթ ընդհանրականը» պահել է իր բացառիկ զօրութիւնը եւ արդիականութիւնը. այն այսօ՛ր էլ լաւագոյն ուղեցոյց է հոգեւոր կեանքի եւ եկեղեցական բարեկարգութեան: Այս գրուածքում Շնորհալին հանդէս է գալիս որպէս իր Եկեղեցու մանկանց դէպի փրկութիւն առաջնորդող արթուն հովիւ եւ իր զաւակներին պէս–պէս փորձութիւնների մէջ մխիթարող հայր: Սրտի խօսքը ներծծուած է Աստուծոյ խորը երկիւղով, ահեղ Դատաստանի հատուցման սարսափով եւ արարածի նկատմամբ կարեկցանքով ու գորովով:

Թղթի ներածականում սուրբ Հայրապետը մասնաւորաբար անդրադառնում է քրիստոնէական հաւատքի հիմքը կազմող ճշմարտութիւններին: Երկրորդելով աստուածային Պօղոսին [տե՛ս Ա Կոր. Գ 11–12]՝ նա սովորեցնում է, որ հաւատքի ճշմարիտ դաւանութիւնը մեր միջի աստուածային տաճարի հիմքն է, իսկ բարի գործերը այդ հիմքի վրայ բարձրացրած շինուածքն են: Այս տաճարը պէտք է կառուցել թանկարժէք շինանիւթերով՝ «ոսկով», որն արդարութիւնն ու ճշմարտութիւնն է, «արծաթով», որը մտքի մաքրութիւնն ու սրտի սրբութիւնն է, «թանկարժէք քարերով», որոնք բազմապատիկ առաքինութիւնների տեսակներն են՝ սէր, խոնարհութիւն, ողորմութիւն, անոխակալութիւն, պահք, աղօթք, ժուժկալութիւն եւ այլն: Նա, ով ունի կենդանի հաւատք, այսինքն՝ ճշմարիտ դաւանութիւնը եւ հաւատքի գործերը, երբեք չի յանդգնում սրտում չարութիւն

խորհել կամ բերանով անիրաւութիւն խօսել եւ կամ հոգով մեղք գործել: Ամփոփելով ներածական մասը՝ նա խօսքն ուղղում է կեանքի զանազան ասպարէզներում ընդգրկուած մարդկանց դասերին:

## Վանքերի խարազնազգեստ ճգնաւորներին

Կրօնաւորները իրենց գերաշխարհիկ կենցաղավարութեամբ եւ աղօթքներով աշխարհի սիւներն են, պարիսպ են թշնամու դէմ, հրեշտակներ՝ մարմնի մէջ եւ լուսատու աստղեր՝ երկրի վրայ: Շնորհալի Հայրապետը դիմում է նրանց՝ աղաչելով, որ չաղօտացնեն իրենց հաւատքի լապտերների լոյսը՝ ողորմութեան ու սրբութեան իւղը նուազեցնելով, այլ մշտավառ առաքինութեամբ անշէջ պահեն իրենց հոգիներում աստուածութեան ճառագայթները: Այնուհետեւ նա խօսքի սլաքն ուղղում է աշխարհասէր եւ մեղկ կրօնաւորներին, որոնք հին Իսրայէլի նման սրտով եգիպտական խաւար գործերին են վերադառնում՝ տրւում են զանազան կրքերի ու մոլութիւնների՝ իրենց ուխտը պղծելով եւ աշխարհականներին չար օրինակ ծառայելով: Կրօնաւորներին ուղղուած խօսքն աւարտում է աւետարանական կոչով՝ «Թող ձեր լոյսն այնպէս լուսաւորի մարդկանց առաջ, որպէսզի տեսնեն ձեր բարի գործերն ու փառաւորեն ձեր Հօրը, որ երկնքում է» [Մատթ. Ե 16]:

## Վանական սուրբ ուխտերի առաջնորդներին

Վանքերի առաջնորդները պէտք է երկու աչքով լուսաւորուած լինեն, այսինքն՝ Աստուածաշնչի գիտութեամբ եւ առաքինասէր գործերով՝ անբծութեամբ եւ ամենայն արդարութեամբ: Առաջնորդներից պահանջւում է հոգատարութիւն



եղբայրների նկատմամբ. նախ՝ հոգեւոր, ապա՝ մարմնաւոր գործերի մէջ, որպէսզի թէ՛ առաջնորդները, թէ՛ առաջնորդուողները, խոնարհամիտ փութով ընթանալով արդարութեան շաւիղներով, հասնեն խաղաղ եւ անքոյթ Նաւահանգիստը:

## Աշխարհի մէջ գտնուող Եկեղեցու առաջնորդներին, որոնք եպիսկոպոս են կոչւում

Եպիսկոպոսական պաշտօնը հաստատուել է Քրիստոսի եւ Իր առաքեալների կողմից, որպէսզի քահանաներին եւ ժողովրդին հրամանատար լինեն, որպէս տեսուչ՝ մտքի աննիրհ աչքով բոլորի վրայ հսկեն, խոտորուածներին ուղղեն եւ ուղիղներին իրենց ճանապարհի մէջ հաստատուն պահեն:

«Եպիսկոպոսը պէտք է լինի անարատ՝ որպէս Աստուծոյ տնտես, հեզ, ցածր, պարկեշտ, հիւրասէր, բարեսէր, արդար, սուրբ, ժուժկալ, ո՛չ արծաթասէր, ո՛չ կռուող, ո՛չ խփող, այլ հանդարտ» [տե՛ս Ա Տիմ. Գ 2]: Պօղոս առաքեալի այս խօսքը առանցքային նշանակութիւն ունի՝ հասկանալու համար եպիսկոպոսութեան ներիմաստը: Շնորհալին գեղեցիկ կերպով մեկնում է այս խօսքը՝ բացայայտելով եպիսկոպոսի հոգեբանական եւ բարոյական նկարագիրը:

Այնուհետեւ, անդրադառնալով այն օրերի եպիսկոպոսների դժնդակ գործերին, սուրբ Հայրապետն ասում է, որ եպիսկոպոսութեան ձգտողների միակ նպատակն է զանազան հնարքներով հարստութիւն հաւաքել հաւատացեալներից եւ փառք որսալ փառատրողներից: Եւ փոխանակ անսալու աստուածային պատուիրաններին՝ համառօրէն խցանում են իրենց ականջները եւ, փառամոլ ախտով արբած ու յիմարացած, չեն դադարում խռովութիւն մտցնել փեսայացեալ Բանի երկնաւոր հարսնարանի խաղաղ առագաստը:

խորհել կամ բերանով անիրաւութիւն խօսել եւ կամ հոգով մեղք գործել: Ամփոփելով ներածական մասը՝ նա խօսքն ուղղում է կեանքի զանազան ասպարէզներում ընդգրկուած մարդկանց դասերին:

### Վանքերի խարազնազգեստ ճգնաւորներին

Կրօնաւորները իրենց գերաշխարհիկ կենցաղավարութեամբ եւ աղօթքներով աշխարհի սիւներն են, պարիսպ են թշնամու դէմ, հրեշտակներ՝ մարմնի մէջ եւ լուսատու աստղեր՝ երկրի վրայ: Շնորհալի Հայրապետը դիմում է նրանց՝ աղաչելով, որ չաղօտացնեն իրենց հաւատքի լապտերների լոյսը՝ ողորմութեան ու սրբութեան իւղը նուազեցնելով, այլ մշտավառ առաքինութեամբ անշէջ պահեն իրենց հոգիներում աստուածութեան ճառագայթները: Այնուհետեւ նա խօսքի սլաքն ուղղում է աշխարհասէր եւ մեղկ կրօնաւորներին, որոնք հին Իսրայէլի նման սրտով եգիպտական խաւար գործերին են վերադառնում՝ տրւում են զանազան կրքերի ու մոլութիւնների՝ իրենց ուխտը պղծելով եւ աշխարհականներին չար օրինակ ծառայելով: Կրօնաւորներին ուղղուած խօսքն աւարտւում է աւետարանական կոչով՝ «Թող ձեր լոյսն այնպէս լուսաւորի մարդկանց առաջ, որպէսզի տեսնեն ձեր բարի գործերն ու փառաւորեն ձեր Հօրը, որ երկնքում է» [Մատթ. ե 16]:

### Վանական սուրբ ուխտերի առաջնորդներին

Վանքերի առաջնորդները պէտք է երկու աչքով լուսաւորուած լինեն, այսինքն՝ Աստուածաշնչի գիտութեամբ եւ առաքինասէր գործերով՝ անբծութեամբ եւ ամենայն արդարութեամբ: Առաջնորդներից պահանջւում է հոգատարութիւն



եղբայրների նկատմամբ. նախ՝ հոգեւոր, ապա՝ մարմնաւոր գործերի մէջ, որպէսզի թէ՛ առաջնորդները, թէ՛ առաջնորդուողները, խոնարհամիտ փութով ընթանալով արդարութեան շաւիղներով, հասնեն խաղաղ եւ անքոյթ Նաւահանգիստը:

### Աշխարհի մէջ գտնուող Եկեղեցու առաջնորդներին, որոնք եպիսկոպոս են կոչւում

Եպիսկոպոսական պաշտօնը հաստատուել է Քրիստոսի եւ Իր առաքեալների կողմից, որպէսզի քահանաներին եւ ժողովրդին հրամանատար լինեն, որպէս տեսուչ՝ մտքի աննիրհ աչքով բոլորի վրայ հսկեն, խոտորուածներին ուղղեն եւ ուղիղներին իրենց ճանապարհի մէջ հաստատուն պահեն:

«Եպիսկոպոսը պէտք է լինի անարատ՝ որպէս Աստուծոյ տնտես, հեզ, ցածր, պարկեշտ, հիւրասէր, բարեսէր, արդար, սուրբ, ժուժկալ, ո՛չ արծաթասէր, ո՛չ կռուող, ո՛չ խփող, այլ՝ հանդարտ» [տե՛ս Ա Տիմ. Գ 2]: Պօղոս առաքեալի այս խօսքը առանցքային նշանակութիւն ունի՝ հասկանալու համար եպիսկոպոսութեան ներիմաստը: Շնորհալին գեղեցիկ կերպով մեկնում է այս խօսքը՝ բացայայտելով եպիսկոպոսի հոգեբանական եւ բարոյական նկարագիրը:

Այնուհետեւ, անդրադառնալով այն օրերի եպիսկոպոսների դժնդակ գործերին, սուրբ Հայրապետն ասում է, որ եպիսկոպոսութեան ձգտողների միակ նպատակն է զանազան հնարքներով հարստութիւն հաւաքել հաւատացեալներից եւ փառք որսալ փառաւորողներից: Եւ փոխանակ անսալու աստուածային պատուիրաններին՝ համառօրէն խցանում են իրենց ականջները եւ, փառամոլ ախտով արբած ու յիմարացած, չեն դադարում խռովութիւն մտցնել փեսայացեալ Բանի երկնաւոր հարսնարանի խաղաղ առագաստը:

Սակայն եպիսկոպոսը ճշմարտութեան ջատագովն է եւ աստուածային բարիքների հետեւորդը: Ուստի նա պէտք է լիովին պատրաստ լինի հոգեւոր հովւութեան գործին, որպէսզի համարձակ եւ պարզերես ներկայանայ Նրան, Ով տուեց պատուիրանի տաղանդը, եւ լսի երանաւէտ բարբառը, թէ՝ «Բարի եւ հաւատարի՛մ ծառայ, որովհետեւ քչի մէջ հաւատարիմ ես, շատի վրայ կկարգեմ քեզ, մտի՛ր քո Տիրոջ ուրախութեան մէջ» [տե՛ս Մատթ. ԻԵ 21]:

## Քահանաների դասին

Քահանան Տիրոջ խորհուրդների սպասաւորն է: Նա սուրբ Աւազանի Մկրտութեամբ մարդկանց որդեգրում է Հայր Աստծուն եւ դարձնում Քրիստոսի ժառանգակիցներ: Քահանան խոստովանութեամբ եւ Տիրոջ կենարար Մարմնի եւ Արեան բաշխմամբ անընդհատ նորոգում է Քրիստոսի բանաւոր հօտը: Քահանայական գործը, ըստ Շնորհալու, աւելի վեր է, քան հրեշտակային գերաշխարհիկ զօրութիւնները, եթէ այն կատարւում է անարատութեամբ եւ սրբութեամբ: Քահանայական կոչումը մարդկանցից չէ, ոչ էլ՝ մարդու միջոցով, այլ՝ Նրանից, որ Քահանայ կոչուեց ըստ Մելքիսեդեկի կարգի եւ Իրեն հաշտութեան պատարագ մատուցեց Հայր Աստծուն: Քահանան թէպէտ եւ զարդարուած լինի ամէն տեսակ առաքինութիւններով, պէտք է մեծ հոգատարութիւն ունենայ Եկեղեցու պայծառութեան համար եւ ահով ու երկիւղով վայելչաբար կատարի աստուածային խորհուրդները: Քահանան պէտք է զգուշութեամբ եւ իմաստօրէն քննի աստուածային խորհուրդներին մերձեցողներին, որպէսզի խորհուրդը ի դատապարտութիւն տուեալ անձին չկատարուի, այլ հաղորդ դարձնի նրան աստուածային անճառ պարգեւներին:



Քահանաների մօտ սատանան բազում պատճառներ է ստեղծում իրար հետ կռուելու, վիճաբանելու համար եւ ոխակալութեան, նախանձի, իրար մասին բամբասելու, փառասիրութեան, որկրամոլութեան, ագահութեան եւ դրամաշորթութեան ախտերով մշտապէս տանջում է նրանց հոգիները: Եւ նրանցից լուծարւում է սիրոյ պատուիրանը եւ Քրիստոսի աշակերտութեան նշանը: Սակայն առաջին հերթին նրանց է ուղղուած Տիրոջ խօսքը՝ «Եթէ դուք միմեանց սիրէք, դրանով բոլորը պիտի իմանան, որ դուք իմ աշակերտներն էք» [Յովհ. ԺԳ 35]:

## Աշխարհի իշխաններին

Իշխանները պէտք է հնազանդ լինեն Աստուծոյ օրէնքներին, որպէսզի իբրեւ Տիրոջ դէմ ապստամբածներ չպատժուեն: Եթէ իշխանները իրենց հարստութիւնն ու իշխանութիւնը Աստուծոյ կամքի համաձայն գործածեն, դժուարինը դիւրին կլինի, եւ կարժանան երկնքի արքայութեանը, ինչպէս Աբրահամը, Յոբը եւ այլոք: Նրանք, ովքեր անիրաւութեամբ են վարւում հպատակների հետ, զրկում կարօտեալներին, անտեսում այրու եւ աղքատի իրաւունքը, իրենց վրայ են շարժում Աստուծոյ բարկութիւնը: Իսկ նրանք, ովքեր յափշտակութեամբ, կողոպուտով եւ անիրաւ ստացուածքներով են լցնում իրենց տները՝ հեղելով անմեղների արիւնը, որպէսզի նրանք վկայ չլինեն իրենց անօրէնութեանը, նրանց օթեւանը արքայութիւնը չէ, այլ՝ գեհենի հուրը, ապրնջական անքուն որդը եւ յաւիտենական տարտարոսը: Սուրբ Հայրապետը իշխաններին յորդորում է ներող ու համբերող լինել բոլոր նրանց հանդէպ, ովքեր մեղանչել են իրենց դէմ, որպէսզի ընդունեն Տիրոջ քաղցրութիւնն ու բարերարութիւնը:

Սակայն եպիսկոպոսը ճշմարտութեան ջատագովն է եւ աստուածային բարիքների հետեւողը: Ուստի նա պէտք է լիովին պատրաստ լինի հոգեւոր հովուութեան գործին, որպէսզի համարձակ եւ պարզերես ներկայանայ Նրան, Ով տուեց պատուիրանի տաղանդը, եւ լսի երանաւէտ բարբառը, թէ՝ «Բարի եւ հաւատարի՛մ ծառայ, որովհետեւ քչի մէջ հաւատարիմ ես, շատի վրայ կկարգեմ քեզ, մտի՛ր քո Տիրոջ ուրախութեան մէջ» [տե՛ս Մատթ. ԻԵ 21]:

## Քահանաների դասին

Քահանան Տիրոջ խորհուրդների սպասաւորն է: Նա սուրբ Աւազանի Մկրտութեամբ մարդկանց որդեգրում է Հայր Աստծուն եւ դարձնում Քրիստոսի ժառանգակիցներ: Քահանան խոստովանութեամբ եւ Տիրոջ կենարար Մարմնի եւ Արեան բաշխմամբ անընդհատ նորոգում է Քրիստոսի բանաւոր հօտը: Քահանայական գործը, ըստ Շնորհալու, աւելի վեր է, քան հրեշտակային գերաշխարհիկ զօրութիւնները, եթէ այն կատարւում է անարատութեամբ եւ սրբութեամբ: Քահանայական կոչումը մարդկանցից չէ, ոչ էլ՝ մարդու միջոցով, այլ՝ Նրանից, որ Քահանայ կոչուեց ըստ Մելքիսեդեկի կարգի եւ Իրեն հաշտութեան պատարագ մատուցեց Հայր Աստծուն: Քահանան թէպէտ եւ զարդարուած լինի ամէն տեսակ առաքինութիւններով, պէտք է մեծ հոգատարութիւն ունենայ Եկեղեցու պայծառութեան համար եւ ահով ու երկիւղով վայելչաբար կատարի աստուածային խորհուրդները: Քահանան պէտք է զգուշութեամբ եւ իմաստօրէն քննի աստուածային խորհուրդներին մերձեցողներին, որպէսզի խորհուրդը ի դատապարտութիւն տուեալ անձին չկատարուի, այլ հաղորդ դարձնի նրան աստուածային անճառ պարգեւներին:



Քահանաների մօտ սատանան բազում պատճառներ է ստեղծում իրար հետ կռուելու, վիճաբանելու համար եւ ոխակալութեան, նախանձի, իրար մասին բամբասելու, փառասիրութեան, որկրամոլութեան, ագահութեան եւ դրամաշորթութեան ախտերով մշտապէս տանջում է նրանց հոգիները: Եւ նրանցից լուծարւում է սիրոյ պատուիրանը եւ Քրիստոսի աշակերտութեան նշանը: Սակայն առաջին հերթին նրանց է ուղղուած Տիրոջ խօսքը՝ «Եթէ դուք միմեանց սիրէք, դրանով բոլորը պիտի իմանան, որ դուք իմ աշակերտներն էք» [Յովհ. ԺԳ 35]:

## Աշխարհի իշխաններին

Իշխանները պէտք է հնազանդ լինեն Աստուծոյ օրէնքներին, որպէսզի իբրեւ Տիրոջ դէմ ապստամբածներ չպատժուեն: Եթէ իշխանները իրենց հարստութիւնն ու իշխանութիւնը Աստուծոյ կամքի համաձայն գործածեն, դժուարինը դիւրին կլինի, եւ կարժանան երկնքի արքայութեանը, ինչպէս Աբրահամը, Յոբը եւ այլոք: Նրանք, ովքեր անիրաւութեամբ են վարւում հպատակների հետ, զրկում կարօտեալներին, անտեսում այրու եւ աղքատի իրաւունքը, իրենց վրայ են շարժում Աստուծոյ բարկութիւնը: Իսկ նրանք, ովքեր յափշտակութեամբ, կողոպուտով եւ անիրաւ ստացուածքներով են լցնում իրենց տները՝ հեղելով անմեղների արիւնը, որպէսզի նրանք վկայ չլինեն իրենց անօրէնութեանը, նրանց օթեւանը արքայութիւնը չէ, այլ՝ գեհենի հուրը, ասպնջական անքուն որդը եւ յաւիտենական տարտարոսը: Սուրբ Հայրապետը իշխաններին յորդորում է ներող ու համբերող լինել բոլոր նրանց հանդէպ, ովքեր մեղանչել են իրենց դէմ, որպէսզի ընդունեն Տիրոջ քաղցրութիւնն ու բարերարութիւնը:

## Զինուորների դասերին

Զինուորականները հաւատարմութեամբ եւ աննենգ նուիրումով պէտք է ծառայեն իրենց իշխանութիւններին եւ պետութիւններին: Եւ չլինի թէ զինուորութիւնը պատճառ լինի՝ արհամարհելու Աստուծոյ պատուիրանները, խախտելու սուրբ պահքը, յափշտակելու աղքատների ունեցուածքը եւ հեղելու անմեղների արիւնը: Հասարակ ժողովրդից առաւել զինուո՛րը պէտք է վախենայ Աստծուց եւ Նրա պատուիրանները պահի, քանզի ամէն ժամ թշնամիների սրի դէմ է պատերազմում: Հետեւաբար, մարմնական զէնքերից աւելի նա պէտք է սպառազինուի հաւատքի զէնքերով, այսինքն՝ աստուածպաշտութեամբ, սրբութեամբ, պահքով, աղօթքով եւ ողորմութեամբ, որպէսզի պատերազմում Աստուած հալածի նրա թշնամիներին:

## Քաղաքացիներին

Քաղաքացիները, առեւտրականները եւ արհեստաւորները պէտք է ուղիղ եւ անարատ կենցաղավարութեամբ ապրեն, խաբէութիւն եւ նենգութիւն չգործեն, իրենց ունեցուածքից ողորմութիւն տան կարօտեալներին եւ աղքատներին, որպէսզի Դատաստանի Օրը Քրիստոսից առատ վարձատրութիւն ստանան:

## Երկրագործներին եւ համայն ժողովրդին

Շնորհալի Հայրապետը ասում է, որ առաւելապէս երկրագործներն ու հասարակ ժողովուրդը կարիք ունեն բժշկելու իրենց հոգիները, որպէսզի առողջանան մեղքերի հիւանդութիւններից: Այս անցաւոր կեանքի մարմնական հեշտութիւնները մարդուն հեռացնում են երկնքի արքայութեան վայելքից, իսկ պղծալի պոռնկութեամբ եւ շնութեամբ ապականում է հոգու տաճարը: Գինեմոլութիւնը մայր է պոռնկութեան, ամէն տեսակ պղծութիւնների, անիրաւութեան, վէճի, անարգալից աղտոտ խօսքերի, սպանութեան եւ այլն: Այնուհետեւ նա խրատում է բոլոր հաւատացեալներին իրենց մանուկներին Աստուծոյ երկիւղով սնուցել եւ մանուկ հասակից աստուածասէր, ողորմած եւ աղօթասէր դաստիարակել:

## Կանանց

Քրիստոնեայ կնոջ արդուզարդը ոսկուց եւ արծաթից աւելի պէտք է լինի պարկեշտութիւնը, ամօթխածութիւնը եւ պատկառանքը: Օտար ներկերով երեսը ներկելը գայթակղութեան պատճառ է անմիտ երիտասարդների համար: Պոռնկութիւն կատարողը Աստծուց պիտի ժառանգի մոլորեցնող օձի անէծքը: Սատանայական կախարդութեան տրուելը եւ աղանդաւորական բժշկութեանը հետեւելը բացայայտ գործակցութիւն է սատանայի հետ, եւ նման բաներով զբաղուողի հոգին բանսարկուի հետ դատապարտում է գեհենի հրին:

* * *

Այս գիրքը սրբութեան եւ առաքինասէր կեանքի ուղերձ է. նախ՝ հոգեւորականներին՝ որպէս առաջնորդների եւ հովիւների, ապա՝ հաւատացեալ ժողովրդին՝ որպէս արդարութեան շաւիղներով դէպի փրկութիւն ընթացողների: Այն մեզ սովորեցնում է, թէ ի՞նչ է կենդանի հաւատքը, ի՞նչ է սրբութիւնը, ո՞րն է քրիստոնէական կեանքի նպատակը, ինչպէ՞ս պէտք է ապրի քրիստոնեան...

## Զինուորների դասերին

Զինուորականները հաստատարմութեամբ եւ աննենգ նըվիրումով պէտք է ծառայեն իրենց իշխանութիւններին եւ պետութիւններին: Եւ չլինի թէ զինուորութիւնը պատճառ լինի՝ արհամարհելու Աստուծոյ պատուիրանները, խախտելու սուրբ պահքը, յափշտակելու աղքատների ունեցուածքը եւ հեղելու անմեղների արիւնը: Հասարակ ժողովրդից առաւել զինուո՛րը պէտք է վախենայ Աստծուց եւ Նրա պատուիրանները պահի, քանզի ամէն ժամ թշնամիների սրի դէմ է պատերազմում: Հետեւաբար, մարմնական զէնքերից աւելի նա պէտք է սպառազինուի հաւատքի զէնքերով, այսինքն՝ աստուածպաշտութեամբ, սրբութեամբ, պահքով, աղօթքով եւ ողորմութեամբ, որպէսզի պատերազմում Աստուած հալածի նրա թշնամիներին:

## Քաղաքացիներին

Քաղաքացիները, առեւտրականները եւ արհեստաւորները պէտք է ուղիղ եւ անարատ կենցաղավարութեամբ ապրեն, խաբէութիւն եւ նենգութիւն չգործեն, իրենց ունեցուածքից ողորմութիւն տան կարօտեալներին եւ աղքատներին, որպէսզի Դատաստանի Օրը Քրիստոսից առատ վարձատրութիւն ստանան:

## Երկրագործներին եւ համայն ժողովրդին

Շնորհալի Հայրապետը ասում է, որ առաւելապէս երկրագործներն ու հասարակ ժողովուրդը կարիք ունեն բժշկելու իրենց հոգիները, որպէսզի առողջանան մեղքերի հիւանդութիւններից: Այս անցաւոր կեանքի մարմնական հեշտութիւնները մարդուն հեռացնում են երկնքի արքայութեան վայելքից, իսկ պղծալի պոռնկութեամբ եւ շնութեամբ ապականում է հոգու տաճարը: Գինեմոլութիւնը մայր է պոռնըկութեան, ամէն տեսակ պղծութիւնների, անիրաւութեան, վէճի, անարգալից աղտոտ խօսքերի, սպանութեան եւ այլն: Այնուհետեւ նա խրատում է բոլոր հաւատացեալներին իրենց մանուկներին Աստուծոյ երկիւղով սնուցել եւ մանուկ հասակից աստուածասէր, ողորմած եւ աղօթասէր դաստիարակել:



## Կանանց

Քրիստոնեայ կնոջ արդուզարդը ոսկուց եւ արծաթից աւելի պէտք է լինի պարկեշտութիւնը, ամօթխածութիւնը եւ պատկառանքը: Օտար ներկերով երեսը ներկելը գայթակղութեան պատճառ է անմիտ երիտասարդների համար: Պոռնկութիւն կատարողը Աստծուց պիտի ժառանգի մոլորեցնող օձի անէծքը: Սատանայական կախարդութեան տըրւելը եւ աղանդաւորական բժշկութեանը հետեւելը բացայայտ գործակցութիւն է սատանայի հետ, եւ նման բաներով զըրաղուողի հոգին բանսարկուի հետ դատապարտւում է գեհենի հրին:

* * *

Այս գիրքը սրբութեան եւ առաքինասէր կեանքի ուղերձ է. նախ՝ հոգեւորականներին՝ որպէս առաջնորդների եւ հովիւների, ապա՝ հաւատացեալ ժողովրդին՝ որպէս արդարութեան շաւիղներով դէպի փրկութիւն ընթացողների: Այն մեզ սովորեցնում է, թէ ի՞նչ է կենդանի հաւատքը, ի՞նչ է սրբութիւնը, ո՞րն է քրիստոնէական կեանքի նպատակը, ինչպէ՞ս պէտք է ապրի քրիստոնեան...

Սուրբ Ներսէս Շնորհալին իր հոգու աննիրհ ու խորաթափանց աչքերով կարողացել է տեսնել եւ բացայայտել հոգեւոր կեանքի այնպիսի ճշմարտութիւններ, որ շուրջ ութ դար այս գործը իր աննուազ լոյսով լուսաւորում է հայ ժողովրդի զաւակների հոգիները եւ առաջնորդում նրանց դէպի երկնաւոր Հօր օթեւանները. Նրան Իր Միածին Որդու եւ Սուրբ Հոգու հետ փառք յաւիտեանս. ամէն:

**Տէր Մեսրոպ քահանայ Արամեան**

**«Գանձասար» հանդէսի գլխ. խմբագիր**



## ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Ս. Ներսէս Շնորհալու «Թուղթ ընդհանրականի» թարգմանութիւնը կատարուել է «Գանձասար» հանդէսի խմբագրութեան կողմից: Որպէս բնագիր օգտագործել ենք «Թուղթ ընդհանրականի» 1865 թ. Ս. էջմիածնի հրատարակութիւնը: Քննական բնագրի պակասը, անշուշտ, իր ոչ բարերար ազդեցութիւնը թողեց գործի ընթացքի վրայ: Յուսով ենք, որ գրքի հետագայ հրատարակութիւնների ժամանակ այդ պակասն այլեւս չի լինի, եւ մենք կկարողանանք առաւել յղկել ներկայացուող թարգմանութիւնը: Թարգմանելիս ի նկատի ենք ունեցել Անուշաւան վրդ. Դանիէլեանի արեւմտահայերէն թարգմանութիւնը: Աշխատել ենք հնարաւորին չափ հարազատ մնալ բնագրի ոգուն եւ լեզուին. մեր նպատակն է եղել առանց աղաւաղման հնչեցնել սուրբ Հայրապետի խօսքը:

Սուրբ Ներսէս Շնորհալին իր հոգու աչքերով ու խորաթափանց աչքերով կարողացել է տեսնել եւ բացայայտել հոգեւոր կեանքի այնպիսի ճշմարտութիւններ, որ շուրջ ութ դար այս գործը իր աննուազ լոյսով լուսաւորում է հայ ժողովրդի զաւակների հոգիները եւ առաջնորդում նրանց դէպի երկնաւոր Հօր օթեւանները. Նրան Իր Միածին Որդու եւ Սուրբ Հոգու հետ փառք յաւիտեանս. ամէն:

**Տէր Մեսրոպ քահանայ Արամեան**

**«Գանձասար» հանդէսի գլխ. խմբագիր**



# ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Ս. Ներսէս Շնորհալու «Թուղթ ընդհանրականի» թարգմանութիւնը կատարուել է «Գանձասար» հանդէսի խմբագրութեան կողմից: Որպէս բնագիր օգտագործել ենք «Թուղթ ընդհանրականի» 1865 թ. Ս. էջմիածնի հրատարակութիւնը: Քննական բնագրի պակասը, անշուշտ, իր ոչ բարերար ազդեցութիւնը թողեց գործի ընթացքի վրայ: Յուսով ենք, որ գրքի հետագայ հրատարակութիւնների ժամանակ այդ պակասն այլեւս չի լինի, եւ մենք կկարողանանք առաւել յղկել ներկայացուող թարգմանութիւնը: Թարգմանելիս ի նկատի ենք ունեցել Անուշաւան վրդ. Դանիէլեանի արեւմտահայերէն թարգմանութիւնը: Աշխատել ենք հնարաւորին չափ հարազատ մնալ բնագրի ոգուն եւ լեզուին. մեր նպատակն է եղել առանց աղաւաղման հնչեցնել սուրբ Հայրապետի խօսքը:

# ՀԱՅՈՑ ՆԵՐՍԷՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹՈՒՂԹԸ ՀԱՄԱՅՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ, ՈՐԻ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆԸ ՎՍՏԱՀՈՒԵՑ ՆՐԱՆ ՏԻՐՈՋ ԿՈՂՄԻՑ

Ներսէս՝ ծառայ Քրիստոսի եւ Նրա ողորմութեամբ՝ Հայոց կաթողիկոս. հայ ժողովրդի բոլոր հաւատացեալներին՝ արեւելքում՝ մեր Հայաստան աշխարհի մէջ բնակուողներին, արեւմուտքում՝ պանդխտութեամբ թափառողներին, տարբեր երկրներում այլալեզու ազգերի մէջ դեգերողներին, մեր մեղքերի պատճառով աշխարհի բոլոր ծագերում՝ քաղաքներում, դղեակներում, գիւղերում ու ագարակներում, ցրուածներին. Ձեզ բոլորին՝ քահանայապետերին եւ քահանաներին, վանականներին եւ քաղաքաբնակներին, իշխաններին եւ հպատակներին, հեծեալ եւ հետեւակ զինուորների դասերին, գաւառապետերին եւ գործավարներին, տանուտէրերին եւ երկրագործներին, վաճառականներին եւ արհեստաւորներին եւ նրանց, ովքեր սեփական կամքի ընտրութեամբ եւ յօժարութեամբ ընթանում են այս կեանքի զանազան ճանապարհներով, աշխարհիկ կամ գերաշխարհիկ կեանք վարող արանց եւ կանանց, մանուկներին եւ երիտասարդներին, չափահասներին եւ ծերերին. սիրոյ եւ խաղաղութեան ողջոյն թող հասնի աստուածընկալ եւ փրկական սուրբ Նշանից, Հոգու հրեղէն լեզուները ընդունած առաքելական նշխարներից, մեր սուրբ Լուսաւորչի Աջից եւ Աթոռից:

Այս ամենի առաջ աղաչելով պաղատում ենք Աստծուն Ձեր հոգիների փրկութեան համար, որպէսզի բացէք Ձեր մըտքի ականջները՝ ունկնդրելու աստուածային այս խօսքը, որ

# ՀԱՅՈՑ ՆԵՐՍԷՍ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԹՈՒՂԹԸ ՀԱՄԱՅՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ, ՈՐԻ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆԸ ՎՍՏԱՀՈՒԵՑ ՆՐԱՆ ՏԻՐՈՋ ԿՈՂՄԻՑ

Ներսէս՝ ծառայ Քրիստոսի եւ Նրա ողորմութեամբ՝ Հայոց կաթողիկոս. հայ ժողովրդի բոլոր հաւատացեալներին՝ արեւելքում՝ մեր Հայաստան աշխարհի մէջ բնակուողներին, արեւմուտքում՝ պանդխտութեամբ թափառողներին, տարբեր երկրներում այլալեզու ազգերի մէջ դեգերողներին, մեր մեղքերի պատճառով աշխարհի բոլոր ծագերում՝ քաղաքներում, դղեակներում, գիւղերում ու ագարակներում, ցրուածներին. Ձեզ բոլորին՝ քահանայապետերին եւ քահանաներին, վանականներին եւ քաղաքաբնակներին, իշխաններին եւ հպատակներին, հեծեալ եւ հետեւակ զինուորների դասերին, գաւառապետերին եւ գործավարներին, տանուտէրերին եւ երկրագործներին, վաճառականներին եւ արհեստաւորներին եւ նրանց, ովքեր սեփական կամքի ընտրութեամբ եւ յօժարութեամբ ընթանում են այս կեանքի զանազան ճանապարհներով, աշխարհիկ կամ գերաշխարհիկ կեանք վարող արանց եւ կանանց, մանուկներին եւ երիտասարդներին, չափահասներին եւ ծերերին. սիրոյ եւ խաղաղութեան ողջոյն թող հասնի աստուածընկալ եւ փրկական սուրբ Նշանից, Հոգու հրեղէն լեզուները ընդունած առաքելական նշխարներից, մեր սուրբ Լուսաւորչի Աջից եւ Աթոռից:

Այս ամենի առաջ աղաչելով պաղատում ենք Աստծուն Ձեր հոգիների փրկութեան համար, որպէսզի բացէք Ձեր մըտքի ականջները՝ ունկնդրելու աստուածային այս խօսքը, որ

պիտի մատուցենք Ձեզ Աստուծոյ պատուիրաններից, որպէսզի արդարութեան շաւիղներում մեր կողմից առաջնորդուելով՝ Ձեզանից իւրաքանչիւրը արժանի լինի երկնաւոր Հօր տան օթեւաններից մէկը ժառանգելու:

Ես էլ բոլորիցդ հայցում եմ, որ աղօթէք նաեւ մեզ համար, որպէսզի երբ Աստուած կանչի եւ պահանջի մեզանից Ձեզ համար տարած գործունէութեան հաշիւը, կարենանք բարւոք տալ:

Ի գիտութիւն Ձեզ բոլորիդ [յայտնում եմ], որ մեր հոգեւոր հայրն ու մարմնաւոր եղբայրը՝ Գրիգոր սրբազան կաթողիկոսը՝ Հայաստանեայց մեծ Լուսաւորչի աթոռակալն ու արհինակիցը, նաեւ՝ նրա նմանակիցը իր անձի մաքրութեամբ եւ իմաստութեամբ, նա, որ երկար ժամանակ բարւոք հովուեց բանաւոր հօտը, որ Քրիստոս տուեց նրան, ինչպէս Պետրոսին՝ [ասելով]. «Արածեցրո՛ւ Իմ ոչխարներին» [Յովհ. ԻԱ 17], որ, նահապետների պէս տարիքի աւարտին հասնելով, նախքան իր վախճանը, Սուրբ Հոգու ներգործութեամբ կանչեց եպիսկոպոսներին, վարդապետներին եւ սուրբ լերան* հայրերին եւ ուրիշներին՝ այլ կողմերից: Եւ թէպէտ նախապէս, անարժան համարելով մեր անձը, շատ անգամ հրաժարւում էինք այսպիսի հրաւէրից, սակայն այս անգամ ինքն ու եպիսկոպոսների ժողովը, հակառակ մեր կամքի, բռնադատաբար մեր անարժանութեանը [գահակալ] Ձեռնադրեցին Հայկի ազգիս եւ Թորգոմի Տան Կաթողիկոսութեան Աթոռին:

* Ի նկատի ունի Կիլիկիայի Սեւ լեռը, որ միջին դարերում նշանաւոր էր իր վանքերով



Եւ ի վերուստ տրուած պատուէրը կատարելուց յետոյ, երեք ամիս անց, նա կոչմամբ առ Քրիստոս փոխուեց՝ դասուելով հայրերի հետ որպէս հայրապետ, առաքեալների հետ՝ որպէս Տասներկուսի լրացում, արդարութեան համար հալածուածների հետ՝ որպէս հալածանքների ու ճշմարտութեան հակառակորդների զանազան փորձութիւնների մէջ համբերող, փառաւորեալների հետ՝ որպէս կեանքի մէջ Աստծուց եւ մարդկանցից պատուուած: Որի մահն իսկ Տիրոջ առջեւ գերագոյն սուրբերի նման պատուական եղաւ, որոնց մասին ասում է մարգարէն [տե՛ս Սաղմ. ԾԺԵ 15]: Նա, այս աշխարհի ծովի մէջ հաւատքի նաւով, Սուրբ Հոգու մղումով ճշմարտութեամբ եւ առաքինութեամբ ուղիղ նաւելով, անվնաս հասաւ անքոյթ եւ անալիք Նաւահանգիստը եւ մեզ թողեց այս տաժանելի եւ անցաւոր կեանքի մէջ, երեւելի եւ աներեւոյթ օձերի, կարիճների, զանազան գիշատիչ գազանների մէջ եւ ոչ միայն՝ սրանց, այլեւ՝ հոգեւոր եւ մարմնաւոր բեռների ծանրութեան տակ: Այս նեղութիւններից թեթեւանալով՝ նա թռաւ հոգիների կայանը՝ մեր տկար եւ անզօր ուսերին յանձնելով Եկեղեցու ողջ ծանր հոգսը:

Եւ ես այս բոլորի մէջ սարսուռով զարհուրում եմ՝ մտաբերելով Աստուծոյ դատաստանի այն ահն ու երկիւղը, որ Հին եւ Նոր Կտակարաններում ասուած է հովիւների եւ առաջնորդների մասին: Այնքան, որ այս ամենի երկիւղից չարչարուած անձիս ո՛չ աչքերը քուն ունեն, եւ ո՛չ էլ կոպերը՝ նինջ: Քանզի հոգեւոր առաջնորդութեան այս մէկ գործը բաժանւում է բազմաթիւ տիտղոսների եւ զանազան մեծ ու փոքր պաշտօնների՝ կաթողիկոսութիւն եւ հայրապետութիւն, եպիսկոպոսութիւն եւ քահանայութիւն: Եւ նա, ով սրանց մէջ մեծն է, ծայրագոյն բեռների տակ է՝ որպէս բո-

պիտի մատուցենք Ձեզ Աստուծոյ պատուիրաններից, որպէսզի արդարութեան շաւիղներում մեր կողմից առաջնորդուելով՝ Ձեզանից իւրաքանչիւրը արժանի լինի երկնաւոր Հօր տան օթեւաններից մէկը ժառանգելու:

Ես էլ բոլորիցդ հայցում եմ, որ աղօթէք նաեւ մեզ համար, որպէսզի երբ Աստուած կանչի եւ պահանջի մեզանից Ձեզ համար տարած գործունէութեան հաշիւը, կարենանք բարւոք տալ:

Ի գիտութիւն Ձեզ բոլորիդ [յայտնում եմ], որ մեր հոգեւոր հայրն ու մարմնաւոր եղբայրը՝ Գրիգոր սրբազան կաթողիկոսը՝ Հայաստանեայց մեծ Լուսաւորչի աթոռակալն ու արհնակիցը, նաեւ՝ նրա նմանակիցը իր անձի մաքրութեամբ եւ իմաստութեամբ, նա, որ երկար ժամանակ բարւոք հովուեց բանաւոր հօտդ, որ Քրիստոս տուեց նրան, ինչպէս Պետրոսին՝ [ասելով]. «Արածեցրո՛ւ Իմ ոչխարներին» [Յովհ. ԻԱ 17], որ, նահապետների պէս տարիքի աւարտին հասնելով, նախքան իր վախճանը, Սուրբ Հոգու ներգործութեամբ կանչեց եպիսկոպոսներին, վարդապետներին եւ սուրբ լերան* հայրերին եւ ուրիշներին՝ այլ կողմերից: Եւ թէպէտ նախապէս, անարժան համարելով մեր անձը, շատ անգամ հրաժարւում էինք այսպիսի հրաւէրից, սակայն այս անգամ ինքն ու եպիսկոպոսների ժողովը, հակառակ մեր կամքի, բռնադատաբար մեր անարժանութեանը [գահակալ] ձեռնադրեցին Հայկի ազգիս եւ Թորգոմի Տան Կաթողիկոսութեան Աթոռին:

* Ի նկատի ունի Կիլիկիայի Սեւ լեռը, որ միջին դարերում նշանաւոր էր իր վանքերով



Եւ ի վերուստ տրուած պատուէրը կատարելուց յետոյ, երեք ամիս անց, նա կոչմամբ առ Քրիստոս փոխուեց՝ դասուելով հայրերի հետ որպէս հայրապետ, առաքեալների հետ՝ որպէս Տասներկուսի լրացում, արդարութեան համար հալածուածների հետ՝ որպէս հալածանքների ու ճշմարտութեան հակառակորդների զանազան փորձութիւնների մէջ համբերող, փառաւորեալների հետ՝ որպէս կեանքի մէջ Աստծուց եւ մարդկանցից պատուուած: Որի մասին իսկ Տիրոջ առջեւ գերագոյն սուրբերի նման պատուական եղաւ, որոնց մասին ասում է մարգարէն [տե՛ս Սաղմ. ՃԺԵ 15]: Նա, այս աշխարհի ծովի մէջ հաւատքի նաւով, Սուրբ Հոգու մղումով ճշմարտութեամբ եւ առաքինութեամբ ուղիղ նաւելով, անվնաս հասաւ անքոյթ եւ անալիք Նաւահանգիստը եւ մեզ թողեց այս տաժանելի եւ անցաւոր կեանքի մէջ, երեւելի եւ աներեւոյթ օձերի, կարիճների, զանազան գիշատիչ գազանների մէջ եւ ոչ միայն՝ սրանց, այլեւ՝ հոգեւոր եւ մարմնաւոր բեռների ծանրութեան տակ: Այս նեղութիւններից թեթեւանալով՝ նա թռաւ հոգիների կայանը՝ մեր տկար եւ անզօր ուսերին յանձնելով Եկեղեցու ողջ ծանր հօտը:

Եւ ես այս բոլորի մէջ սարսռով զարհուրում եմ՝ մտաբերելով Աստուծոյ դատաստանի այն ահն ու երկիւղը, որ Հին եւ Նոր Կտակարաններում ասուած է հովիւների եւ առաջնորդների մասին: Այնքան, որ այս ամենի երկիւղից չարչարուած անձիս ո՛չ աչքերը քուն ունեն, եւ ո՛չ էլ կոպերը՝ նինջ: Քանզի հոգեւոր առաջնորդութեան այս մէկ գործը բաժանւում է բազմաթիւ տիտղոսների եւ զանազան մեծ ու փոքր պաշտօնների՝ կաթողիկոսութիւն եւ հայրապետութիւն, եպիսկոպոսութիւն եւ քահանայութիւն: Եւ նա, ով սրանց մէջ մեծն է, ծայրագոյն բեռների տակ է՝ որպէս բո-

լորին իր մէջ պարունակող: Սակայն ըստ գործի իւրաքանչիւրի էլ՝ թէ՛ քահանայութեան եւ թէ՛ քահանայապետութեան անունները նոյնն են, քանզի [երկուսն էլ] վերակոչւում են ծնող, դայեակ, վարդապետ, բժիշկ, տեսուչ, հովիւ, առաջնորդ, միջնորդ, դատաւոր եւ այլ բազմաթիւ անուններով, որոնցով կատարւում է աստուածպաշտութեան խորհուրդը, եւ Քրիստոսի Եկեղեցու օրէնքը ամբողջական է մնում:

Արդ, ինչպէ՞ս կարող է մէկը ի ծնէ օտարներին լինել ծնող կամ դայեակ՝ ըստ Պօղոսի, քանզի ասում է. «Որդեակնե՛րս, դուք, որոնց համար վերստին երկունքի մէջ եմ, մինչեւ որ Քրիստոս կերպարանուի ձեր մէջ» [Գաղ. Դ 19] եւ դարձեալ՝ «Ինչպէս մի դայեակ, որ մանուկներ է կերակրում, այնպէս էլ մենք գթացինք ձեզ» [Ա Թես. Բ 7]: Քանզի ծնուածները բնութիւնից սիրում են իրենց ծնողներին, եւ սնուցուածները՝ դայեակներին: Իսկ որոնց նկատմամբ սիրոյ փոխարէն կայ ատելութիւն եւ օտարութիւն, ի՞նչ յոյս՝ այդպիսիներին աստուածային խօսքով վերստին ծնելու՝ ապաշխարութեան կամ հայրօրէն ուսումով եւ Տիրոջ երկիւղով նրանց ուսուցանելու:

Ինչպէ՞ս կարելի է լինել վարդապետ, ուսուցիչ եւ քարոզիչ, Աստուծոյ հրամանով ելնել Սիոնի բարձր լեռը, որը սուրբ Եկեղեցին է, Աւետարանի խօսքը հնչեցնել ու չվախենալ, կամ ինչպէս Պօղոսը Տիմոթէոսին է ասում. «Քարոզի՛ր խօսքը, շարունակ յայտարարի՛ր այն՝ ժամանակին լինի, թէ՝ տարաժամ, յանդիմանի՛ր, սաստի՛ր, յորդորի՛ր» [Բ Տիմ. Դ 2]՝ այնտեղ, ուր աշակերտները ցրուած են եւ ոչ՝ հաւաքուած վարժարանում, եւ որոնք ոչ թէ ճշմարիտ իմաստութիւնն են ցանկանում սովորել, այլ՝ ստութիւն եւ նանրութիւն, չարութեան մէջ կատարեալ են, իսկ բարութեան մէջ՝ անկատար:



Ինչպէ՞ս կարող ենք բժիշկների նմանուել մոլորակամ վիշապի խայթոցներից հիւանդացած հոգիների համար՝ ջանալով նրանց բուժել բնական կամ անբնական ախտերից, երբ հիւանդները ոչ միայն չեն փնտրում հոգեւոր բժիշկների առողջարար արուեստը, այլեւ յանդիմանելիս եւ խրատելիս՝ դառը մաղձերով ապականուած ստամոքսի ցաւերից տառապողների պէս դժկամում են օգտակար դեղերը խմել: Եւ ոչ միայն՝ այս, այլեւ ընդդիմաբանում են, թէ՝ «Բժի՛շկ, նախ ա՛նձդ բժշկիր այդպիսի ցաւերից եւ ապա՛ միայն ինձ մօտեցիր քո յանդիմանական խօսքերով»:

Կամ ինչպէ՞ս կարելի է տարածութեամբ եւ սիրով մեզանից այնքան հեռու եղողներին առաջնորդել՝ ըստ Աստուծոյ հրամանի, որն Եզեկիէլին ասում էր. «Մարդո՛ւ որդի, քեզ տեսուչ կարգեցի Իսրայէլի տան վրայ. եթէ աղաղակով չազդարարես թշնամու դարանակալութիւնն ու ասպատակութիւնը, եւ նրանք սպանուեն կամ գերուեն, նրանց արիւնը քո ձեռքից պիտի պահանջեմ» [տե՛ս Եզեկ. Գ 17—18]: Այս ամենի մէջ միայն որպէս մխիթարութիւն ունենք միւս խօսքը, որ Աստուած ասում է նոյն մարգարէին. «Եթէ քո խօսքը լսեն եւ, անզգոյշ լինելով, կորստեան մատնուեն, դու քո անձը կփրկես, եւ իրենք պարտական կլինեն իրենց արեանը» [տե՛ս Նոյն. 19]:

Եւ ինչպէ՞ս կարող ենք հովուութեան օրէնքը կատարել՝ աստուածային օրէնքների մարգագետինների մէջ հանգըստացնել եւ Հոգու կենդանարար ջրով իմաստութեամբ սնուցանել, գայլերին հալածել եւ վիրաւորներին բժշկել, երբ հովիւն ու հօտը իրարից յոյժ հեռու են:

Ինչպէ՞ս կարող ենք առաջնորդ լինել այնպիսիներին, որոնք չեն կամենում առաջնորդի հետքերով դէպի երկինք

ւորին իր մէջ պարունակող: Սակայն ըստ գործի իւրաքանչիւրի էլ՝ թէ՛ քահանայութեան եւ թէ՛ քահանայապետութեան անունները նոյնն են, քանզի [երկուսն էլ] վերակոչւում են ծնող, դայեակ, վարդապետ, բժիշկ, տեսուչ, հովիւ, առաջնորդ, միջնորդ, դատաւոր եւ այլ բազմաթիւ անուններով, որոնցով կատարւում է աստուածպաշտութեան խորհուրդը, եւ Քրիստոսի Եկեղեցու օրէնքը ամբողջական է մնում:

Արդ, ինչպէ՞ս կարող է մէկը ի ծնէ օտարներին լինել ծնող կամ դայեակ՝ ըստ Պօղոսի, քանզի ասում է. «Որդեակնե՛րս, դուք, որոնց համար վերստին երկունքի մէջ եմ, մինչեւ որ Քրիստոս կերպարանուի ձեր մէջ» [Գաղ. Դ 19] եւ դարձեալ՝ «Ինչպէս մի դայեակ, որ մանուկներ է կերակրում, այնպէս էլ մենք գթացինք ձեզ» [Ա Թես. Բ 7]: Քանզի ծնուածները բնութիւնից սիրում են իրենց ծնողներին, եւ սնուցուածները՝ դայեակներին: Իսկ որոնց նկատմամբ սիրոյ փոխարէն կայ ատելութիւն եւ օտարութիւն, ի՞նչ յոյս՝ այդպիսիներին աստուածային խօսքով վերստին ծնելու՝ ապաշխարութեան կամ հայրօրէն ուսումով եւ Տիրոջ երկիւղով նրանց ուսուցանելու:

Ինչպէ՞ս կարելի է լինել վարդապետ, ուսուցիչ եւ քարոզիչ, Աստուծոյ հրամանով ելնել Սիոնի բարձր լեռը, որը սուրբ Եկեղեցին է, Աւետարանի խօսքը հնչեցնել ու չվախենալ, կամ ինչպէս Պօղոսը Տիմոթէոսին է ասում. «Քարոզի՛ր խօսքը, շարունակ յայտարարի՛ր այն՝ ժամանակին լինի, թէ՝ տարաժամ, յանդիմանի՛ր, սաստի՛ր, յորդորի՛ր» [Բ Տիմ. Դ 2]՝ այնտեղ, ուր աշակերտները ցրուած են եւ ոչ՝ հաւաքուած վարժարանում, եւ որոնք ոչ թէ ճշմարիտ իմաստութիւնն են ցանկանում սովորել, այլ՝ ստութիւն եւ նանրութիւն, չարութեան մէջ կատարեալ են, իսկ բարութեան մէջ՝ անկատար:



Ինչպէ՞ս կարող ենք բժիշկների նմանուել մոլորակամ վիշապի խայթոցներից հիւանդացած հոգիների համար՝ ջանալով նրանց բուժել բնական կամ անբնական ախտերից, երբ հիւանդները ոչ միայն չեն փնտրում հոգեւոր բժիշկների առողջարար արուեստը, այլեւ յանդիմանելիս եւ խրատելիս՝ դառը մաղձերով ապականուած ստամոքսի ցաւերից տառապողների պէս դժկամում են օգտակար դեղերը խմել: Եւ ոչ միայն՝ այս, այլեւ ընդդիմաբանում են, թէ՝ «Բժի՛շկ, նախ ս՛նձդ բժշկիր այդպիսի ցաւերից եւ ապա՛ միայն ինձ մօտեցիր քո յանդիմանական խօսքերով»:

Կամ ինչպէ՞ս կարելի է տարածութեամբ եւ սիրով մեզանից այնքան հեռու եղողներին առաջնորդել՝ ըստ Աստուծոյ հրամանի, որն Եզեկիէլին ասում էր. «Մարդո՛ւ որդի, քեզ տեսուչ կարգեցի Իսրայէլի տան վրայ. եթէ աղաղակով չազդարարես թշնամու դարանակալութիւնն ու ասպատակութիւնը, եւ նրանք սպանուեն կամ գերուեն, նրանց արիւնը քո ձեռքից պիտի պահանջեմ» [տե՛ս Եզեկ. Գ 17–18]: Այս ամենի մէջ միայն որպէս մխիթարութիւն ունենք միւս խօսքը, որ Աստուած ասում է նոյն մարգարէին. «Եթէ քո խօսքը լսեն եւ, անզգոյշ լինելով, կորստեան մատնուեն, դու քո անձը կփրկես, եւ իրենք պարտական կլինեն իրենց արեանը» [տե՛ս Նոյն. 19]:

Եւ ինչպէ՞ս կարող ենք հովւութեան օրէնքը կատարել՝ աստուածային օրէնքների մարգագետինների մէջ հանգըստացնել եւ Հոգու կենդանարար ջրով իմաստութեամբ սնուցանել, գայլերին հալածել եւ վիրաւորներին բժշկել, երբ հովիւն ու հօտը իրարից յոյժ հեռու են:

Ինչպէ՞ս կարող ենք առաջնորդ լինել այնպիսիներին, որոնք չեն կամենում առաջնորդի հետքերով դէպի երկինք

տանող–հասցնող արքունական ճանապարհով ընթանալ, այլ գնում են լայն եւ ընդարձակ պողոտայով, որ դժոխքի յատակն է հասցնում:

Ինչպէ՞ս կարող ենք միջնորդ լինել Աստուծոյ եւ այնպիսի մարդկանց միջեւ, որոնք չեն ցանկանում պահել ուխտը, որ կնքեցին Աստուծոյ հետ՝ մկրտութեամբ հրաժարուելով սատանայից եւ նրա բոլոր գործերից ու պատրանքներից, այլ, դրժելով ուխտը, որը փրկութեան օրը կնքեցին Սուրբ Հոգու հետ, յօժար կամքով, խօսքով ու գործերով չարին են հետեւում:

Ինչպէ՞ս կարող ենք քահանայապետական դատաւորութիւն անել մի այնպիսի ազգի մէջ, որը ոչ միայն աստուածային օրէնքների դատաստանին չի ենթարկւում եւ չի հնազանդւում, այլեւ անիրաւ դատաւոր է դառնում Եկեղեցու դատաւորների վրայ եւ, սեփական աչքում գերան ունենալով հանդերձ, չարաչար բամբասանքներով ու անդուռ բերանով անդադար դատում է նրանց վարքի յանցանքների շիւղերը:

Եւ արդ, քանզի իրականութիւնն այսպիսին է, զարհուրում եւ դողում եմ Աստուծոյ դատաստանի երկիւղից, որ չլինի, թէ՝ Աստծուց ինձ յանձնուած տնտեսութեան այս գործը փառքի փոխարէն անարգանքի պատճառ լինի, խոստացած անթառամ պսակի փոխարէն՝ ամօթահարութեան: Եւ «բարի ու հաւատարիմ ծառայ» լսելու փոխարէն, ինչպէս այն ծառաները, որոնք, գործադրելով տրուած տաղանդները, շահ բերեցին տիրոջը, անշահ ծառայի նման լսեմ ահաւոր ու սարսափելի հրամանը, թէ՝ «Չա՛ր եւ վա՛տ ծառայ, պէտք է խօսքիս արծաթը սեղանաւորներին տայիր», այսինքն՝ «մարդկանց հոգիներին», «եւ ես գալով տոկոսով պահանջէի իմը», այսինքն՝ քեզանից լսած խօսքի հետ նաեւ



լսողների կողմից գործերի կատարումը: Եւ «քանզի ծառայակիցներիդ չտուեցիր հոգիների կերակուրը, երբ լսելու ժամանակն էր, ուստի ասում եմ՝ վերցրէ՛ք դրանից շնորհներիս արծաթը եւ տուէք նրա՛ն, ով կատարելապէս խօսքս աճեցրեց ըստ տասը քանքարների կատարեալ թուի. եւ դրածս գործի ծառայութեան մէջ անպիտան գտնուած այդ ծառային արտաքին խաւա՛րը հանէք» [տե՛ս Մատթ. ԻԵ 21–30]:

Տարակուսում եմ, թէ ի՞նչ պէտք է անեմ, որպէսզի իմ անձն ազատուի այս ահագնալուր սպառնալիքներից: Քանզի մեր ժամանակների չարութեան եւ բազմիշխանութեան պատճառով անկարելի է շրջել ամէնուրեք՝ աշխարհի բոլոր կողմերը, եւ սուրբ առաքեալների նման Աստուծոյ խօսքը քարոզել: Թագաւորանիստ քաղաք եւ հանրաժողով էլ չունի մեր ազգը, որպէսզի, այնտեղ հայրապետական եւ վարդապետական Աթոռին նստելով, ըստ առաջին հայրապետների եւ վարդապետների՝ աստուածային պատուիրանները սովորեցնէինք մեր ժողովրդին: Այլ որսորդներից ու շներից հալածուած այծեամի նման բնակութիւն ենք հաստատել այս քարանձաւում եւ գիւղ կամ ագարակ էլ չունենք, որ կենցաղային անհրաժեշտ կարիքները բաւարարէինք: Նոյնիսկ մի արտ էլ չունենք, որ վաստակով եւ աշխատանքով մեր պէտքերը հոգայինք, եւ ոչ էլ որեւէ տեղից օգնութիւն ենք ստանում, ինչպէս ակնկալում էինք Քրիստոսին հաւատացող թագաւորներից եւ իշխաններից, այլ՝ միայն Տէր Աստծուց, ինչպէս մարգարէն է խրատում՝ ասելով. «Գցի՛ր հոգսդ Տիրոջ վրայ, եւ Նա կկերակրի քեզ» [Սաղմ. ԾԴ 23]. եւ դարձեալ՝ «Ո՞վ յուսաց Տիրոջը եւ ամօթով մնաց» [տե՛ս Սաղմ. ԻԴ 20]:

Այսպիսի վիճակում անգամ Աստուծոյ դատաստանի սպառնալիքները աններող են ծոյլ ու հեղգ հովիւների հանդէպ, որոնք չեն արածեցնում Քրիստոսի բանաւոր հօտը Նրա աստուածեղէն վարդապետութեան մէջ եւ չեն խմեցնում Աստուծոյ իմաստութեան կենդանի ջուրը:

Եւ քանի որ իմ նուաստութեանս վիճակուեց այս հոգեւոր տնտեսութիւնը, որի համար ոչ ոգու արթնութիւն ունեմ, ոչ՝ մարմնի զօրութիւն եւ ոչ էլ, ըստ վերը նկարագրածի՝ բարու ակնկալման ժամանակ, այդ իսկ պատճառով չգիտեմ, թէ ինչ անել: Թողնել—լքելը Հովուապետի հօտը հովուութեան խնամքից եւ գառնուկների՝ գայլերի կողմից յափշտակուելը տեսնելը եւ անտեսելը անհաւատութեան նշան է, մանաւանդ՝ Աստուծոյ խօսքը իմացողի եւ ոչ տգէտի համար, քանզի, ըստ Տէրունական հրամանի՝ եթէ մէկը տգիտութեամբ անպատշաճ բաներ գործի, քիչ կգանակոծուի, իսկ երբ գիտութեամբ՝ սաստիկ ու շատ [տե՛ս Ղուկ. ԺԲ 47]: Թէպէտ եւ հիմա չկայ մէկը, որ տգէտ լինի բարու եւ չարի ընտրութեան մէջ, մարդը կամովին է տգիտանում: Իսկ փութալ խրատելու եւ ուսուցանելու՝ ըստ մեր աստիճանի գործի հարկաւորութեան, եւ Աստուծոյ խօսքի կաթով մշտապէս սնուցելու ի Քրիստոս մանկացածների հոգիները՝ հնարաւոր չէ անձամբ կատարել ներկայ ժամանակի եւ տեղի դժուարութեան պատճառով: Սակայն որպէսզի բոլորովին անպտուղ չլինենք ձեր առջեւ, Սուրբ Հոգուց մեզ վստահուած հաւատացեա՛լ ժողովուրդ, մենք եւ մեզ հետ եղած եպիսկոպոսներն ու վարդապետները արդար դատեցինք՝ գրով յիշեցնելու ձեզ Հին եւ Նոր Կտակարանների աստուածային պատուիրանները՝ այս բանում նմանուելով մեծ առաքեալ Պօղոսին, որը, ոչ միայն օտար երկրներ շրջե-



լով, ինչպէս ինքն էր ասում՝ Երուսաղէմից մինչեւ Լիւրիկէ, Աւետարանն էր քարոզում [տե՛ս Հռոմ. ԺԵ 19], այլեւ, կապանքների մէջ լինելով, նամակներով հաստատում էր իր աշակերտներին, որը ցոյց է տալիս՝ գրելով. «Աղաչում եմ ձեզ ես՝ բանտարկուածս ի Տէր, որ արժանաւորապէս ընթանաք այն կոչման մէջ, որին կոչուեցիք» [Եփես. Դ 1]:

Նրա պէս մենք էլ, այս տօթ քարանձաւում՝ իբրեւ կամաւոր բանտում եւ կապանքներում, փակուած, խօսքի փոխարէն մեր գրածով ենք խօսում բոլոր նրանց հետ, ովքեր լսելու ականջ ունեն: Ձեր լսողութեանն ենք երկրորդում ոչ թէ մեր խօսքը, այլ՝ առաքեալների, մարգարէների եւ Եկեղեցու վարդապետների խօսքերի զօրութիւնը: Եթէ դրանք լսելով յօժարութեամբ ձեր մտքի մէջ պահէք, ինչպէս բարի եւ պարարտ հողը՝ սերմացուն, եւ գործելով պտղաբերէք Աստծուն, թէ՛ ձեր փրկութեան եւ թէ՛ մեր վարձատրութեան պատճառ կլինէք: Իսկ եթէ մէկը յօժարութեամբ չլսի, այլ արհամարհի այն որպէս Աստուծոյ դէմ ապստամբող, կամ թէ լսելով հանդերձ գործով արդարութիւն չպտղաբերի, այլ անզեղջ հոգով, անզգամ սրտով եւ անյուսութեամբ մինչեւ վերջ անդարձ մնայ մեղքի մէջ, Աստուծոյ եւ Իր բոլոր հրեշտակների եւ ձեր՝ բոլոր լսողների վկայութեամբ՝ Քրիստոսի առջեւ մենք անհատոյց կլինենք նրա արեան համար, քանզի չխորշեցինք եւ ոչ էլ դադարեցինք նրան Աստուծոյ խօսքը պատմելուց:

Արդ, ինչպէս որ մարմնի անդամներից ամենապատուականն ու առաջինը գլուխն է՝ իր բարձրութեան եւ զգայարաններն իր մէջ ունենալու պատճառով, եւ ապա՝ կարգով միւս անդամները, այնպէս էլ հոգու անդամների մէջ որպէս գլուխ մեծը եւ առաջինը հաւատքի ճշմարտութիւնն է, եւ

նրան են կապուած, ինչպէս մարմինը՝ գլխին, արդարութեան մեծ եւ փոքր գործերը՝ ըստ Քրիստոս Աստուծոյ պատուիրանների: Ուստի մենք նոյնպէս ամենից առաջ սկսում ենք բոլոր բարիքների գլխից՝ հաւատքից, եւ այն լսողներիդ ենք ներկայացնում՝ ոչ թէ նոր բան աւելացնելով, այլ՝ առաքեալների, մարգարէների եւ սուրբ հայրերի հիմքի վրայ համառօտ խօսքով կառուցելով, որպէսզի որեւէ մէկը չշեղուի ճշմարտութիւնից՝ անուս տգէտների խօսքերը լսելով, որոնք ոչ թէ ուղղափառ Եկեղեցու դաւանութեան համաձայն են, այլ Աստուածաշունչից դուրս բաներ են եւ դէպի կործանում են առաջնորդում լսողներին: Այլ որպէսզի Պօղոսի նման, որ ասում էր. «Գիտեմ, թէ Ում եմ հաւատացել» [Բ Տիմ. Ա 12], գիտենաք, թէ Ում հաւատացիք մկրտութեան օրը, կամ թէ ուղղափառ քրիստոնեան ինչպէս պէտք է դաւանի հաւատքը: Ուստի եւ սկսում ենք պարզ եւ յստակ խօսքերով ցոյց տալ հաւատքի ճշմարիտ դաւանութիւնը:

Հարկ է եւ պատշաճ, որ Քրիստոսին երկրպագողները եւ Սուրբ Երրորդութեան անունով մկրտուածները խոստովանեն համագոյ Երեք Անձնաւորութիւններին՝ Հօրը եւ Որդուն եւ Սուրբ Հոգուն՝ որպէս Մի Բնութիւն, Մի Աստուածութիւն եւ Մի Իշխանութիւն՝ համապատիւ եւ զուգափառ: Որը ոչ թէ ուրիշից ստեղծուած կամ յետոյ սկսած, ոչ էլ ցածրութիւնից՝ բարձրութեան կամ տկարութիւնից զօրութեան հասած, այլ բոլոր յաւիտեաններից* առաջ էր, այժմ է եւ կլինի անվախճան յաւիտեաններում: Անեղ եւ

* յաւիտեան— աստուածաբանական եզր է, որը ոչ միայն ունի դար, դարաշրջան իմաստը, այլեւ նշանակում է յաւիտենականութիւն պարունակող էակ, գոյաւոր. այսպէս օրինակ՝ յաւիտեաններ են հրեշտակները, մարդիկ եւ այլն:



անմահ էութիւն է՝ բնութեամբ աներեւոյթ, սակայն արարածների համար՝ երեւացող, ամէն ինչ տեսնող եւ ամենքից անտես:

Հայրը անսկիզբ է եւ անծին: Որդին ծնուած է Հօր բնութիւնից, սակայն՝ անժամանակ՝ ոչ թէ ըստ մարդկային ախտաւոր ու անցաւոր ծնունդի, որը մտքով իսկ անցկացնելը հայհոյութիւն է, ուր մնաց թէ՝ խօսքով բարբառել: Այլ ինչպէս լոյսը լոյսից է [առաջանում], եւ կրակը՝ կրակից, եւ բաժանուելով չեն օտարանում միմեանցից, այլ մի են կրակի եւ լոյսի, ծնածի եւ ծնողի ճառագայթն ու ջերմութիւնը, եւ երկուսի բնութիւնն էլ մի է, թէեւ անձով զանազանւում են իրարից:

Նոյնպէս էլ լոյս Որդին լոյս Հօրից է առաջ եկել ծնընդեամբ, եւ Որդու աստուածութեան կրակը՝ Հօր աստուածութեան կրակից. տարբեր չեն, այլ մի եւ նոյն են բնութեամբ:

Իսկ Որդու ծննդեան օրինակը ոչ այլ ինչ է, եթէ ոչ՝ խօսքի ծնունդը մարդկային մտքից, թէեւ այս օրինակը եւս ամբողջութեամբ չի համապատասխանում ճշմարտութեանը: Այս պատճառով էլ ասւում է Բան՝ ծնունդի անապական լինելու համար, իսկ Որդի՝ քանզի Հօր բնութիւնից է եւ ոչ՝ նրանից օտար կամ արարած՝ ըստ Արիոսի հայհոյութեան:

Եւ անիմանալին իմանալու միակ միջոցը ոչ թէ անքննելին քննելն է, այլ՝ հաւատալը Սուրբ Գրքում ասուածներին, որոնք հաստատում են, որ աստուածային ծնունդը անհասանելի է մտքին եւ խօսքով՝ անճառելի:

Նոյնպէս եւ Սուրբ Հոգին, ասւում է բխում Հօրից եւ փառակից՝ Որդուն, կատարեալ Աստուած՝ որպէս Հայրը եւ Որդին: Երեք Անձնաւորութիւնները մի կամք ունեն, մի զօ-

րութիւն եւ մի արարչութիւն: Հայրը կամեցաւ ստեղծել երեւելի եւ աներեւոյթ արարածները, Որդին անգոյից գոյացրեց, եւ Սուրբ Հոգին նրանց իմաստութեամբ զարդարեց:

Եւ նոյն Ինքը՝ Աստուծոյ Բանն է, որ մարդուն Իր պատկերով ստեղծեց եւ յանցանքից յետոյ երեւաց նրան եւ բոլոր առաջին արդարներին՝ Նոյին եւ Աբրահամին, Իսահակին եւ Յակոբին, Յոբին եւ Մովսէսին, Ահարոնին, Յեսուին եւ այլ մարգարէների, եւ խօսեց նրանց հետ, վերջին ժամանակներում Գաբրիէլ հրեշտակապետի աւետիսով իջաւ Կոյս Մարիամի որովայնը եւ, նրա բնութիւնից մարմին, հոգի եւ միտք առնելով, նոր եւ անճառելի միաւորութեամբ Իր Աստուածութեանը միացրեց եւ, մանուկի պէս ինն ամիս որովայնի մէջ աճելով, ծնուեց որպէս կատարեալ Աստուած եւ Մարդ՝ անշփոթ էութեամբ եւ անբաժանելի միաւորութեամբ. մի Քրիստոս եւ մի անձնաւորութիւն՝ միացեալ երկու բնութիւններից:

Կաթնասուն եղաւ որպէս մարդ եւ հրեշտակներից փառաւորուեց որպէս Աստուած: Ամէն ինչի կատարիչը աշխարհի վրայ շրջեց երեսուն տարի մինչեւ մարդկային կատարեալ հասակին հասնելը, որպէս մարդ մկրտուեց ծառայից եւ Հօրից ու Սուրբ Հոգուց վկայուեց որպէս Բարձրեալի Որդի: Որպէս մարդ փորձուեց սատանայից եւ որպէս Աստուած յաղթեց փորձողին: Քաղցեց, ծարաւեց, ննջեց, արտասուեց եւ յոգնեց որպէս մարդ՝ մարմնի օրէնքներին ենթարկուելով: Կատարեց նշաններ եւ հրաշքներ եւ ցոյց տուեց աստուածային զօրութիւնը՝ որպէս կատարեալ Աստուած:

Կամովին չարչարուելու եկաւ, եւ անչարչարելին մեր չարչարելի բնութեամբ չարչարուեց Խաչի վրայ, մահուանն



անպարտականը մեռաւ մեր մահկանացու մարմնով՝ կենդանացնելու մեր մեղքերով մեռած բնութիւնը: Աստուածութեանը միացած մարդկային Իր հոգով գերեզման իջաւ եւ կրկնակի աւերեց դժոխքը՝ դժոխքում գտնուողներին ազատութիւն շնորհելով, իսկ աստուածային մարմնի յարութեամբ՝ մեր մահկանացու բնութեանը տալով մահուան ապականութիւնից յարութիւն առնելու յոյսը: Երրորդ օրը իշխանաբար յարութիւն առաւ մեռեալներից եւ երեւաց Իր աշակերտներից տասներկուսին, եօթանասունին, հինգ հարիւրին եւ այլ շատերին, որոնք Իր վկաներն ու քարոզողներն եղան աշխարհում: Եւ քառասուն օրերի ընթացքում երեւալով խօսում էր նրանց հետ:

Եւ քառասուներորդ օրը երկինք բարձրացաւ եւ բարձունքներում մեր բնութեամբ նստեց Հօր աջ կողմը, որից անբաժանելի էր Իր Աստուածութեամբ եւ պիտի գայ նոյն մարմնով, Հօր եւ Իր Աստուածութեան փառքով՝ մեռեալներին յարութիւն տալու եւ աշխարհը արդարութեամբ դատելու համար՝ բարեգործներին տալով բարիքների ժառանգութիւնը եւ անվախճան թագաւորութիւնը, իսկ չարագործներին՝ իրենց գործածի համեմատ յաւիտենական ամօթը եւ տանջանքը:

Եւ արդ, հաւատքի այս ճշմարիտ դաւանութիւնը մեր միջի աստուածային տաճարի հիմքն է: Իսկ բարի գործերը այս հիմքի վրայ բարձրացած շինուածքն են, ինչպէս որ Տէրը Պետրոսի դաւանութիւնը հաստատեց որպէս վէմ՝ Իր Եկեղեցու իմանալի հիմք եւ Իրեն՝ որպէս շինողի եւ բոլոր ազգերից իր ընտրեալների կատարած բարեգործութիւնները՝ որպէս շինանիւթ՝ քարի, փայտի եւ այլ պէտքերի փոխարէն:

Դարձեալ՝ Նա որպէս ճարտարապետ է, եւ մենք՝ իրա- մանակատար մշակներ, ինչպէս որ ասաց Իր աշակերտնե- րին. «Առանց Ինձ ոչինչ անել չէք կարող» [Յովհ. ԺԵ 5]: Պօղոսը եւս գրում է. «Ես Աստուծոյ իմաստութիւնը որպէս հիմք դրեցի, որ է Քրիստոս եւ Նրա ճշմարիտ հաւատքը» [տե՛ս Ա Կորնթ. Գ 10–11]: Բայց այլ է շինողը, այսինքն՝ նա, որ կայ եւ որ աշխարհ պիտի գայ, իսկ շինելը գործե- րով է, որ կամենում է իւրաքանչիւր ոք՝ լինի չար, թէ՝ բարի:

«Եթէ մէկն այս հիմքի վրայ շինի ոսկով»,– ասում է առաքեալը [Նոյն 12], որն արդարութիւնն ու ճշմարտու- թիւնն է, «արծաթով», որը մտքի մաքրութիւնն ու սրտի սրբ- բութիւնն է, «թանկարժէք քարերով», որոնք բազմապատիկ առաքինութիւնների տեսակներն են՝ սէր, խոնարհութիւն, ողորմածութիւն, անոխակալութիւն, պահք, աղօթք, ժուժկա- լութիւն. սրանք եւ սրանց նմանները արդար հոգիների կող- մից հաւատքի հիմքի վրայ դրուած թանկարժէք քարերն են:

Իսկ մեղսասէրների հոգիները, [առաքեալն] ասում է, իրենց շէնքը հաւատքի հիմքի վրայ շինում են ոչ թէ թան- կարժէք եւ հաստատուն այս նիւթերով, այլ՝ անարգ եւ դիւ- րին փչացող նիւթերով, այսինքն՝ փայտով, խոտով եւ եղէգով: Փայտը նշան է թանձրագոյն մեղքերի՝ սպանու- թեան, պոռնկութեան, գողութեան, յափշտակութեան եւ սր- րանց նման այլ բաների, խոտը՝ սրտում հաւաքուած չար խորհուրդների, եւ եղէգը՝ գարշ խօսքերի, որոնք մարդիկ իրենց բերանից թափում են՝ լեզուն սատանայի գործիք դարձնելով, ընկերոջը թշնամութիւն անելով եւ անարգելով զանազան ու պէս–պէս հայհոյանքներով, որոնք գեղջկա- կան բարբառով յիշոց են կոչւում, իսկ Սուրբ Գրոց մէջ՝ անէծք, թշնամանք եւ նման անուանումներ, որոնց մասին Դաւիթն ասում է, թէ՝ «Անէծքներով, դառնութեամբ եւ նեն- գութեամբ լի է նրա բերանը» [Սաղմ. Թ 7]: Եղէգի են նմանւում նաեւ սուտը, չարախօսութիւնը, մատնութիւնը եւ այլ սրանց նման անիրաւ խօսքեր:

Այս երկու հակառակ՝ թանկարժէք եւ անարգ շինանիւ- թերը, [առաքեալն] ասում է , հուրը պէտք է ընտրի, քանզի հրով պիտի յայտնուի Դատաւորը: Եթէ հաւատքի հիմքի վրայ շինուած գործը ոսկի է, արծաթ եւ թանկարժէք քա- րեր, որոնք չեն փչանում, այլ՝ սրբւում հրից, գործողը պիտի ապրի եւ վարձատրուի: Իսկ եթէ գործը խոտ է, եղէգ եւ փայտ, որոնք հեշտօրէն փչանում են նոյն կրակից, այն գործողը պիտի տուժի: Որովհետեւ ինչպէս ապարանքը մի- այն հիմքով չի կարող մարդկանց բնակութեան համար բա- ւական լինել, այլ կարիք ունի պատերի, ձեղունների եւ այլ շինութիւնների, նմանապէս էլ՝ միայն հաւատքով, առանց գործերի ոչ ոք չի կարող իր անձը Աստուծոյ տաճար դարձնել:

Եւ ինչպէս գլուխն, առանց մարմնի հետ կապուելու, չի կարող կենդանի մնալ, ոչ էլ մարմինն՝ առանց գլխի, նմա- նապէս՝ հաւատքն առանց գործերի եւ գործերն առանց հա- ւատքի՝ երկուսն էլ մեռած են՝ ըստ առաքեալի [տե՛ս Յակ. Բ 17]: Ուստի աղաչում եմ բոլորիդ, որ արդարութեան գոր- ծերն էլ միացնէք ձեր ճշմարիտ հաւատքին, որն Աւազանի ծնունդից ստացաք եւ հաստատութեամբ պահում էք, որ- պէսզի միայն մէկ աչքով չլուսաւորէք ձեր հոգիները, այլ երկուսով պայծառանաք: Եւ մի՛ վստահէք անմիտների սնո- տի յոյսին, որոնք ասում են, թէ միայն հաւատքի ճշմար- տութիւնը բաւական է՝ քրիստոնեային փրկելու տանջանքներից եւ արժանի անելու արքայութեանը: Քանզի

ինչպես մեռած անդամները մարմնի գործունէութեանը ոչընչով պիտանի չեն, այնպես էլ մեռած հաւատքը հոգուն զօրութիւն չի տալիս, այլ մանաւանդ՝ այն ունեցողին աւելի մեծ տանջանքների է պարտաւորեցնում՝ նման նրան, որ մէկ տաղանդը պահեց եւ ընկերների պէս չշահեց [տե՛ս Մատթ. ԻԵ 18], քանզի տաղանդը հաւատքն է, եւ տաղանդների շահը՝ գործերը:

Իսկ թէ ինչո՞ւ է առանց գործի հաւատքը մեռած աստւում, յայտնենք նրանց, ովքեր չգիտեն:

Հաւատքն ունի մէկ անուն, բայց՝ երկու զօրութիւն: Առաջինը դաւանութեան հաւատքն է՝ Սուրբ Երրորդութեան խոստովանութիւնը, որ իւրաքանչիւր անձ Աւազանից ստացաւ: Երկրորդն այն հաւատքն է, որ Սուրբ Գրքում գրուած խօսքերը, որոնք Սուրբ Հոգին խօսեց մարգարէների, առաքեալների եւ Եկեղեցու վարդապետների բերանով, սուտ եւ առասպել չի համարում, այլ հաւատում է, որ ճշմարիտ եւ ուղիղ են, որպէս թէ իր աչքերով է տեսնում այն բոլորն, ինչ եղել է, պիտի լինի եւ որ է: Եղածը այն է, որ պատմում են, թէ բոլոր երեւելի եւ աներեւոյթ բնութիւնները գոյութիւն չունէին եւ Աստուծոյ հրամանով ստեղծուեցին, նաեւ՝ արարածների ստեղծումից յետոյ Աստուծոյ կատարած սքանչելիքներն ու հրաշքները, որոնց մասին պատմւում են Հին եւ Նոր Կտակարաններում: Լինելիքն այն է, որ ասում են, թէ Աստուծոյ կողմից բարեգործներին վարձատրութիւն կտրուի, իսկ չարագործներին՝ տանջանք ու յաւիտենական հուր: Իսկ է–ն այն է, որ իրենց բոլոր խօսքերի մէջ քարոզում են, թէ Աստուած մօտ է բոլորին եւ ոչ՝ հեռու եւ գիտի մարդկանց բոլոր բարի եւ չար խորհուրդները, անսխալ կերպով լսում է, ինչ որ խօսւում է լեզուով եւ յայտնապէս



տեսնում այն, ինչ ծածուկ գործում են մարմնով, քանզի չկայ մի արարած, որ անտեսանելի լինի Նրան:

Արդ, ամբողջ սրտով այս բոլորին հաւատացողն է, որ ունի կենդանի հաւատք. որ երբեք չի յանդգնում սրտում չարութիւն խորհել կամ բերանով անիրաւութիւն խօսել կամ հոգով մեղք գործել: Քանզի եթէ մէկ ուրիշի ներկայութեամբ մարդիկ զգուշանում են անարժան գործ կատարելուց, ապա նա, ով հաւատում է, թէ Աստուած տեսնում է, ինչպէ՞ս կյանդգնի յամառօրէն չար բան խօսել կամ գործել: Իսկ նա, ով խօսքով է միայն Աստուած խոստովանում, բայց գործով՝ ոչ, նման մարդու հաւատքը մեռած է համարւում:

Եւ արդ, քանզի այս սուրբ Աթոռի ծառայութեան գործում Տիրոջ կողմից մեզ վստահուած առաջնորդական բազմատեսակ գործերի կողքին կայ եւ բժշկի պաշտօն ու գործ, ուստի ինչպէս բժիշկն է, հիւանդների ախտարար ցաւերի պատճառները ճանաչելով, հրամայում հրաժարուել վնասակար բաներից եւ առողջարար դեղեր ու կերակուր ընդունել, այնպէս էլ մենք, Քրիստոսի Ընդհանրական Եկեղեցու հոգեւոր բժշկութեամբ մտահոգ, մտքի աչքով տեսնում ենք, որ թէեւ ոչ բոլորի, սակայն աշխարհի մեծագոյն մասի մօտ իր մեռելոտի գործերի պատճառով նաեւ մեռած է հաւատքը: Եւ որպէս բժիշկ ցանկանում ենք ցոյց տալ բոլորին իրենց մահաբեր ախտերի պատճառներն ու հոգիները կենդանացնող դեղերը: Եթէ դրանք վերցնէք եւ առանց դժկամութեան խմէք եւ խոստովանութեամբ ու ապաշխարութեամբ ձեր հոգիներից թօթափէք ապականող մաղձերի դառնութիւնը, արժանի կլինէք Աստուծոյ ողորմութեանն ու Նրա խոստացած բարութեանը: Իսկ նրանց, ում ախորժելի չեն մեր

ասածները՝ կա՛մ ծուլութեան եւ մեղսասիրութեան եւ կա՛մ մեզ արհամարհելու պատճառով, այնպիսիներին մարգարէի խօսքն ենք ասում. «Ով անօրինանալու է, թող անօրինանայ, եւ ով արդարանալու է, թող արդարանայ» [տե՛ս Դան. ԺԲ 10 եւ Յայտ. ԻԲ 11]: Մենք մեզ հրամայուածը որպէս տեսուչ կատարենք բարձր դիտանոցից՝ ձեր ականջներին հնչեցնելով Աստուծոյ պատուիրանները: Այնուհետեւ անելը կամ չանելը իւրաքանչիւրի անձի կամքն է:

Բայց ոչ ոք թող չմտածի, թէ մենք, մեզ մեղքի ախտերից ազատ համարելով, բժշկական այս դեղը ձեզ ենք մատուցում որպէս հիւանդների, այլ ամէն ոք թող գիտենայ, որ մենք ամենքից աւելի կարիք ունենք հոգու բժշկութեան: Բայց եթէ յիմար հիւանդը մերժում է իր առողջութեան դեղը, որ մատուցում է իրեն մի հիւանդ բժիշկ՝ տեսնելով նրա մարմնի ցաւերը, ապա իմաստուն մարդը չի հետաքրքրւում բժշկի բնութեամբ՝ առո՞ղջ է, թէ՝ հիւանդ, այլ քննում է դեղի օգտակարութիւնը՝ առողջարա՞ր է, թէ՝ վնասակար:

Արդ, դուք էլ մեր անարժանութեան եւ հոգեւոր պարտականութիւնների թերութիւնների պատճառով մի՛ արհամարհէք եւ ընդունէ՛ք ձեր անձերում հոգիների օգտակար դեղը, որը ձեզ ենք մատուցում: Աղաչում եմ, ընդունեցէ՛ք այն սիրով եւ յօժարութեամբ՝ ոչ թէ մեր փառքի եւ պատուի համար, որը ոչ ոքից չենք պահանջում, թէեւ արժանի լինէինք, այլ՝ յանուն Քրիստոսի սիրոյ, որ մեզ կանչեց դէպի Իր արքայութիւնը եւ փառքը: Քանզի թէեւ մենք անարժան ենք, սակայն մեր խօսքը քանի որ աստուածային է, արժանի է ընդունելու: Եւ ընդունելն ուրիշ բան չէ, եթէ ոչ՝ գործով կատարելը:



Ուստի աղօթենք միմեանց համար. մենք՝ ձեզ համար, ինչպէս գլուխը՝ մարմնի, որպէսզի մտադիւրութեամբ ընդունէք աստուածային այս խօսքի սերմը ձեր սրտերում եւ Աստծուն պտղաբերէք բարի եւ պարարտ հողի երեքից որեւէ մէկ պտղաբերութեամբ [տե՛ս Մատթ. ԺԳ 24—30], իսկ դուք էլ՝ մեզ համար, ինչպէս մարմինը՝ գլխի՝ առողջանալու հոգեւոր հիւանդութիւններից եւ զօրանալու զգայութիւնների տկարութիւնից: Որպէսզի եթէ տեսողութիւնը կուրացնող գերան ունենանք մեր աչքում, նախ այն հեռացնենք, որպէսզի կարենանք ուրիշների աչքի շիւղը տեսնել եւ մաքրել: Եւ բացենք խցանուած ականջները՝ աստուածային ձայնի հնչման ճանապարհը բռնելու, հոտոտելիքները՝ հեղուած անմահութեան Իւղի բոյրով անուշանալու, ճաշակելիքները՝ Կենաց Հացի համար քաղցելու եւ ծարաւելու, անյագօրէն յագենալու արդարութեամբ եւ իմաստութեամբ, եւ լեզուները, որ Աստուծոյ փառքի եւ Նրա խօսքը լսողների համար են՝ Տիրոջ հրամանով նախ՝ անձին, ապա՝ ուրիշներին սպասաւոր լինելու համար՝ աղ լինելով նեխածներին եւ լոյս՝ խաւարածներին: Դրա համար էլ զանազան ձեւերով երկուսն էլ ներկայացնում ենք լսողներին. հոգով պայծառացածներին՝ լուսափայլ խօսքի ճառագայթը, եւ մթագնածներին կամ նեխածներին՝ աղի օրինակով յանդիմանող մորմոքը: Ուստի եւ այժմ սկսում ենք արժանիներին նախակարգել մեր խօսքը:

# ՎԱՆՔԵՐԻ ԽԱՐԱԶՆԱԶԳԵՍՏ ԿՐՕՆԱՒՈՐՆԵՐԻՆ

Եւ արդ, առաջինը խօսենք վարքով եւ կենցաղավարութեամբ գերաշխարհիկներիդ՝ կրօնաւորներիդ հետ, որ վանքերում եւ մենաստաններում էք բնակւում: Ձեր աղօթքներով եւ բարի վարքով սիւներն էք աշխարհի եւ պարիսպ՝ թշնամու դէմ, հրեշտակներ՝ մարմնի մէջ եւ լուսատու աստղեր՝ երկրի վրայ, եւ ձեր բարի ու լուսաւոր վարքով միշտ փառաւորւում է ձեր Հայրը, որը երկնքում է: Թէպէտ եւ խրատուել էք Աստուածաշնչով՝ միշտ ձեր ականջներին հնչեցնելով, եւ մեր չնչին խօսքերի կարիքը չունէք, սակայն ինչպէս տիրոջ հրամանով ծառաները հասարակաց ճաշը բաժանում են ոչ միայն քաղցածներին, այլեւ շնորհում յագեցածներին, նմանապէս էլ մենք պարտաւոր ենք, ըստ Տիրոջ հրամանի, հաւասարապէս խօսքի կերակուր մատուցել մեր ընդհանուր ծառայակիցներին՝ թէ՛ գիտութեամբ փարթամներին եւ թէ՛ գիտութեամբ աղքատներին, թէ՛ առաքինութեամբ զօրաւորներին եւ թէ՛ առաքինութեամբ տկարներին:

Ուստի աղաչում եմ բոլորիդ՝ մի՛ աղօտացրէք ձեր հաւատքի լապտերների լոյսը՝ ողորմութեան ու սրբութեան իւղը նուազեցնելով, այլ մշտավառ առաքինութեամբ անշէ՛ջ պահեցէք ձեր հոգիներում Աստուածութեան ճառագայթները:

Նիւթական սիրոյ պատճառով մի՛ սառեցրէք ձեր հոգիները Քրիստոսի սիրոյ հրից, որ գցեց երկիր եւ նրա շուտափոյթ բորբոքումն է ցանկանում [տե՛ս Ղուկ. ԺԲ 49]: Օտար կրակի ցանկութեանը տեղի մի՛ տուէք ձեր սրտերում՝ նրանով խնկարկելով Աստծուն աստուածային պատարագի աղօթքներն ու խորհուրդը [մատուցելիս], ինչպէս Ահարոնի որդիները՝ Նաբաթն ու Աբիուդը, արեցին [տե՛ս Թիւք. Գ 4]: Այլ ամէն ոք նախ եւ առաջ խոստովանութեամբ թող մաքրուի անմաքուր խորհուրդներից ու գործերից, առաքինութեամբ ինքն իրեն որպէս կենդանի պատարագ մատուցի կենդանի Աստծուն եւ ապա թող մօտենայ մաքուրին եւ սպասաւորի Սրբութիւն Սրբոցին, որպէսզի տանջող կրակով [Նաբաթի եւ Աբիուդի] պէս չայրուի ներքին մարդը. այստեղ՝ խղճմտանքով եւ այնտեղ՝ անշէջ բոցով:



Չլինի, թէ՝ ձեզանից մէկը աշխարհիկ բաներին՝ ախտերի հեշտասիրութիւններին եւ նիւթեղէն ցանկութիւններին, վերադառնալով, Ղովտի կնոջ պէս աղէ արձանի վերածուի: Քանզի ինչպէս նա, որ պատուհասից յետոյ չկարողացաւ որպէս աղ կերակուրների համեմիչ լինել, որովհետեւ քար էր, եւ ոչ էլ որպէս քար պիտանի եղաւ շինութեան մէջ՝ աղ լինելու պատճառով, այնպէս էլ ամէն ոք, ով ելնում է աշխարհից, ինչպէս Ղովտը՝ Սոդոմից, եւ բարձրանում է կրօնաւորութեան կարգը, որը հրեշտակային է, ինչպէս նրանք, հրեշտակների կողմից ճանապարհուելով, լեռ բարձրացան, եւ այնտեղից վերադառնում է աշխարհասիրութեան եւ մեղքերի ախտերի մէջ թաւալւում, ինչպէս Ղովտի կինը դէմքով դէպի Սոդոմ դարձաւ, այդպիսին ո՛չ Աստծուն է պիտանի՝ որպէս կրօնաւոր եւ ո՛չ էլ աշխարհի օրէնքներին՝ իբրեւ աշխարհական, անարգ է եւ անպիտան, ոտնակոխ է լինում մարդկանց կողմից՝ որպէս անհամացած աղ: Բայց ձեր՝ աստուածային պատուիրանների վրայ հաստատ մնացողներիդ ամէն ինչը, առաքեալի խրատի համաձայն, կարգով ու բարեձեւ թող լինի, ով դարձեալ ասում է. «Իմաստութեա՛մբ

վարուեցէք արտաքինների հետ՝ ժամանակը ծախու առնելով» [Կող. Դ 5] եւ կամ՝ «Որ ցոյց տաք ձեր պարկեշտ վարքը հեթանոսների մէջ» [Ա Պետ. Բ 12]:

Եւ արդ, թող ձեզանից ոչ ոք օտարների առջեւ իր վատթար խօսքերով կամ անպատշաճ գործերով առիթ չտայ, որ նրանք անզուսպ հայհոյեն մեր սուրբ հաւատքն ու կարգը, քանզի այնպիսիները Աստուծոյ առջեւ կրկնակի դատաստանի պիտի ենթարկուեն. նախ՝ իրենց խօսած կամ գործած մեղքերի համար եւ երկրորդ ու աւելի շատ՝ գայթակղութեան պատճառ լինելու համար:

Թող ոչ ոք, թողնելով ընկերակից կրօնաւորների կենակցութիւնը, առանձին չբնակուի՝ ոչ թէ մենակեացների պէս ճգնողական վարքով ապրելու, այլ՝ ագահութեան ախտի պատճառով, որպէսզի իր անձի վաստակածը ոչ թէ ողջ Եկեղեցու, այլ իր համար ամբարի: Սրանից բազում վնասներ են լինում հոգիներին, մինչդեռ միաբանութիւնից կան բազմապիսի օգուտներ, ինչպէս աստուածաբարբառ վարդապետների խօսքերն են ցոյց տալիս: Շատերի մօտ ընկերներից ամօթի երկիւղը աւելի զօրաւոր է լինում, քան Աստուծոյ երկիւղը, որը ետ է դարձնում մտքի ախորժումը մեղքերի չար ցանկութիւններ կատարելուց: Նաեւ՝ բազում են եղբայրների միասնական բնակութեան շահերը, որոնց մասին աւելորդ ենք համարում գիտեցողներիդ երկրորդել:

Եւ կան դարձեալ աշխարհասէր եւ մեղկ կրօնաւորներից ոմանք, որոնք հին Իսրայէլի նման ոչ միայն սրտով են եգիպտական խաւար գործերին վերադառնում, այլ անձամբ իսկ գիւղերում եւ քաղաքներում են բնակւում աշխարհականների հետ եւ բերանի խօսքերի գարշութեան, վատթար գործերի, անպատկառ որովայնամոլութեան, անառակ արբեցութեան եւ ամէն տեսակ անկարգութիւնների մէջ գերազանցում նրանց:

Նոյնիսկ եթէ այնպէս պատահի, որ կրօնաւորներ ըստ անհրաժեշտ պատճառի աշխարհի մէջ բնակուեն, պէտք է եւ պատշաճ, որ աստուածային եւ ուղիղ վարքով լուսատու լինեն նրանց մէջ եւ պատճառ դառնան, որ Աստուծոյ անունը փառաւորուի եւ ոչ թէ՝ հայհոյուի: Այդպիսիներին ոչ թէ արգելում, այլ մանաւանդ՝ քաջալերում ենք, քանզի բարիների օրինակով շատերն են բարի դառնում, ինչպէս որ, չարերի վարքից վարակուելով, բազմանում են չարերը: Արդ, Աստուծոյ եւ մեր հրամանով սա կանոնական օրէնք թող լինի այնպիսիների համար. այսուհետեւ թող վանքի մէջ հաստատեն իրենց բնակութիւնը եւ մինչեւ վախճանն ապաշխարութեամբ ու պարկեշտութեամբ անցկացնեն իրենց կեանքը՝ ըստ վանական կարգի եւ կերպի: Իսկ եթէ նրանցից որեւէ մէկը չլսի մեր գրած աստուածային օրէնքները եւ չհեռանայ աշխարհից, այլ մինչեւ իր մահը յամառօրէն մնայ նոյնի մէջ, մենք անպարտ ենք նրա կորստեան խղճմտանքից, Աստուծոյ առջեւ ինքը պարտական կլինի իր արեան համար:

Սակայն քահանաներին պատուիրում ենք, որ եթէ աշխարհում լինի այնպիսին, եւ նրան հոգու մեռելութեան հետ հասնի մարմնի վախճանը, նրան չարժանացնեն ո՛չ հաղորդութեան եւ ո՛չ էլ՝ օրինաւոր թաղման, մանաւանդ նրանց, որոնք մինչ ի մահ կմնան անզղջութեան մէջ: Իսկ եթէ նրանցից մէկը մահամերձ վիճակում զղջայ, արտասուքներով հաղորդութիւն եւ թաղում հայցի, ու նրա խոստովանութեանը տեղեակները վկայեն, թէ մտադրուել էր աշխարհից հեռանալ, եթէ մահուան օրհասը չկանխէր, նրան յանուն

Աստուծոյ ողորմութեան թող տրուի վերջին թոշակ եւ օրհնաւոր թաղում՝ ո՛չ որպէս քահանայի կամ կրօնաւորի, այլ՝ որպէս աշխարհականներից մէկի: Բայց ոչ ոք անընտրողաբար հաւասար չհամարի աշխարհում մահացող բոլոր կրօնաւորներին, քանզի կան շատերը, որոնք հիւր են գնում աշխարհ եւ նրանց է հասնում վախճանը, ուրիշներն էլ, մարմնով ծեր ու տկար լինելով եւ վանքերի մէջ խնամք չգտնելով, բնակւում են աշխարհի մէջ՝ ուղիղ եւ ոչ բամբասելի վարքով: Նրանք եւ նրանց նմանները վախճանուելիս թող պատւով որպէս Աստուծոյ ծառաներ թաղուեն:

Դարձեալ զգուշացնում ենք ճշմարտագոյններիդ երամներին մեր ժամանակւայ վանքերի մէջ [դիտուող] մի նոր սովորութիւնից. կրօնաւորներից իւրաքանչիւրը այգեգործութեամբ է զբաղւում, ինչպէս գիւղերում, որն անվայել է կրօնաւորական կարգին եւ առաջին սուրբ հայրերի պատուիրաններից՝ դուրս: Քանզի նրանք աշխարհում ունեցած իրենց ժառանգութիւնն ու ունեցուածքը թողեցին եւ թողնել օրինադրեցին, առաքինութեան խաչը վերցրեցին եւ Քրիստոսին հետեւեցին, ինչպէս եւ Ինքը հրամայեց հարուստին. «Գնա՛ վաճառիր ինչ որ ունես ու աղքատների՛ն տուր եւ երկնքում գանձեր կունենաս. եւ վերցրո՛ւ քո խաչը եւ արի՛ Իմ ետեւից» [Մարկ. Ժ 21] եւ դարձեալ՝ «Եթէ մէկը կամենայ հետեւել Ինձ եւ չուրանայ այն ամէնը, ինչ ունի աշխարհում եւ հանապազ չկրի իր խաչը, չի կարող Իմ աշակերտը լինել» [տե՛ս Ղուկ. ԺԴ 26]: Եւ ա՛յլ այսպիսի աւետարանական պատուիրաններ կան աշակերտողների համար, որ դուք էք:

Մեր օրերի կրօնաւորներից շատերը, որոնք աշխարհում ժառանգութիւն չունէին եւ իշխաններին հարկատու



էին, ընչազուրկ, կարօտ՝ անհրաժեշտ բաների, երբ հագան կրօնաւորի սքեմը, վանքերում տէր եղան ժառանգութիւնների, ստացուածքներով փարթամացան եւ ոչ միայն կարօտ չեղան հարկաւոր պէտքերի, այլեւ աւելորդներով առատացան եւ, աշխարհի մէջ բազմաթիւ հոգսերով ու գործերով չարչարուած, այստեղ անհոգութեամբ եւ հեշտութեամբ պարարտացան: Ինչպէ՞ս կարող է այդպիսին աշակերտութեան կարգի մէջ լինել եւ Պետրոսի նման ասել. «Տէ՛ր, ահաւասիկ մենք թողեցինք ամէն բան եւ եկանք Քո ետեւից. արդ, ի՞նչ կունենանք» [Մատթ. ԺԹ 27]: Յայտնի է, որ այսպիսի կրօնաւորը ոչինչ չթողեց յանուն Քրիստոսի, այլ մանաւանդ՝ ինչ աշխարհում չունէր, ստացաւ հակառակ Քրիստոսի [պատուէրի]:

Եւ արդ, ամէն ժամանակ աստուածային պատուիրանները տրւում են ընդունողներին ըստ իրենց կարողութեան՝ տկարներին՝ թեթեւները, որպէսզի կարողանան տանել, եւ զօրաւորներին՝ ծանրերը, որպէսզի յօժարութեամբ վերցնեն: Այս օրինակով մենք նոյնպէս տեսնում ենք աստուածային սիրուց ցամաքած շատերի, որոնք առաջին հայրերի պէս բարի նախանձով մէկը միւսից աւելի բարձր առաքինութիւնների ձեռնամուխ չեն լինում, այլ մեր ասածի հակառակ նախանձն է նրանց պատշաճում, այսինքն, թէ՝ ո՞վ իր ընկերոջից աւելի ընդարձակ տարածութեան մէջ եւ պարարտ հողում այգի պիտի տնկի եւ թէ՝ իմաստութեամբ ինչպէ՞ս պիտի աճեցնի նոր տունկերը: Եւ փոխանակ իրարից առաքինութեան արուեստն ուսանելու, անփորձները աւելի հմուտներից այգեգործութեան հնարներն են սովորում: Ասում են. «Հարկաւոր է այսքան եւ այսպէս եզներով հերկել, ձեռքով, բրիչներով եւ բահերով բրել, վնասակար

տունկերն ու բոյսերը արմատախիլ անել», թէեւ հարկաւոր էր նախ մեր վարք ու բարքերի մէջ գտնուող բարուն հակառակ բոյսը հանել մեզանից եւ ապա՛ միայն արտաքինի մասին հոգալ: Այլեւ՝ իմաստունների մօտ իւրաքանչիւր սերմի տնկի էտելու եղանակը տարբերւում է. ոմանք, արմատի մօտից [սկսելով], հեռացնում են բոլոր ոստերը, ոմանք էլ՝ քիչ քանակով ոստեր, եւ մեծ մասը թողնում են, եւ այս բոլորը՝ որպէսզի յաճախակի պտղաբերեն եւ շատացնեն գինու քանակը: Էլ չեմ խօսում պատուաստելու հնարների մասին, որտեղ մէկը միւսին գերազանցում է իր հանճարով: Իսկ աշխատելու ջերմ եռանդը. ոմանք, աշխատելու համար օրը բաւարար չհամարելով, գիշերն էլ են ցերեկին խառնում, մինչդեռ նոյն փոյթն ու գործելու յօժարութիւնը պէտք է ցուցաբերէին Աստուծոյ պատուիրանների այգու մէջ, ուր հրաւիրուեցինք քարոզիչների կողմից եւ հաւատքով ու վարքով կրօնաւորութեան գործի լծուեցինք մեր կեանքի վերջալոյսին մէկ դահեկանի վարձատրութիւն ստանալու համար, որն, ըստ խոստացուածի, Աստծուց մեզ տրուած թագաւորական պատկերն է Իրեն նման լինելու համար:

Դարձեալ՝ երբ այգիների տէրերը՝ տարբեր տեղերից կրօնաւորներ, իրար են հանդիպում, ողջոյնից յետոյ ո՛չ հոգիների ողջութեան եւ հիւանդութիւնների մասին են հարցնում, ո՛չ դեւերի դէմ մղուած պատերազմների եւ խաղաղութեան մասին եւ ո՛չ էլ, թէ՝ ինչպէ՞ս ստանանք աղօթքի ժամանակ արտասուքի շնորհը, այլ ասում են. «Եղբա՛յր, այս տարի ինչպէ՞ս է տունկերիդ պտղաբերութիւնը՝ շա՞տ է, թէ՞՝ քիչ»: Եւ միւսը թախծոտ սրտով պատասխանում է. «Ի՞նչ ասեմ պատահած աղէտների մասին, քանզի մի քանիսը վնասուեցին ճիճուներից, մի քանիսի ծաղիկները թա-



փուեցին, ուրիշների էլ ողկոյզները, արեւակէզ լինելով, չորացան, եւ կէսը նեխելով փչացաւ, եւ չգիտեմ, թէ այս փորձանքների վերջը ինչ պիտի լինի»: Եւ ընկերը խրատելով նրան թելադրում է պտղակորոյս տունկերից մի քանիսը պատուաստել եւ մնացածները փորձուած զանազան հնարներով բժշկել պատահած վնասներից:

Եւ քանզի տեսնում ենք, որ կրօնաւորներից շատերը, նիւթական ցանկութիւններից բռնուած, դժուարին են համարում այսպիսի ծանր հոգսերից թեթեւանալը եւ Քրիստոսի խրատին հետեւելը, որն հրամայում է հարկաւոր կերակուրի եւ զգեստի հոգսերով չպաշարել հոգին, ուր մնաց՝ աւելորդ բաներով, ուստի եւ մենք այդպիսի կրօնաւորներին օրէնք չենք սահմանում ամբողջութեամբ հեռանալ տնկագործութիւնից եւ ամենայն ստացուածքից, ինչպէս վայել է Քրիստոսի աշակերտներին, որպէսզի լսելիս իրենց դէմքը արեւմուտք չդարձնեն եւ, մեր խրատական խօսքերը լսելով, խոժոռած չհեռանան այն մեծահարուստի նման [տե՛ս Մատթ. ԺԹ 16], այլ, գտնելով երկրորդ միջոցը, որը, կարծում ենք, նման պարագաներում հաճոյ է Աստուծոյ կամքին, որպէս օրէնք դնում ենք ձեր առջեւ: Եւ եթէ դուք դժուարանում էք ըստ առաջինի ամէն ինչ Աստծուն տալ եւ կամովին մերկանալ աշխարհից, նախքան ակամայ մերկ գերեզման դրուելը, մեր երկրորդ օրինադրութի՛ւնը ընդունեցէք յօժար կամքով, որը եթէ յօժարական սրտով կատարէք, հաւատում ենք Աստուծոյ ողորմութեանը, որ առաջինի նման կընդունի եւ երկրորդի կատարմամբ կառաջնորդի ձեզ՝ դէպի առաջինը բարձրանալու՝ յօժարութեամբ եւ ո՛չ՝ բռնութեամբ: Եւ ա՛յս է մեր ասելիքը:

Ձեր ստացած ամէն բանից՝ լինի տունկ, թէ՝ այլ բան, հեռու՛ պահեցէք ագահութեան ախտը, ինչպէս վնասակար բոյսը՝ բարի սերմերից: Եւ դրանց վրայ կատարած ձեր աշխատանքը գործածէք ո՛չ թէ ստացուածքները կուտակելու, այլ՝ Աստուծոյ կամքը ստանալու, երկրաւորները երկնքում գանձելու եւ այդ մարմնական աշխատութեամբ հոգիների համար գանձ ամբարելու համար: Եւ թո՛ղ այնպէս լինի, ինչպէս ասում ենք, որով ձեր ստացուածքներն Աստծուն հաճելի կլինեն:

Այգեկութին ձեր բերքի մի մասը Աստծո՛ւն տուէք աղքատների եւ կարօտեալների միջոցով եւ պտուղ խնդրողներին դատարկ ու ձեռնունայն մի՛ ետ դարձրէք, որպէսզի Աստուած էլ ձե՛զ Իր տնկած դրախտից ունայն ետ չդարձնի: Տալիս խոժոռ դէմքով, զայրացած սրտով ու դժկամ խօսքերով չտաք Կայէնի զոհի նման, որ հաճելի չէ Աստծուն, այլ ընդհակառակը՝ զայրացնում է. այլ զուարթառատ կամքո՛վ տուէք, ինչպէս որ Աստուած սիրում եւ խնդրում է: Գինու ժամանակ ե՛ւս այդ գինուց բաժին հանէք Աստծուն: Եւ երբ ձեզ պէտք եղածից աւելին ստանաք, եւ հարկ լինի վաճառել, վաճառքի դրամից աւելի պտղաբերէ՛ք Քրիստոսին՝ տառապեալներին եւ գերեալներին տալով:

Երկրի վրայ մի՛ ամբարէք եւ մի՛ յուսացէք մահից յետոյ ուրիշների ձեռքով ձեր ունեցածը Աստծուն տալ ձեր [հոգիների] համար, քանզի փոքր է յոյսն այն, չեմ ասում թէ՝ ամենեւին ունայն: Սեփական ունեցուածքը կենդանութեան ժամանակ պահել եւ յուսալ, որ մահից յետոյ ուրիշի ձեռքերն աւելի առատ կլինեն իր ունեցուածքից տալու մէջ, եւ իր ձեռքերը կարկամեցնել՝ սա երկրորդական բարիք է եւ ո՛չ՝ առաջնակարգ: Դեռեւս երկբայելի է գտնել այնպիսի



մարդու, որն Աստուծոյ երկիւղից ունեցուածքը մեռնողի հրամանով բաժանի, քանզի մեռնողի ստացուածքները բազմաթիւ աներկիւղ մարդկանց հոգու կորստեան պատճառ են դառնում, երբ նրանք ժառանգում եւ անառակ ու անկարգ ընթացքով վատնում են բոլորը, որով այդ ունեցուածքը ստացողի փրկութեան փոխարէն կորստեան պատճառ է դառնում:

Դարձեալ՝ նոյնիսկ եթէ հանդիպի երկիւղած մէկը եւ մեռածի բոլոր ունեցածը Աստուծոյ կամքով տնօրինի նրա հոգու մեղքերի թողութեան համար, նուազ բարի է եւ ոչ՝ կատարեալ: Եւ ինչու է սա ճշմարիտ, ուսանում ենք [Սողոմոն] Իմաստունի խօսքից, որն ասում է. «Ով ողորմում է աղքատին, փոխ է տալիս Աստծուն» [Առակ. ԺԹ 17]: Եւ ամէն ոք գիտէ, որ պարտապանը իր պարտքը տալիս է ոչ թէ օտար մէկին, այլ՝ պարտատիրոջը: Ուստի աղաչում եմ՝ ոչ ոքի մի՛ վստահեցէք, այլ դուք ձեր ձեռքո՛վ փոխ տուէք Աստծուն: Քանզի եթէ փոխ խնդրող Աստուած ձեզ ճանաչի որպէս փոխատու, Իր սահմանած Հատուցման Օրը ձեր ձեռքը կտայ փոխի վճարը: Իսկ եթէ ձեր գոյքի փոխ տուողը մէկ ուրիշը լինի, փոխարէնը նա՛ էլ պիտի ստանայ Աստծուց, եւ ձեզ էլ, թերեւս, ողորմութիւնից մի մաս հատուցի ձեր փոխարէն տուողի միջնորդութեամբ:

Տէրունական հրամանը եւս, որ հրապարակախօս ատեանում պիտի ասուի աջակողմեաններին, նոյնն է ցոյց տալիս: Քանզի չի ասում, թէ՝ «Քաղցած էի, եւ ուրիշներն Ինձ կերակրեցին ձեր փոխարէն», կամ թէ՝ «Մերկ էի, եւ ուրիշներն Ինձ հագցրեցին ձեր փոխարէն», այլ՝ «Դուք Ինձ ուտելիք տուեցիք, դուք Ինձ հագցրիք» [տե՛ս Մատթ. ԻԵ 35]:

Արդ, թէեւ Քրիստոսի առաջին կամքն ու հրամանն այն է, որ կրօնաւորը բնաւ ստացուածք չունենայ, ինչպէս վերեւում ասացինք, որպէսզի, նիւթականի մասին հոգալով, աստուածային առաքինութիւնների աննիւթական հոգսերից չկտրուի եւ ինքն իրեն գցի բազմաթիւ վնասների հոգսերի եւ ծանրութեան տակ, այլ, ըստ առաքեալի հրամանի, միաբանական կեանքին [վայել] կերակուր ու հանդերձ ունենայ եւ դրանով գոհանայ: Բայց քանզի սա բոլորի համար չէ, այլ նրանց՝ ովքեր Աստուծոյ սիրոյ համար ատեցին աշխարհը եւ այնտեղից հեռացան եւ ո՛չ՝ ուրիշ պատճառով: Ուստի եւ մենք այն կրօնաւորներին, որոնք երկկենցաղ կենդանիների նման ցամաքային են արտաքինով եւ ծովային՝ աշխարհի ծովի զբաղմունքներով, աշխարհիկների օրէնք ենք դնում եւ ոչ թէ՝ գերաշխարհիկների: Քանի որ յանուն Քրիստոսի աղքատանալը ունեցուածք ստանալուց եւ ըստ Քրիստոսի պատուիրանի աղքատներին տալուց այնքանով է մեծ, որքանով մեծ է Քրիստոս նրանից, ով ողորմում է աղքատին ի դէմս Քրիստոսի:

Քանզի յանուն Աստուծոյ կամաւոր աղքատը նմանւում է Քրիստոսին, Ով մեզ համար աղքատացաւ, ինչպէս ասւում է Սուրբ Գրքի մէջ, իսկ աղքատին ողորմողը Քրիստոսի բարեկամ է կոչւում, բայց ո՛չ՝ հէնց Քրիստոս:

Եւ արդ, քանի որ ամբողջութեամբ Քրիստոսին նմանուելը՝ յանուն Նրա ամէն ինչից կամաւորապէս մերկանալով, դժուար է ամենքի համար, չեմ ասում, թէ՝ անհնարին, քանզի կամեցողները կարող են, ինչպէս շատերն արդէն բոլոր ժամանակներում կատարեցին, ուստի դուք, որ ունեցուածք էք ստացել, այսուհետեւ Քրիստոսի բարեկամների աստիճա՛նը ստացէք՝ աղքատներին ողորմելով, ինչպէս եւ



Ինքը՝ Տէրը, հրամայեց. «Ողորմութի՛ւն տուէք, եւ ահա ձեր ամէն ինչը մաքուր պիտի լինի» [Ղուկ. ԺԱ 41], այսինքն՝ երբ ձեր ստացուածքներից յօժար եւ առատամիտ կամքով ողորմութեան բաժին հանէք աղքատներին, մնացած բոլորը կմաքրուեն եւ ձեզ վնաս չեն տայ: Եւ չէք դատուի որպէս ագահ ձեր ստացածի համար, այլ Աստուծոյ ողորմութեանը կարժանանաք որպէս ողորմածներ՝ ըստ մեր Տիրոջ ասածի՝ «Երանի ողորմածներին, քանի որ նրանք ողորմութիւն պիտի գտնեն» [Մատթ. Ե 7]:

Նաեւ այս ենք ասում, որ կրօնաւորների անինչք եւ անստացուածք լինելու օրէնքը թէպէտ աշխարհիկ բաներից անզբաղ լինելու եւ միայն հոգեւոր բաներով պարապելու համար է, սակայն գլխաւոր նպատակն այն է, որ կրօնաւորը կարօտ լինի ոչ միայն՝ աւելորդ, այլեւ հարկաւոր կերակուրների, ըմպելիքների եւ զգեստների, որպէսզի կարողանայ պատերազմել մաքուր կուսութեան դէմ զինուող ցանկութիւնների հետ եւ յաղթել [նրանց]: Որովհետեւ նրանք, որոնք իրենց անձը անխտիր տալիս են որկրամոլութեան ու արբեցութեան, նոյնիսկ եթէ պոռնկութեան ախտերի գրգռիչ դեւեր չունենն, բաւական է ցանկութեան բոցը՝ որովայնամոլութեամբ սննդի շատութեանը տրուելը, որ նրանց մեղանչման մէջ գցի:

Ուստի աղաչում եմ՝ եթէ անգամ շատ ուտելիք եւ ըմպելիք ունենաք ձեր ձեռքում եւ տանը, ձեր հոգիները խնայելով՝ ագահութեամբ ու որկրամոլութեամբ մի՛ վարուէք դրանց հետ, այլ՝ ըստ կրօնաւորների կարգի՝ պարկեշտութեամբ եւ օրինաւոր կերպով: Եւ ինչ ձեզանից նուազեցնում էք ըստ Աստուծոյ պատուիրանի՝ ի սէր կարօտեալ եւ չքաւոր եղբայրների, ծերերի եւ տկարների, նրա՛նց տուէք,

որով ձեր հոգիների համար կրկնակի բարիք կամբարէք՝ ձեր անձի պարկեշտութիւնը եւ սիրով ողորմութիւնը՝ կարօտեալներին:

Ձեր մէջ թող չգտնուի մէկը, որ, կրօնաւորական զգեստ առնելուց յետոյ, ինքն իրեն գինեմոլութեան տալով, իր սուրբ կարգը արբեցողութեան բամբասանքին ենթարկի, որպէսզի մէկի անկարգութեամբ նրա բոլոր կարգակիցները աշխարհականներից ու այլազգիներից չարհամարհուեն: Եւ թէեւ ուրիշ ամէն ինչով կարողանար անբամբասելի լինել այդպիսին, սակայն արբեցութեան պատճառով պիտի զըրկուի արքայութիւնից՝ ըստ առաքեալի խօսքի. «Մի՛ խաբուէք. ո՛չ պոռնիկներ, ո՛չ կռապաշտներ ... ո՛չ գինեմոլներ Աստուծոյ արքայութիւնը չեն ժառանգի» [Ա Կորնթ. Զ 9]:

Որովհետեւ նրանք, ովքեր պարտաւոր են բոլոր տեսնողներին բարի օրինակ ծառայել, իրենք են գործում այն, ինչ Սուրբ Գիրքը աշխարհականներին է արգելում: Այլեւ ի՞նչ յոյս պիտի ունենան աշխարհականները, կամ ո՞վ պիտի համարձակուի վատթար գործերի համար յանդիմանել նրանց, ովքեր ընդդիմաբանում են՝ եկեղեցականներից ոմանց զանազան անկարգութիւնները [յիշելով]: Բոլորին չէ, որ ասում ենք, քանզի ձեզանից շատերը յանուն Աստուծոյ սիրոյ նոյնիսկ յագենալու չափ հաց ու ջուր էլ չեն օգտագործում, ուր մնաց՝ աւելորդ կերակուրներ եւ գինի:

Այլ խօսքս չխրատուողների ու ծոյլերի համար է: Դուք էլ, որ կատարեալ էք, խրատեցէ՛ք անառակ ընթացքի մէջ եղողներին, որպէսզի ուղղուեն: Իսկ ովքեր յամառելով հանապազ մնում են նոյն թուլակամ եւ մեղկ կեանքի մէջ՝ բազում անգամ խրատուելուց յետոյ, այնպիսիներին չանսալու համար, որպէս անբժշկելի անդամ, կտրեցէ՛ք եկեղեցու



մարմնից, որպէսզի փոքր խմորը ամբողջ զանգուածը չապականի՝ չարը չարերին օրինակ լինելով:

Իսկ եթէ եղբայրներից մէկը ազգակցականութեան կամ սիրամերձութեան պատճառով նման մէկին ջատագովում է, որպէսզի հիւանդ անդամը առողջների շարքում պահուի՝ լրբաբար գործելով անպատշաճ բաներ, մերձականների հիւանդութեան պատճառ լինելով, իր հոգու ախտը նրանց փոխանցելով՝ որպէս իր ու իր հետ եղողների հոգիների կորստեան բոր, Քրիստոսի առջեւ նրա օգնակա՛նը պատասխան պիտի տայ՝ լինի առաջնորդ, թէ՝ ընկերներից որեւէ մէկը: Քանզի եթէ Տէրը հրամայում է աջ աչքը հանել եւ աջ ձեռքն ու ոտքը կտրել [տե՛ս Մատթ. Ե 29], ի՞նչ պիտի լինի նրանց հետ, որոնք գայթակղեցնողներին ամուր պահում են գայթակղուողների մօտ՝ ի վնաս երկուսի հոգիների էլ. հիւանդներին՝ աներկիւղ վատթար բաներ գործել տալով եւ առողջներին՝ [դրդելով] գայթակղութեան եւ բամբասանքի:

Իսկ եթէ այնպիսին, հեռանալուց յետոյ, զղջալով դարձի գայ Աստուծոյ շնորհով եւ ապաշխարութեամբ առողջանայ՝ ճշմարիտ կերպով եւ ո՛չ՝ կեղծաւորութեամբ, թող վերստին ընդունուի Քրիստոսի միութեան առողջ անդամների մէջ:

Դարձեալ պատուիրում ենք, որ հնարաւորին չափ հրաժարուէք վանքից վանք տեղափոխուելու փոփոխական սովորութիւնից, քանզի առաջնորդին եւ միաբանակից եղբայրներին չնչին պատճառով թողնելը անհաստատ բարքի նշան է: Քանզի կանոնագրքերը եւս արգելում են մարմնաւոր կարիքների համար տեղ փոխելը, բացառութեամբ այն դէպքերի, երբ հոգին վնասող պարագաներ կան. եւ այս

պատճառով է, որ մեր ազգի գրեթէ բոլոր կրօնաւորների մէջ, սակաւ բացառութեամբ, տեսնում ենք սանձարձակ, անխրատ եւ աւագներին անհնազանդ այրերի: Որովհետեւ երբ առաջնորդը, վարդապետը կամ ծերերից մէկը տեսնում է մէկին անպատշաճ բաների կամ կրօնաւորին անվայել գործերի եւ խօսքերի մէջ եւ յանդիմանական խօսքով սաստում նրան, ապա Տիրոջից խուսափող ծառայի նման շուտով՝ գիշերով, զայրացած սրտով, փախչում է աստուածային խրատից:

Եւ քանզի առաջնորդը վախենում է, որ գուցէ նման պատճառով եղբայրների հեռանալը Եկեղեցու գործին վնասի, ներում է ամէն մի ստահակ եղբօր՝ թողնելով, որ անբժշկելի մնայ իր անառակ բարքի եւ գործերի մէջ: Այս պատճառով էլ այդպիսիները անխրատ եւ սանձարձակ են մնում մինչեւ վախճան:

Նաեւ իրենց խրատողների [խօսքերին, թէ]՝ մի՛ եղէք հետաշրջիկներ, դժկամօրէն պատասխանում են յիմար խօսքերով եւ ասում. «Աստուած մեզ ազատ եւ ինքնիշխան ստեղծեց, ինչո՞ւ մեր ազատութիւնը մարդկանց ծառայութեան տակ դնենք»: Երանի թէ ազատութիւնը, որն Աստուած տուեց մեր բնութեանը, բարուոք օգտագործէին, այսինքն՝ ախտերից ազատ լինէին:

Մեղքերի ծառայութիւնը վատթար եւ վնասարար ծառայութիւն է, ինչպէս ասաց Քրիստոս. «Ով մեղք է գործում, ծառայ է մեղքին» [Յովհ. Ը 34]: Իսկ ծառայութիւնն Աստծուն եւ Աստուծոյ համար՝ Եկեղեցուն եւ Եկեղեցու համար՝ առաջնորդին, արդարութիւն է եւ ոչ՝ մեղք, ինչ եւ առաքեալըն է օրինադրում. «Հնազանդուեցէ՛ք միմեանց Քրիստոսի երկիւղով» [Եփես. Ե 21], եւ Ինքը՝ Քրիստոսն է հրամայում.



«Ով կամենում է մեծ լինել, պէտք է բոլորին ծառայ լինի» [Մատթ. Ի 26]: Սուրբ Բարսեղը եւս կրօնաւորների սահմանադրութեան մէջ գրում է. «Նա, ով առաջնորդին չի հնազանդւում, նրա ամբողջ ժուժկալութիւնն ու առաքինութիւնը անօգուտ է եւ ոչնչի պիտանի չէ»:

Եղբայրներից ոչ ոք թող չտրտնջայ իր առաջնորդի դէմ, ինչ էլ որ լինի պատճառը, նոյնիսկ եթէ իրաւացի լինի տրտնջալու մէջ, որպէսզի վարձքը, որ Աստծուց է, չկորցնի եւ դատուի այգու առաջին մշակների հետ՝ Տիրոջ դէմ անիրաւաբար տրտնջալու համար [տե՛ս Մատթ. Ի 11]: Քանզի եթէ առաքեալը հրամայում էր, որ մարմնաւոր ծառաները հնազանդ լինեն մարմնաւոր տէրերին եւ ծառայեն ոչ թէ առաչօք, այլ սրտի միամտութեամբ՝ ինչպէս Աստծուն, որովհետեւ ասում է. «Տիրոջից պիտի առնէք ձեր վարձքը» [տե՛ս Կողոս. Գ 22—24], որքան առաւել Աստուած պահանջում է հոգեւորականներիցդ նրանցից աւելի հնազանդութիւն, համբերութիւն եւ հաւատարմութիւն ցուցաբերել Եկեղեցու հոգեւոր առաջնորդների նկատմամբ: Քանզի ոչ միայն պահքի, աղօթքի եւ սրանց նման այլ տեսակի առաքինութիւնների համար է Աստուած իր պատուիրանի այգու մէջ աշխատողներին վարձք տալիս, այլ առաւել եւս՝ գործով, աշխատանքով եւ ամէն բանով Եկեղեցուն հաւատարիմ լինելու համար:

Իսկ գողերին, կծծիներին, յափշտակողներին եւ այսպիսի յանցանքների մէջ աշխարհականների պէս գտնուողներին Աստուած առաւելապէս պիտի դատի՝ որպէս Տիրոջ կամքը գիտեցող ծառաների, քան նրան, ով չգիտի: Քանզի ինչպէս որ պիղծ սողունները, մաքուր կերակուրների եւ ըմպելիքների մէջ ընկնելով եւ խեղդուելով, ապականում են

դրանք, այդպէս էլ երբ գողերը ձեռքերը մօտեցնում են՝ յափշտակելու արդար վաստակը, թէ՛ իրենց բարեգործութիւնն են խեղդում իրենց հոգիների մէջ, ինչպէս մկները, եւ թէ՛ մնացած ստացուածքն են անիրաւութեամբ պղծում:

Ուստի աղաչում եմ, որ զգուշանաք եւ մաքուր պահէք ձեր ձեռքերը անձին վնասակար եւ անիծաբեր այս ախտերից: Քանզի Եկեղեցու մէջ ոչ մի մեղքի համար այնքան մեծ անէծքներ չեն լինում, որքան՝ գողութեան: Եւ թող ոչ ոք մեղքերի կարգում սա փոքր չհամարի, քանզի քարեղէն տախտակների վրայ Աստուծոյ մատով գրուած օրէնքների մէջ, սպանութիւնից եւ շնութիւնից յետոյ, երրորդը սա է կարգուած: Թող ոչ ոք չկարծի, թէ միայն մեծ բաների յափշտակութիւնն է գողութիւն համարւում, իսկ փոքրերինը՝ ոչ: Այնպիսին թող իմանայ, որ թէեւ տուգանքների մէջ զանազանութիւն կայ, որովհետեւ օրէնքն է հրամայում գողացուածի քառապատիկը հատուցել, եւ տասը, հարիւր կամ հազար դահեկանի քառապատիկը աւելի մեծ է, քան մէկ կամ երկու դահեկանինը, սակայն անունը նոյնն է՝ թէ՛ մեծինը, թէ՛ փոքրինը, թէ՛ շատինը եւ թէ՛ քչինը: Քանի որ միայն մեծ առարկաներ կամ շատ գողացողը չէ, որ գող է կոչւում, ոչ էլ փոքր բան կամ քիչ գողացողը՝ այլ բան. գող անունը եւ պատիժը նոյնաբար տրւում է բոլորին՝ թէ՛ շատ գողացողին եւ թէ՝ քիչ: Եւ ահաւասի՛կ սահմանումը, որով մարդը գող է անուանւում եւ որպէս այդպիսին ճանաչւում. ով ձեռքը երկարում է՝ որեւէ իր վերցնելու, եւ այս ու այն կողմ է նայում, որ առարկայի տէրը չտեսնի եւ իրեն բռնի, կամ օտարը տեսնի եւ հայհոյի, այնպիսին գող է, եւ արածը՝ գողութիւն:



Եւ ոչ ոք իրեն իրաւունք չհամարի կա՛մ գողացուածը սեփական աշխատանքի վարձք անուանել եւ կա՛մ, որեւէ սուտ պատճառաբանութիւն յօրինելով, ինքն իրեն անպատիժ համարել Աստուծոյ դատաստանից: Այսպիսին թող զգաստանայ նախկին՝ Անանիայի եւ Սափիրայի օրինակից: Մի՞թէ նրանց վաստակը այլոց իրերից գողացուած էր, ինչպէս քոնը. ո՛չ, այլ իրենց սեփական ագարակի վաճառքից եւ հայրենի ժառանգութիւնից էր, որը արծաթով վաճառեցին եւ, իրենց անձնական կարիքների համար փոքր—ինչ թաքցնելով, մեծ մասը Պետրոսի ոտքերի տակ դրեցին: Տե՛ս, թէ ինչպիսի մահուան դատապարտուեցին Հաւատքի Վէմի կողմից՝ իրաւամբ արդարօրէն պատժուելով, ո՛չ թէ արծաթի կարիքից ելնելով, որ Պետրոսին հոգ չէր պատճառում, այլ՝ ստութեան համար, ինչպէս եւ ասուեց. «Մարդու՛ն չստեցիր, այլ՝ Աստծուն» [Գործք. Ե 4]:

Իսկ մեր կրօնաւորների մօտ ոչ միայն գողութիւն ենք տեսնում, այլեւ՝ գողութեան համար ստութիւն, եւ ոչ՝ լոկ խօսքով, այլեւ ուրացութիւն՝ մեծամեծ երդմամբ. այդպիսինին մեղքերի թողութիւն չկայ, մինչեւ չզղջայ եւ չխոստովանի նրան, ումից գողացել է, քանզի գողացուած իրի համար գողին թողութիւն տալու իշխանութիւնը ոչ թէ որեւէ օտար խոստովանահօրն է, այլ նրանը, ով տէրն է գողացուած առարկայի: Եւ երբ չի խոստովանում նրան, ումից գողացել է եւ ում զրկել, ոչ միայն մաքսաւոր Զաքէոսի պէս քառապատիկը չի հատուցում [տե՛ս Ղուկ. ԺԹ 8], այլ նոյնիսկ գողացուածը չի վերադարձնում, յաւիտեան թողութիւն չի գտնի:

Կան նաեւ պակասամիտ կրօնաւորներ, որոնք թէեւ նիւթեղէն իրեր չեն գողանում, բայց գողանում են Եկեղե-

ցուց իրենց անձի կարողութիւնն ու յաջողութիւնը, իրենց առանձնական գործերի մէջ արի եւ արթուն լինելով՝ հասարակական գործում հեղգ են եւ ծոյլ: Այնպիսիներն Աստուծոյ դատաստանից անպատիժ չպիտի մնան առաւել իրենց թերահաւատութեան, քան ծուլութեան պատճառով, որովհետեւ չեն հաւատում, որ աշխատանքի վարձքը Տիրոջից պիտի ընդունեն, այլ միայն մարդկայինն են համարում հատուցում, որոնց երբ առաջնորդը իրենց կամքի համաձայն է տալիս պէտքերը, արիանում են գործի մէջ, իսկ երբ մի քիչ նուազեցնում է, գործի մէջ հեղգութեան հետ եւ տրտունջն են աւելացնում:

Ձեր գործերի մասին աստուածաշնչեան այս պատուիրանների կողքին, աղաչում ենք, որ ձեր շրթունքներին ու լեզուին դուռ եւ դռնապան դնէք, որպէսզի միայն օգտակար ու բարի խօսքերին ազատ ելք տան, իսկ չար, վնասակար եւ անօգուտ խօսքերը սրտի մէջ բանտարկեն՝ թոյլ չտալով, որ միտքը չար մանուկներ ծնի, այլ մանաւանդ՝ իր սաղմի մէջ պէտք է խեղդել սատանայի սերմանածը:

Եւ արդ, թող ոչ ոք չդատի իր ընկերոջը, որպէսզի ինքը եւս չդատուի արդարադատ Աստծուց, ինչպէս եւ ասաց Տէրը. «Մի՛ դատէք եւ չպիտի դատուէք» [տե՛ս Մատթ. Է 1]:

Թող ոչ ոք չբամբասի՝ ասածը ճիշտ լինի, թէ՝ սխալ, ուր մնաց՝ դատարկ տեղը: Քանզի ի՞նչ օգուտ կբերես եղբորդ՝ ուրիշների մօտ նրան բամբասելով. քե՛զ վնասեցիր, եւ նա էլ ոչնչով չօգտուեց: Եթէ ուզում ես օգտակար լինել նրան եւ քեզ, վարուի՛ր տէրունական խրատի համաձայն. նրան սիրով յանդիմանի՛ր, ինչպէս հիւանդ անդամին՝ սպեղանիով, նախ՝ առանձնաբար, եթէ չանսայ՝ երկու—երեք վկաների առջեւ, եթէ նրանցից եւս չպատկառի եւ չուղղուի, եկեղեցու մէ՛ջ ասա, եւ եթէ եկեղեցու մէջ հրապարակօրէն նախատուելով էլ չզղջայ, այն ժամանակ իրաւապէս թող քեզ քո կողմից համարուի եւ հռչակուի իբրեւ հեթանոս եւ մաքսաւոր [տե՛ս Մատթ. ԺԸ 15]:

Եւ արդ, թող կրօնաւորներից ոչ ոք չվարժեցնի իր լեզուն զուր չարախօսութեան կամ ունայն անէծքի, անօգուտ կռիւների եւ վնասակար վիճաբանութիւնների մէջ հակառակորդին ընդդիմաբանելուն կամ վիճելիս աշխարհականների պէս թշնամալից եւ անարգալից խօսքերի բարբառմանը, որ վայել չէ սուրբերին: Քանզի եթէ դատարկ խօսքերի համար հաշիւ է պահանջում Քրիստոս, ինչպէս հրամայեց [տե՛ս Մատթ. Դ 22], ապա ի՞նչ պիտի լինեն նրանք, ովքեր գարշելի եւ վատ բաներ են անխտրաբար խօսում: Մանաւանդ նրանք, ովքեր խեղկատակութեան ու ծիծաղաշարժ խօսքերի են վարժեցնում իրենց լեզուն՝ նմանուելով խեղկատակների եւ ծաղրածուների, որոնք ծիծաղելիս այլայլում են դէմքը եւ անմտաբար քրքջում: Ուստի աղաչում եմ՝ ձեր խօսքերը անհամ եւ անալի թող չլինեն անմիտ ռամիկների խօսքերի պէս, այլ աղով համեմուած՝ ըստ առաքեալի խրատի [տե՛ս Կող. Դ 6], որպէսզի լսողներին շահ եւ օգուտ բերեն եւ ոչ թէ գայթակղութիւն ու զզուանք պատճառեն: Նոյնիսկ այնպիսին, որ գիտէ իմաստութեամբ խօսել, շահաւէտ եւ օգտակար խօսքերը յաճախակի եւ անտեղի չպէտք է արտաբերի, որպէսզի լսողները ձանձրանալով չնողկան, եւ բարի խօսքեր ատողները չնախատեն, այլ՝ սակաւ, այն էլ՝ հեզութեամբ եւ հանդարտութեամբ:

Ամփոփելով մաքրագոյններիդ երամին ուղղուած մեր խօսքը՝ այս ենք ասում՝ թող ձեր խորհուրդները, խօսքերն ու գործերը, հոգու եւ մարմնի ամէն շարժում պարկեշտ եւ

աստուածավայել լինեն, որպեսզի Աստուծոյ անուան եւ կրօնաւորութեան ձեր կարգին հայհոյանքի եւ պարսաւանքի պատճառ չլինեն, այլ տեսնողների եւ լսողների գովասանքի եւ փառաւորման առիթ տան: Որպեսզի ձեզանից ոչ մէկը հին Իսրայէլի պէս չլսի Աստուծոյ մարգարէից, թէ՝ «Իմ անունը ձեր պատճառով հայհոյւում է հեթանոսների մէջ» [Եսայ. ԾԲ 5]: Այլ մանաւանդ՝ պայծառ առաքինութեամբ արժանի լինէք լսելու տէրունական խօսքը՝ ուղղուած իր աշակերտներին. «Թող ձեր լոյսն այսպէս լուսաւորի մարդկանց առաջ, որպեսզի տեսնեն ձեր բարի գործերն ու փառաւորեն ձեր Հօրը, որ երկնքում է» [Մատթ. Ե 16]:

Եւ ի փառս Աստուծոյ թող աւարտուի աշակերտող եղբայրներիդ ուղղուած մեր այս համառօտ խօսքը:



# ՎԱՆԱԿԱՆ ՍՈՒՐԲ ՈՒԽՏԵՐԻ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ

Փոքր—ինչ էլ երկինք ճամփորդողների առաջնորդներիդ ծառայակցաբար հոգեւոր եւ աստուածային խօսքի կերակուր տանք, որ Եկեղեցու մարմնի աչքերի դերն ու սպասաւորութիւնը կատարողներն էք: Քանզի ինչպէս աչքն է անձին առաջնորդում ամենայն լաւ ու վատ շարժման, նմանապէս էլ առաջնորդները՝ առաջնորդւողներին: Եւ ինչպէս աչքի բիբերը եթէ մաքուր լինեն ներս մտնող ախտերից, սրատեսութեամբ մարդուն անմոլոր կառաջնորդեն ուղիղ ճանապարհով, իսկ եթէ սեւ մշուշները գլխից աչք իջնող լոյսի երակներն անտեսութեամբ խցանեն, կխաւլուի եւ իր հետ ողջ անձը մահուան խորխորատը կնետի, այնպէս էլ Եկեղեցու առաջնորդներից ով երկու աչքով լուսաւորուած լինի, այսինքն՝ Աստուածաշնչի գիտութեամբ եւ առաքինասէր գործերով՝ անբծութեամբ, սրբութեամբ եւ ամենայն արդարութեամբ, ինչպէս Աստուծոյ պատուիրաններն են ուսուցանում, այդպիսին ինչպէս իր անձը, այնպէս էլ ամբողջ եղբայրութիւնը բարւոք կառաջնորդի աստուածային գործերի մէջ: Իսկ նա, ով աչքերից մէկը բաց ունենայ եւ միւսը՝ փակ, այսինքն՝ գիտութիւն ունենայ առանց առաքինութեան գործերի եւ կամ առաքինութիւն՝ առանց գիտութեան, թերի է բարիքներից եւ ոչ՝ կատարեալ, քանի որ նման է միաչքանու: Քանզի թէպէտ եւ իմաստութիւն ունեցողը գիտէ արդարութեան ճանապարհի շաւիղները խօսքով ուղիղ ուսուցանել, բայց եթէ ինքը գործով արդարութեան ճանապարհով չի քայլում, ուրիշներին գնալ չի կարող համոզել, նմանապէս էլ նա, ով առանց Սուրբ Գրոց գիտութեան միայն սուրբ վարքով է ապրում, թէեւ անձամբ

Աստուծոյ օրէնքների ճանապարհով է գնում, բայց քանի որ ուրիշներին ըստ պատշաճի իմաստութեամբ առաջնորդել չգիտէ, այդ պատճառով բազմաթիւ անկարգութիւններ են մուտք գործում Եկեղեցի: Իսկ նրանք, որոնց երկու աչքերն էլ լոյսից խաւարած են, այսինքն՝ ե՛ւ տգէտ են աստուածային գիտութիւնների մէջ, ե՛ւ ծոյլ՝ արդարութեան բոլոր գործերում, մանաւանդ՝ երբ հակառակ [գործերով] են լցուած եւ յանդգնում են Եկեղեցու առաջնորդութիւն ստանձնել, որոնցից շատերին ենք տեսնում մեր թշուառ ժամանակներում, որոնք ձեռնամուխ են եղել այս գործին, այնպիսիները լինում են ըստ տէրունական այս առակի, որ ասում է. «Երբ կոյրն է կոյրին առաջնորդում, սխալւում է, եւ երկուսն էլ փոսն են ընկնում» [տե՛ս Մատթ. ԺԵ 14], ովքեր առաջնորդական պաշտօնին դիմում են ոչ թէ Աստծուց, այլ՝ սատանայից դրդուելով՝ ի կորուստ իրենց եւ առաջնորդուողների: Այդ պատճառով էլ մենք աստուածային խօսքի խրատիչ սերմը կսերմանենք այն առաջնորդների հոգիներում, ովքեր կամենում են Աստուծոյ օրէնքով վարել իրենց առաջնորդութիւնը, Աստուծո՛վ են սկսում եւ Աստուծոյ առաջ աւարտում: Որոնց եւ ասում ենք.

Անփոյթ մի՛ եղէք աշակերտող եղբայրներից որեւէ մէկի հանդէպ, երբ նա հոգեւոր կամ մարմնաւոր վտանգի մէջ է ընկնում, քանզի պատասխան էք տալու իւրաքանչիւրի համար: Մի՛ պահանջեցէք նրանցից միայն նիւթական գործի անթերի կատարում՝ անփոյթ լինելով նրանց կատարած հոգեւոր գործերի հանդէպ, այլ միշտ խրատեցէ՛ք, որ զգուշանան վատթար բաներից եւ լաւագոյններին հետեւեն, ինչպէս մանաւանդ՝ պահանջում է իրենց ստացած կարգը: Քանզի, Պօղոսի խրատի համաձայն, այս կարգը [պահան-



ջում] է մեռած լինել աշխարհի եւ աշխարհիկ բաների, եւ կենդանի՝ Քրիստոսի եւ Նրա պատուիրանների համար [տե՛ս Հռոմ. Զ 11], քանզի կանչուեցին օրէնքների այգին մշակելու եւ ոչ թէ՝ արտաքին ծառայութեան գործերի համար: Եւ ով այստեղ զբաղւում է միայն այսպիսի եւ բնաւ ո՛չ հոգեւոր գործով կամ ամբողջ սրտով կատարում է նիւթական գործը, իսկ աննիւթականը՝ հարկադրաբար եւ ի տես մարդկանց, այնպիսին ներքին ականջով չի լսել տէրունական հրամանը, որն ասում է. «Աշխատէք ո՛չ թէ կորստական կերակրի համար, այլ՝ այն կերակրի, որ տանում է յաւիտենական կեանք» [Յովհ. Զ 27]:

Արժանի է նաեւ նիւթական գործը, քանզի պարապութիւնը չար է, ինչպէս եւ Պօղոսն է խրատում եւ մանաւանդ՝ օրինադրում, թէ՝ «Ով չի աշխատում, թող չուտի էլ» [Բ Թես. Գ 10], որն ինքն եւս գործադրում էր՝ ասելով. «Գիշեր ու ցերեկ աշխատում էինք, որ ձեզանից որեւէ մէկին ծանրութիւն չլինենք» [Նոյն 8] եւ թէ՝ «Իմ եւ ինձ հետ եղողների կարիքներն այս ձեռքերը հոգացին» [Գործք Ի 34]: Բայց մարմնաւոր գործի պատճառով հոգեւորներն անտեսելը՝ որպէս աւելորդութիւն, յոյժ վատթար է Քրիստոսին աշակերտողներին: Քանզի ինչպէս մարմինը հոգու համեմատ երկրորդական է, այնպէս էլ՝ նախ պէտք է հոգալ հոգո՛ւ սնունդը, որն է աղօթքը եւ ամէն տեսակ բարեգործութիւնները, եւ ապա՝ մարմնի եւ մարմնական [կարիքները]: Քանզի ինչպէս մարդկանց մօտ նախ տէրն է ուտում՝ սպասարկուելով ծառաներից, եւ ապա՝ ծառաները՝ տէրերի մնացորդներից, այնպէս էլ՝ մեր մէջ, քանի որ մարմինը ծառայական է, հոգին՝ տիրական, եւ մտքի կամքը՝ դատողական, պէտք է, որ դատողականը երկուսին էլ կարգի մէջ

պահի՝ նախ մարմնի սպասաւորութեամբ հոգին կերակրի հոգեւոր կերակուրներով եւ ապա հոգու իմաստութեամբ եւ տնօրինութեամբ մարմնական [կարիքները] հոգայ: Արդ, այսպիսի եւ նմանօրինակ բարեկարգութիւնների մէ՛ջ պահեցէք ձեր եղբայրութեան միաբանութիւնը:

Եւ դարձեալ՝ չլինի թէ կողմնակալ բարութեամբ սիրէք ոմանց՝ միւսներից առանձնացնելով, եւ ոմանց անտեսէք, ոմանց պէտք եղածից աւելին տաք եւ միւսներին՝ անհրաժեշտ բաներով իսկ չբաւարարէք, այլ, ըստ սուրբ Բարսեղի կանոնադրութեան, սէրը պէտք է լինի ամենքի հանդէպ, իսկ պատիւը՝ արժանաւորների:

Կերակուրների բաշխումը եւս պէտք է լինի իւրաքանչիւրին ըստ աշխատանքի՝ շատ կամ քիչ: Ծերերին եւ տկարներին մի՛ անտեսէք որպէս ներկայիս անօգտակար [տարրերի], որպէսզի Տէրը չբարկանայ, քանզի նրանք իրենց երիտասարդութեան ժամանակն ու կորովը Եկեղեցու ծառայութեանն են նուիրաբերել: Քանզի եթէ օտարների տկարներին, ինչպէս նաեւ թշնամիներին Քրիստոս հրամայում է խնամել եւ ողորմել՝ սպառնալով պատժել չանողներին, որքան աւելին պէտք է արուի եղբայրների եւ Եկեղեցու անդամների համար: Ուստի առաքեալի հրամանով պատուեցէ՛ք ծերերին եւ հո՛գ տարէք նրանց մասին [տե՛ս Ա Թես. Ե 12] եւ խնամէ՛ք տկարներին՝ ձեր կարողութեան չափով հսկելով եւ նրանց պէտքերը հոգալով: Գիտենք, որ այսպիսի բարեկարգութիւնների խափանման պատճառը ժամանակիս աղքատութիւնն է, բայց Աստուած մեզանից աւելին չէ, որ պահանջում է, այլ՝ կամքի յօժարութիւնն ու հնարաւորը:



Կենդանի միաբանների կամ մահացածների յիշատակի համար Եկեղեցի եկած նուէրը առաջնորդը միայն իրեն թող չսեփականացնի, այլ այն գործածի Եկեղեցու պէտքերի համար: Դրանով թող Եկեղեցու միջոցով հոգեւոր պարտքերը հատուցի, որպէսզի արդար Դատաստանի Օրը իւրաքանչիւրն իր տուածը չպահանջի, այլ որպէսզի, հատուցելիք չունենալով, իր կատարած բարեգործութեան դիմաց [վարձք] ստանայ:

Եթէ նախկին առաջնորդն իր օրօք ստացածը Եկեղեցու ծախսերի համար է վատնել՝ ստոյգ վկայութեամբ, եւ մահուան օրհասի կանխելու պատճառով չի հասցրել պարտքերը հատուցել, երկրորդը, որը նրանից յետոյ ժառանգում է եղբայրութեան առաջնորդութիւնը, պարտաւոր է վճարել եւ եթէ անտեսի, ապա Քրիստոսի առջեւ տոկոսով պիտի վճարի: Իսկ եթէ ոչ ոք չվկայի վերցրածի՝ Եկեղեցու պէտքերի համար գործածած լինելը, վերցնողը հանդերձեալում պիտի հատուցի:

Թող ոչ ոք, ինքնասիրութեան ախտով շարժուած, աւագներին կաշառելով, չափշտակի վանքի առաջնորդութիւնը, առանց տուեալ ժամանակի առաջնորդի քննութեան եւ հրամանի: Քանզի վանքերի առաջնորդներին փոխելու երկու իրաւացի պատճառ կայ. կա՛մ Աստուծոյ օրէնքներից դուրս անարժան գործեր կատարելը, որոնք պէտք է ճշմարիտ վկաներով հաստատուեն, կա՛մ Եկեղեցու ոչ թէ շինութեան, այլ աւերման պատճառ լինելը: Եւ առանց այսպիսի պատճառների եթէ մէկը յանդգնում է հակառակը կատարել, մեղանչում է Աստուծոյ օրէնքների դէմ:

Եւ ինչ որ սուրբ հայրերի կողմից մի անգամ կանոնադրուել է առաջնորդների համար որպէս խրատ եւ ուղ-

ղութիւն՝ խօսելու, գործելու եւ վանական ամէն տեսակ բարեկարգութիւնների համար, այդ բոլոր բարիքների տիպարը եւ օրինակը ջանացէ՛ք ձեր անձերի վրայ դրոշմել: Եւ եթէ չհասցնենք ամբողջը կատարել բարի ժամանակների ձմեռ լինելու պատճառով, գոնէ մեծ մասը գործով կատարեցէ՛ք, պակասի հանդէպ կամքի յօժարութի՛ւն ցոյց տուէք եւ զղջո՛ւմ ու տրտմութիւն՝ թերացումի համար: Քանզի եթէ ձեր միտքն այսպիսի բաների մէջ հաստատէք, բարու հակառակորդ չարը տեղ չի կարող գտնել ձեր հոգիներում:

Ուստի եւ մենք աղաչում ենք Տիրոջը, որ յաջողութիւն տայ առաջնորդներիդ եւ առաջնորդուողներիդ՝ երկնային ճանապարհով ընթանալու մեզ հետ, որպէսզի բոլորս էլ արժանի լինենք խոստացած բարիքներին, որոնք մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի մէջ են:



# ԱՇԽԱՐՀԻ ՄԷՋ ԳՏՆՈՒՈՂ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ, ՈՐՈՆՔ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԵՆ ԿՈՉՒՈՒՄ

Խօսենք նաեւ սուրբ եպիսկոպոսներիդ դասի հետ, որ Աստուծոյ կողմից տեսուչ էք կարգուած աշխարհի մէջ գտնուող հաւատացեալների հոգիներին: Եւ թէպէտ եւ առաջին հերթին վանականներին ուղղեցինք բարեկարգութեան մասին [մեր խօսքը] եւ յետո՛յ՝ ձեզ, սակայն ըստ աստիճանի առաջինը դուք էք:

Ամէն ինչից առաջ աղաչում եմ ձեզ, որ սթափուէք եւ իմաստութեամբ ճանաչէք ձեր աստիճանի բարձրութիւնը եւ դերը, թէ՝ որտեղի՞ց սկսուեց, ինչի՞ համար հաստատուեց, եւ ի՞նչ հրամայեցին անել նրանք, ովքեր այն հաստատեցին: Քանզի երբ մէկն այս ամէնն իմանայ, ինչպէս պէտք է, այս երեքից մէկը կշահի. կամ՝ ճանաչելով սրա ծանրութիւնը եւ դժուարակրութիւնը եւ գիտենալով իր տկարութիւնը՝ որպէս դիւրին եւ հեշտալի բաների յօժարութեամբ չի դիմում, այլ հրաժարւում է, թէեւ բռնադատուի իր մտքի ախտերից կամ մերձաւորներից, ինչպէս որ առաջին սրբերն արեցին եւ սովորեցրեցին, կամ՝ եթէ յանձն է առնում, ջանում է Աստծուն հաճելի կերպով վարել գործի տնտեսութիւնը, կամ՝ երբ չի կատարում արժանին՝ ճանաչելով իր մէջ բարու պակասն ու վնասը, խղճմտանքով դատում է իր անձը՝ իրեն յանցաւոր ճանաչելով:

Արդ, ասենք, թէ որտեղից սկսուեց [եպիսկոպոսութիւնը]: Եպիսկոպոսութիւնը սկիզբ առաւ, ըստ Մելքիսեդեկի կարգի, Նրանից, Ով քահանայապետութիւնը երդումով վերցրեց Հօրից՝ ոչ ըստ Իր Աստուածութեան, այլ՝ մարդկու-

թեան, ոչ թէ կենդանիներից պատարագներ մատուցելով՝ ըստ Ահարոնեան քահանայութեան, այլ Խաչի վրայ Իր անձը մատուցեց որպէս կամաւոր պատարագ Հօրը՝ մեզ հետ հաշտեցնելու համար: Եւ նոյն այդ քահանայապետութիւնը, որը Նա Հօրից ընդունեց, որպէսզի, խաչի մահուամբ մեռնելով, Իր արիւնով գնի մարդկանց, երկինք համբարձուելիս Իր աշակերտներին շնորհեց՝ ըստ Ղուկասի Աւետարանի, թէ՝ «Դրեց ձեռքը նրանց վրայ, օրհնեց նրանց եւ ապա երկինք էր վերանում» [տե՛ս Ղուկ. ԻԴ 50]: Նոյն օրինակը պահանջեց նաեւ նրանցից՝ ասելով, թէ՝ ինչպէս Ես քահանայութիւնս ընդունեցի մարդկանց համար՝ ո՛չ հեշտութեամբ, այլ՝ չարչարանքով ու մահուամբ, նմանապէս դո՛ւք էլ մահու չափ նահատակուեցէք հօտիս ոչխարների համար, որ Իմ արեամբ գնեցի: Եւ նրանք գործեցին՝ ըստ հրամանի մեռնելով այն ժողովրդի համար, որ Տէրն իրենց վստահեց:

Եւ երբ Քրիստոսի առաքեալները պատրաստւում էին աշխարհից ելնել, այնտեղի հաւատացեալներից երկիւղածների եւ իմաստունների ընտրելով՝ իրենց փոխարէն ժողովուրդի գլուխ նշանակեցին քաղաքներում եւ գաւառներում, որոնց եւ եպիսկոպոս անուանեցին, որ թարգմանւում է տեսուչ: Այս ասացինք այն բանի մասին, թէ որտեղից սկսուեց:

Պէտք է գիտենալ նաեւ այն, թէ ի՞նչ նպատակով Քրիստոսի եւ Իր առաքեալների կողմից հաստատուեց եպիսկոպոսական պաշտօնը: Յայտնի է, որպէսզի քահանաներին եւ ժողովրդին գլուխ եւ հրամանատար լինեն, որպէս տեսուչ մտքի աննիրհ աչքերով բոլորի վրայ հսկեն, խոտորուածներին ուղղեն եւ ուղիղներին իրենց ուղղութեան մէջ հաստատուն պահեն:



Եւ թէ եպիսկոպոսը ինչպիսին պէտք է լինի կամ ինչ պէտք է անի, Պօղոսը դա ցոյց է տալիս Տիմոթէոսին՝ գրելով, թէ՝ «Եպիսկոպոսը պէտք է լինի անարատ՝ որպէս Աստուծոյ տնտես, հեզ, ցածր, պարկեշտ, հիւրասէր, բարեսէր, արդար, սուրբ, ժուժկալ, ո՛չ արծաթասէր, ո՛չ կռուող, ո՛չ խփող, այլ՝ հանդարտ» [տե՛ս Ա ՏԻՄ. Գ 2] եւ տակաւին ուրիշ բաներ:

Անարատ ասելով՝ պատուիրում է մաքուր լինել հոգու եւ մարմնի ամէն տեսակ արատներից: Իսկ որպէս Աստուծոյ տնտես՝ հետեւեալն է յայտնում. եթէ մարդիկ իրենց նիւթական գոյքի վրայ անարատ մարդկանց են ընտրում որպէս տնտես, այսինքն՝ մէկին, որն աւազակօրէն չգողանայ, չծուլանայ գոյքերը խնամելու եւ պահելու մէջ, որքա՜ն աւելի անարատ, արթուն եւ զգոյշ պէտք է լինեն Աստուծոյ տան տնտեսները, որ սուրբ եկեղեցին է: Նիւթական եկեղեցու մասին չէ, որ խօսում եմ, այլ՝ մարդկանց հոգիների, որոնք կենդանի Աստուծոյ տաճարներ են: Աստուծոյ տնտեսը պէտք է իր ամբողջ զօրութեամբ անխախտ պահի աստուածաբնակ այդ տաճարների կառոյցը եւ թոյլ չտայ, որ իր ծուլութեան պատճառով սատանան հոգեւոր այդ գանձերից գողանայ՝ ո՛չ իրենը եւ ո՛չ էլ նրանցը, որոնց տնտեսութեան գործն է ստանձնել, նաեւ տէրունական հրամանով ամէն օր ճիշտ ժամին խօսքի կերակուրը մատակարարի նրանց [տե՛ս Մատթ. ԻԴ 45]:

Հեզ, ցածր, պարկեշտ. հեզութեամբ յիշեցնում է նմանուել Մովսէսին եւ Դաւթին, որոնք հնում Իսրայէլի ժողովրդի հովիւներն էին, եւ նոր հովիւներս նոյնպէս պէտք է հեզութեամբ եւ հանդարտութեամբ հովուենք այս ժողովըր-

դին, ինչպես հովիւները՝ հօտին, եւ ոչ թէ՝ գոռոզութեամբ եւ բռնութեամբ, ինչպես աշխարհի իշխանները:

Ցածր ասելով՝ խոնարհութիւն է ուսուցանում, քանզի վայել չէ եպիսկոպոսին հպարտ եւ գոռոզ լինել հաւատացեալ ժողովրդի նկատմամբ, ինչպես բռնաւորների գործակալները, այլ հեզութեամբ եւ խոնարհութեամբ վարուել ամենքի հետ, ինչպես Քրիստոսն ինքն է օրինակ տալիս՝ ասելով. «Սովորեցէ՛ք ինձանից, որ հեզ եմ եւ սրտով խոնարհ» [Մատթ. ԺԲ 29]: Եւ դարձեալ՝ ցոյց տալով խոնարհութեան օգուտը եւ հպարտութեան վնասը՝ ասում է. «Ով իր անձը բարձրացնում է, պիտի խոնարհուի, եւ ով իր անձը խոնարհեցնում է, պիտի բարձրանայ» [Մատթ. ԻԳ 12]: Եւ Պօղոսն էլ, Տիմոթէոսին զգուշացնելով եպիսկոպոսութեան աստիճանի չկոչել հոգով եւ մարմնով անկատարներին, ասում է. «Պէտք չէ, որ լինի նորադարձ, որպէսզի հպարտանալով չընկնի սատանայական վիճակուած դատաստանի մէջ» [տե՛ս Ա Տիմ. Գ 6], քանզի սատանան, Արարիչ Աստուծոյ դէմ հպարտանալով, երկնքից ընկաւ եւ դատապարտուած է յաւիտենական դատաստանին եւ մշտնջենաւոր տանջանքներին: Ահա՛ թէ ինչու է հրամայում խոնարհ լինել, որպէսզի, նոյն ախտից բռնուելով, նրա դատաստանին եւ պատժին կցորդ չլինեն:

Պարկեշտ. պարկեշտ անունը թէեւ մէկն է, բայց հոգու եւ մարմնի բոլոր շարժումներին է համապատասխանում. չլինել շատախօս, ուտելու, խմելու եւ հագնուելու մէջ աշխարհականներին չնմանուել, այլ՝ նրանց, որոնց համար խաչուած է աշխարհը: Նաեւ ճամփորդութեան ժամանակ զարդարուած եւ աչքի ընկնող ձիերի կամ ջորիների վրայ չբարձրանալ, այլ պատահած գրաստով գոհանալ, այն էլ՝ յոգնած մարմինը կրելու համար միայն: Ինչպես լսում ենք, ոմանք սրընթաց ձիերով արշաւանքներ են անում եւ որսի շներով ու բազէներով վայրի երէներ եւ թռչուններ են հալածում: Այս բանն այնքան է պատշաճ եպիսկոպոսի զգեստը կրողին, որքան կրօնաւորին՝ գլխին քուրիթայի փոխարէն կարմիր գդակ կրելը եւ մազեղէն հանդերձի փոխարէն՝ բեհեզեայ զգեստ: Եւ կերակուրներն ու ըմպելիքները յաճախակի եւ անկարգօրէն չլինեն, այլ՝ պարկեշտութեամբ եւ չափաւորութեամբ՝ ըստ աստուածաշնչեան խրատի [տե՛ս Եփես. Ե 4]: Եւ անմտաբար խեղկատակի կամ գռեհիկ խօսքեր [չարտաբերել] եւ ոչ էլ անարգել որեւէ մէկին՝ լեզուն յեղյեղելով անամօթ եւ նուաստացուցիչ խօսքերով, այլ սրտից բարի խօսքեր բխեցնել՝ ըստ մարգարէի [տե՛ս Սաղմ. ԽԴ 1], որպէսզի լսողներին առաջեալի պէս օգուտ եւ շնորհ տան եւ ոչ թէ՝ վնաս կամ տաղտկութիւն՝ պատճառ լինելով, որ առաքելական աստիճանն աղարտուի:

Հիւրասէր՝ Աբրահամի, Ղովտի եւ միւս նահապետների պէս, որոնք հիւրասիրութեամբ այնքան հաճոյ եղան Աստծուն, որ մինչեւ իսկ Աստծուն հրեշտակների հետ միասին ընդունեցին եւ պատուասիրեցին: Եւ չի ասում՝ հիւրընկալ, այլ՝ հիւրասէր, քանզի հիւրընկալութիւնը երբեմն անհրաժեշտաբար է լինում՝ կա՛մ բռնութիւնից, կա՛մ հիւրասիրողներից պատիւ, գովասանք եւ փառք որսալու համար: Իսկ սիրով ընդունելութիւնը զերծ է այս բոլորից, որով ուրախութեամբ է ընդունում եկած հիւրին եւ ոչ՝ տրտմութեամբ, իրեն զուարթ է ցոյց տալիս եւ ոչ՝ խոժոռ ու տխուր, դժկամութեամբ չի խօսում, այլ՝ ուրախ ու զուարթ, որ հիւրերի համար աւելի հաճելի է լինում, քան կերակուրները: Ահա այս պատճառով առաքեալը բոլոր եպիսկոպոսներին, քա-

հանաներին եւ բոլոր քրիստոնեաներին պատուիրում է ոչ միայն հիւրընկալ, այլեւ հիւրասէր լինել:

Բարեսէր. եւ որո՞նք են բարիքները, որ հրամայում է սիրել. [անշուշտ], ոչ թէ կարծեցեալ բարիքները, որոնք մարմնական կամ հոգեկան բարիքներ են եւ աշխարհի նիւթեր, այլ՝ ճշմարիտ բարիքները, որոնցից առաջինն է՝ սիրել Աստծուն, որ սկիզբն ու աղբիւրն է բարութեան: Երկրորդ՝ Նրա պատուիրանները, որոնք բխում են բարիքների աղբիւրից՝ Աստծուց՝ ըստ Դաւթի. «Սիրեցի Քո պատուիրանները ամենայն ոսկուց եւ տպազիոնից աւելի» [Սաղմ. ՃԺԹ 127]: Երրորդ՝ մարդկանցից լինող բարիքները: Իսկ բարու հակառակը՝ չարը, այսինքն՝ սատանային եւ նրանից սերմանուած մեղքերը, պէտք է ատել եւ հեռանալ՝ ըստ նոյն Դաւթի, թէ՝ «Մեղքերն ատեցի եւ անարգեցի եւ Քո օրէնքները սիրեցի» [տե՛ս Սաղմ. ՃԺԹ 163]: Նաեւ հարկ է ատել չարասէրին ու չզղջացողներին եւ հեռանալ նրանցից, որոնցից Տէրն է պատուիրում հրաժարուել եւ նրանց համարել հեթանոս ու մաքսաւոր, որոնք բազում անգամ խրատուելուց յետոյ եւս դարձի չեն գալիս [տե՛ս Մատթ. ԺԸ 15]:

Արդար. արդարութեան անունը մէկն է, բայց ովքեր ունեն այն, իրենց մէջ բովանդակում են բարու բոլոր տեսակները: Ինչպէս առաջին արդարները՝ Յոբը, Զաքարիան, Յովսէփը եւ ուրիշ շատերը, որոնք վկայուեցին Աստծուց, ըստ նրանց օրինակի՝ եպիսկոպոսն էլ, ասում է, Աստուծոյ եւ մարդկանց առջեւ պէտք է արդար եւ ճշմարիտ լինի եւ խօսքով ու գործով ստութիւնից եւ անիրաւութիւնից հեռու մնայ:

Սուրբ. առաջին՝ սուրբ է նա, ով մաքուր է հոգու հետ պատերազմող ամէն ախտից, ով սկզբից ո՛չ վէրքեր է ըն-



դունում եւ ո՛չ էլ՝ դեղերի կարօտում: Երկրորդ՝ սուրբ է նա, ով թէպէտ հարուածւում է մեղքերի նետերով, սակայն մինչեւ վերջ չի ենթարկւում թշնամուն, ախտերի հեշտանքին տեղի տալով՝ չի խոցոտում իր հոգին եւ դա, սովորութեան վերածելով, իր համար չի դարձնում երկրորդ բնութիւն, այլ մանաւանդ՝ անցեալի խոցուածները բժշկում է ապաշխարութեան դեղերով եւ առաջիկայում [սպասուողներից] զգուշանում է աղօթքի ու պահքի զէնքերով եւ զգայարանների պահպանութեամբ՝ սովորական նետերով վերստին չխոցուելու եւ դրանք այնքան ատելու, որ մինչեւ իսկ դրանց յիշատակումը ոչ թէ հեշտութիւն, այլ տրտմութիւն բերի մտքին:

Արդ, ով այս առաջինին կամ երկրորդին է պատկանում, նա է սուրբ եւ առաքելական այս աստիճանին՝ արժանաւոր: Իսկ նա, ով յօժարութեամբ է տեղի տալիս ախտերին եւ չի պատերազմում նրանց դէմ, այլեւ խնամքով չար խմորն իր մէջ է թաքցնում եւ միշտ խոցուած հոգով չի ատում խոցման պատճառները, այլ աւելի է սիրում, չի շտապում խոցուածները բժշկել, այլ օրըստօրէ նորոգում է վէրքերը, այնպիսին ո՛չ սուրբ է, ո՛չ սուրբ է ասւում եւ ո՛չ էլ Աստուծոյ ընտրութեամբ կանչւում է՝ աստուածային [գործերին] սպասաւորելու, այլ, իր ախտերից մղուած, օգտուելով Աստուծոյ ներողամտութիւնից, ձգտում է դրանց՝ ի կորուստ իր անձի եւ ուրիշ շատերի:

Ժուժկալ. ժուժկալութիւնը բոլոր առաքինութիւնների ամրութիւնն ու հիմքն է, քանզի նա, ով իր ներսում ժուժկալ է չարի նկատմամբ, բոլոր տեսակի բարիքներն իր մէջ է կրում, իսկ ով չունի սա, անհաստատ է բոլոր բարիքների մէջ, քանզի եթէ նոյնիսկ յօժարում եւ սկսում է բարին, այն

չի կատարում, ինչպէս նա, ով առանց խորհելու կամեցաւ աշտարակ շինել [տե՛ս Ղուկ. ԺԴ 28–31]:

Եւ այս է ժուժկալութեան սահմանումը. ժուժկալ լինել ամէն բանի մէջ, որոնցից աստուածային օրէնքները հրամայում են հրաժարուել: Ամենից առաջ մտքում տեղ չտալ վատթար խորհուրդներին, այլ ժուժկալութեամբ դիմադրել եւ սրտից հալածել դրանք, որպէսզի դրանց չհետեւի նաեւ կատարումը: Նոյն ժուժկալութիւնը պահապան պէտք է դնել եւ աչքերին՝ հեշտութեամբ չմղուելու անամօթ եւ չար նայուածքների, այլ անարատութեամբ նայելու Աստուծոյ արարածներին, ականջներին՝ յօժարութեամբ չունկնդրելու վնասակար խօսքերը, այլ՝ օգտակարները, լեզուին՝ չասելու այն խօսքերը, որոնք աշխարհիկներն են գործածում, ինչն անվայել է սուրբ աստիճանին, այլ՝ պիտանին եւ գովելին, սրտին՝ անտեղի չբարկանալու, այլ՝ հեզ լինելու, ձեռքերին՝ որեւէ մէկին անիրաւ կերպով չհարուածելու, այլ՝ բարիք վաստակելու եւ աղօթքի համար բարձրանալու, բերանին՝ կերակրին տարաժամ չմերձենալու, այլ՝ պահքով դաստիարակուելու, ոտքերին՝ հոգիները գայթակղեցնող շաւիղով չգնալու, այլ՝ արդարութեան ճանապարհով: Ով ժուժկալութիւն ունի, թոյլ չի տալիս, որ իր անդամներից որեւէ մէկը վատթարագոյն բաների մէջ շարժուի: Արդ, այս եւ նմաններն են ժուժկալութեան գործերը:

Ոչ արծաթասէր. արծաթասիրութիւնը, որը Պօղոսը կոչում է բոլոր չարիքների մայր [տե՛ս Ա Տիմ. Զ 19], թէպէտ վնասակար է ամէն գործում եւ ամէն մարդու՝ թագաւորների, դատաւորների, իշխանների, գործակալների եւ աշխարհում ամէն ապրողի, բայց առաւել՝ հոգեւոր առաջնորդների: Քանզի աշխարհիկ իշխանաւորներին մարմնական



վնաս է պատճառում անիրաւ դատի, զրկանքի, յափշտակութեան, զրպարտութեան, գողութեան, սպանութեան եւ կամ այլ այսպիսի միջոցներով, իսկ հոգեւորականների հոգիներն է վնասում: Քանզի այս ախտն է պատճառը, որ անարժաններն են հրաւիրում աստուածային [գործերի] սպասաւորութեան՝ ի կորուստ կոչողների եւ կոչուածների, եւ արժանաւորները՝ ետ մնում, պիղծերը սուրբ են համարւում, եւ սուրբերը՝ պիղծ, եւ այս պատճառով Եկեղեցում բազում խառնաշփոթութիւններ են լինում: Այդպիսիներն Աստուծոյ համար խոտելի են, որոնց մասին Սուրբ Հոգով Դաւիթն ասում է, թէ՝ «Կմերժուեն նրանք, ովքեր արծաթով են ընտրուած» [Սաղմ. Կէ 31]: Դրա համար էլ առաքեալը եպիսկոպոսներին պատուիրում է, թէ՝ մի՛ եղէք արծաթասէր, կռուող ու հարուածող, քանզի եթէ Քրիստոսի աշակերտ ես, մանաւանդ՝ փոխանորդը, ընդունի՛ր Նրա հեզութեան օրինակը, ինչպէս հրամայում է աշակերտներին. «Սովորեցէ՛ք Ինձանից, որ հեզ եմ եւ սրտով խոնարհ» [Մատթ. ԺԱ 29], որի մասին Եսային եւս ասում է. «Չի աղաղակի եւ չի վիճի» [Եսայ. ԽԲ 2], եւ Տէրն Ի՛նքն իսկ երանի է տալիս հեզերին եւ խաղաղարարներին [տե՛ս Մատթ. Ե 5–9]: Իսկ թէ պէտք չէ ամբողջութեամբ ներող եւ հեզ լինի առաջնորդը, այլ յանցաւորների հանդէպ խստութիւն գործադրի, դրա օրինակը եւս տալիս է, որ, խարազանն առնելով, վաճառականներին տաճարից դուրս հանեց [տե՛ս Յովհ. Բ 15], բայց ո՛չ՝ կարծր նիւթով, այլ՝ պարանով, որով խրատում է առաջնորդներին, որ ոչ միայն դառնութիւն գործադրեն յանցաւորների նկատմամբ, այլեւ քաղցրութիւն եւ ներողամտութիւն ունենան սաստելիս: Ուստի առաքեալն աւելացնում է, թէ՝ հանդա՛րտ եղիր. հանդարտութեան չափը մեզ սովորեց-

նում է տէրունական խրատը, որով մարդը ո՛չ միայն իրեն
այլեւ դիմացինին է հանդարտեցնում: Քանզի հրամայում է
մի երեսին ապտակ ստանալուց յետոյ երկրորդը դարձնել
անիրաւին, որով թէ նոյնիսկ գազանից էլ խիստ լինի նա
ոչխարից աւելի հանդարտ կդառնայ: Քրիստոսն Ինքն եւս
չէր աղաղակում եւ վիճաբանում, այլ որպէս ոչխար սպան-
դի էր տարւում՝ ըստ Եսայու: Նոյն նմանութիւնը պէտք է
Եկեղեցու առաջնորդներն իրենք ցուցաբերեն, բայց ո՛չ
ամենքի հանդէպ եւ ո՛չ՝ ամէն ժամանակ: Քանզի երբ անի-
րաւների արհամարհանքն իր անձին է ուղղուած, լաւ է
հանդարտութիւնը եւ վարձքի է արժանի, իսկ երբ տեսնում
է, որ աստուածային պատուիրանն է անզգամներից արհա-
մարհւում, նրանց հանդէպ ոչ թէ հանդարտութիւն, այլ բար-
կութիւն պիտի գործադրի՝ վառուելով Եղիայի բարի
նախանձով: Ինչպէս եւ Տէրը, երբ նախատալից խօսքեր էին
ուղղում Իրեն՝ դիւահար կոչելով, ներողամտութեամբ պա-
տասխանում էր. «Ինձանում դեւ չկայ» [Յովհ. Ը 49]: Իսկ
երբ Հօրը կամ Սուրբ Հոգուն էին նախատում, բարկանում
եւ վրէժխնդիր էր լինում, այսինքն՝ երբ նրանք, ովքեր սա-
տանայի գործերն էին կատարում, Աստծուն Հայր էին կո-
չում, ասում էր. «Դուք ձեր սատանայ հօրից էք» [Յովհ. Ը
44]: Եւ երբ նրանք Սուրբ Հոգու գործերը Բէեղզեբուղին՝
դեւերի իշխանին էին վերագրում, ասում էր. «Ով մարդու
Որդու դէմ բան ասի, կներուի նրան, բայց ով Սուրբ Հոգու
դէմ ասի, չի ներուի նրան» [Մատթ. ԺԲ 32]: Այս եւ այսպի-
սի օրինակներն են բարի եւ ըստ Աստուծոյ կամքի, որով
երբեմն պէտք է հանդարտ լինել, երբեմն՝ ոչ, եւ այս է, որ
առաքեալը հրամայում է եպիսկոպոսին ունենալ:



Աւելացնում է եւ այս. «Վարդապետութեան խօսքի վերակացու լինել» [տե՛ս Տիտոս Ա 9], այսինքն՝ ուսանել եւ գիտենալ եւ սպասաւորել աստուածային օրէնքների քարոզութեանը. նախ այս գործը ստանձնել եւ ապա նիւթական գործերը հոգալ, ինչպէս առաքեալներն արեցին եւ սովորեցրեցին: Քանզի ասում էին. «Մեզ վայել չէ Աստուծոյ խօսքը թողնել ու սեղանին ծառայել» [Գործք Զ 2], թէպէտ այդ սեղանն աղքատների սպասաւորութեան համար էր եւ ոչ՝ իրենց անձերի, բայց քանզի աղքատների մարմինը կերակրելը նուազ բարիք էին համարում, քան բարիքներից աղքատացած հոգիները հոգեւոր կերակուրով, այսինքն՝ վարդապետութեան խօսքով, կերակրելը, այս պատճառով Ստեփանոսին եւ իր ընկերներին կարգեցին ժողովուրդին սպասարկող, իսկ իրենք Աստուծոյ խօսքն էին քարոզում [տե՛ս Գործք Զ 5]: Եւ ա՛յս է հրամայում եպիսկոպոսներին՝ վարդապետութեան խօսքի վերակացու լինել եւ ողջամիտներին, այսինքն՝ հաւատքի հիւանդութիւն չունեցողներին, մխիթարել: Ովքեր առաքելական աթոռն են ժառանգում, պարտաւոր են առաքեալների գործն էլ ստանձնել, ինչպէս նրանց հետեւող եղան մեր առաջին սուրբ հայրերը: Եւ եթէ եպիսկոպոսութեան աստիճան ունեցողները վարժ չեն վարդապետական խօսքի մէջ, իրենց մօտ պէտք է ունենան այնպիսի անձանց, ովքեր օժտուած են աստուածային այս շնորհով, որպէսզի իւրաքանչիւր ժամ Աստուծոյ խօսքի կերակուրը տան ծառայակիցներին:

«Եւ հակառակողներին,— ասում է,— կշտամբել» [Տիտոս Ա 9]: Առաքեալը սրանով առաջնորդների վարդապետութեան խօսքի վերակացութեան երկու գործերն է նշում. առաջին՝ ծառայակիցներին կերակրելն ըստ աւետարանա-

կան պատուիրանի եւ երկրորդ՝ աստուածային գիտութեամբ լռեցնելը ճշմարտութեան թշնամիներին, որոնք հակառակում են հաւատքի խօսքին, Աստուծոյ օրէնքներին եւ Եկեղեցու աւանդութիւններին, որպէսզի իրենց պատիր խօսքերով ժողովրդից պարզամիտներին չտանեն կորստեան խորխորատը: Սրանով [առաջնորդների գործը] նմանւում է ընտանի գազանների կրկնակի գործին, որոնք վայրի գազաններին են հալածում եւ հովիւի հօտը արթուն պահում:

Արդ, Քրիստոսից առաջին եպիսկոպոսութեան գործը ստացողները՝ առաքեալների դասերը, այսպէս արեցին եւ նոյն կերպ վարուել սովորեցրեցին իրենց հետեւողներին: Իսկ ներկայ թշուառ ժամանակում այնքան ենք հեռացել նրանց բարի նմանութիւնից, որ եպիսկոպոսութեան գործը ստանձնել ցանկացողների միակ նպատակն է զանազան հնարքներով հարստութիւն հաւաքել հաւատացեալներից եւ փառք որսալ փառաւորողներից, որն անարգանք է պետք կոչել եւ ոչ թէ՝ փառք: Քանզի ճշմարիտ փառքը բարի գործերով Աստուծոյ անուան փառաւորութեան պատճառ լինելն է՝ ըստ Տիրոջ պատուիրանի, թէ՝ «Տեսնեն ձեր բարի գործերն ու փառաւորեն ձեր Հօրը, որ երկնքում է» [Մատթ. Ե 16]: Իսկ անձի համար մարդկանցից փառք փնտրելը ոչ միայն հակառակ է Աստուծոյ փառքին, ինչպէս ասաց Տէրը ոմանց մասին, թէ՝ «Մարդկանց փառքն աւելի սիրեցին, քան Աստուծոյ փառքը» [Յովհ. ԺԲ 43], այլեւ պատճառ է դառնում, որ առերես գովողներն իսկ իրենց անարգեն որպէս ախտաւորի, երբ տեսնում են նրանց՝ ցանկութեամբ գովասանքի եւ փառքի հետամուտ լինելը:



Էլ չեմ ասում այսօրուայ եպիսկոպոսների առաւել դժընդակ գործերի մասին, որոնք այլազգիների կողմից բազմաթիւ անարգանքներ ու տոյժեր են կրում՝ ոչ թէ՝ ինչպէս առաջին սուրբերը, ի սէր աստուածային օրէնքների, ինչը երանութեան արժանի պիտի լինէր, այլ՝ սնոտի փառքերի ակնկալութիւնից: Եւ զանազան հնարքներով ու բռնութեամբ հաւատացեալներից յափշտակած ու կորզած դրամը, որը հարկ էր գործածել Եկեղեցու պայծառութեան եւ աղքատների կարիքների համար, մաքսաւորների պէս հաւաքում են եւ նուիրում մեր աշխարհի բռնակալներին: Եւ նրանց կողմից բռնադատուելով չէ, որ անում են այս, քանզի մեր իսկ ազգից սկսուեց այս չարագործութիւնը եւ այլազգիներին ծանուցուեց աներկիւղ ու փառամոլ անձանց կողմից, որոնք, միմեանց գերազանցելով, դեռեւս բազմացնում են Քրիստոսի եկեղեցիների վրայ եղած տուրքերը, կարծես եկեղեցին մաքսատուն կամ ներկատուն լինի: Այդպիսիներին, որպէս Աստուծոյ դէմ մեղանչողների, մեղքերի թողութիւն չկայ:

Այս վատթար գործը Եկեղեցի ներմուծողները եւ նրանք, ովքեր, հոգեւոր պատճառներով հայրապետների կողմից աթոռազուրկ լինելով, այլազգիների բռնութեամբ եւ տուրքերի յաւելումով դարձեալ ձգտում են յափշտակել եպիսկոպոսութիւնը, ոչ միայն քահանայապետութեան արժանի չեն, այլեւ՝ քրիստոնէական հաւատքին ու կարգին, ո՛չ օրինաւոր քահանայական թաղման եւ ո՛չ էլ սուրբ Պատարագի մէջ յիշուելուն:

Ինչ ասել այս չարիքների մօր մասին, ճշմարտութեանն ու սուրբ Լուսաւորչի աթոռին յայտնապէս հակառակուողների մասին, որոնք ոչ թէ օրէնքի պահանջած ձեւով,

Աստուծոյ եւ ազգիս բոլոր Աստուծոյ այրերի ընտրութեամբ, այլ, իրենց ախտերից դրդուած եւ աշխարհի բռնակալների հրամանով, իրենք իրենց այս հոգեւոր աստիճանին են բարձրացնում, որով Քրիստոսի անդամներին բիւր նեխութիւն եւ ապականութիւն են պատճառում: Քանզի եթէ Սուրբ Հոգու շնորհներն Ահարոնի գլխին են իջնում, որ հայրապետութիւնն է, եւ գլխից՝ մօրուքին, որ եպիսկոպոսութիւնն է, մօրուքից՝ գրապանակներին, որ քահանայութիւնն է, եւ գրապանակներից՝ զգեստին, որ ժողովուրդն է [տե՛ս Սաղ. ՃԼԲ 2], արդ, ո՞ր շնորհի իւղը կարող են ունենալ նրանք, ովքեր օտարացած են ահարոնեան գլխից եւ իրենց գործով միացած են Դադանին եւ Աբիրոնին [տե՛ս Թիւք ԺԶ], որոնք հակառակ կանգնեցին մեծն Մովսէսին եւ Ահարոնին, կամ նրանք, ովքեր, կամակորութեամբ բաժանուելով եւ հեռանալով շնորհից, զրկուեցին նրանից, ինչպէ՞ս կարող են իրենց կորցրածն ուրիշներին ընձեռել:

Այսպիսի յանդգնութեան համար է, որ մեր տէր եւ եղբայր սուրբ Գրիգոր կաթողիկոսի ժամանակ, սուրբ լերան վրայ, հայ ազգիս սուրբ եւ առաքինի այրերի մեծ ժողովում աւելի քան երկու հազար հինգ հարիւր եպիսկոպոսներ, վարդապետներ, վանական հայրեր եւ սուրբ լերան ճգնաւորներ նզովելով հերքեցին եւ, Աստուծոյ խօսքի սրով կըտրելով, Քրիստոսի Եկեղեցուց դուրս արեցին այդպիսիներին որպէս Եկեղեցու առողջ մարմնի նեխած եւ փտած անդամներ՝ ցաւագին անէծքներ կուտելով նրանց գլխին: Ովքեր [սակայն], չսթափուելով եւ չզգալով հոգիների մահացու ցաւերը, իմաստուն դեղատուից չվերցրեցին կեանքի դեղը եւ զղջումով ու ապաշխարութեամբ չբուժուեցին մահահամբոյր պատուհասից: Այլ, իժի եւ քարբի նման խցանելով



իրենց ականջները աստուածային խօսքի հանդէպ, դեռեւս յամառելով բորբոքւում են նոյն չարութեամբ, փառամոլ ախտով արբած ու յիմարացած՝ կատաղի գազանների նման չեն դադարում խռովութիւն մտցնել փեսայացեալ Բանի երկնաւոր հարսնարանի խաղաղ առագաստը, որը Նա, Իր արեամբ գնելով, ազատեց բանսարկուի չար մշակներից: Նրանց արիւնն իրենց գլխին լինի, եւ իրենց չար գործերի վրէժը թող իրենք անձամբ կրեն:

Սակայն դուք, որ ճշմարտութեան ջատագովներն էք եւ նոյն բարիքներին հետեւողները, աղաչում եմ, որ ձեր բոլոր զգայարաններով հանդերձ, ըստ վերոգրեալ յորդորի եւ ըստ սուրբ առաքեալների եւ նրանց հետեւորդների կանոնական խրատի, լիովին պատրաստ լինէք հոգեւոր հովուութեան ձեր գործին, որը ճշմարիտ Հովուապետից ստացաք: Որպէսզի համարձակ եւ պարզերես ներկայանաք Նրան, Ով պատուիրանի տաղանդը ձեզ աւանդեց՝ կրկնապատիկ յաւելումով ներկայացնելով ձեր շահերի հաշիւը: Եւ Նրանից լսէք երանաւէտ բարբառը, թէ՝ «Բարի եւ հաւատարի՛մ ծառայ, որովհետեւ քչի մէջ հաւատարիմ ես, շատի վրայ կկարգեմ քեզ, մտի՛ր քո Տիրոջ ուրախութեան մէջ» [տե՛ս Մատթ. ԻԵ 21], որին մենք էլ արժանանանք ձեր աղօթքներով ի Տէր մեր Յիսուս Քրիստոս:

# ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ԴԱՍԻՆ

Այսուհետեւ մեր խօսքը պիտի ուղղենք քահանաներիդ դասին, որ աստիճանով եպիսկոպոսների յաջորդն էք եւ քահանայական ձեր պաշտօնով սահմանուած էք բոլոր հոգիներին Աստծուն նուիրելու համար՝ սուրբ Աւազանի մկրտութեամբ ծնելով բոլոր մարդկանց որպէս երկնաւոր Հօր որդեգիրներ եւ Քրիստոս Աստուծոյ ժառանգակիցներ, ինչպէս նաեւ՝ Տիրոջ մեղսաքաւիչ Մարմնի եւ Արեան բաշխումով կերակրելու նրանց հոգիները անմահութեան համար:

Արդ, Քրիստոսի սիրով աղաչում եմ բոլորիդ, որպէսզի բաց անէք ձեր մտքի աչքերը, արթնանաք այս կենցաղի մահաբեր թմրութիւնից եւ ճանաչէք զօրութիւնը ձեր երկնաւոր գործի, որին հրաւիրուեցիք, եւ որը հրեշտակային գերաշխարհիկ զօրութիւններից աւելի վեր է նրանց համար, ովքեր անարատութեամբ եւ սրբութեամբ են կատարում այն:

Եւ քանի որ արժանի եղաք ձեր անձերը երկնային գործին նուիրելու, թոյլ մի՛ տուէք, որ ինչ–ինչ պատճառներով արատաւորուի ձեր պաշտօնը՝ ըստ առաքեալի խրատի [տե՛ս Կորնթ. Զ 3], այլ արիաբար եւ յօժարամիտ սրտով, առանց ծուլութեան, ամէն ժամին համապատասխան սուրբ Հայրերի սահմանած աղօթքները անթերի՛ կատարեցէք եւ մաքուր հոգով, սուրբ սրտով, անարատ հաւատքով, մեծ յոյսով, պարզ մտքով, կատարեալ սիրով, ահով եւ դողով սպասաւորեցէ՛ք աստուածային խորհուրդին, խողովակի հոսող ջրի պէս անմտաբար մի՛ անցէք աղօթքի սրբազան խօսքերի միջով, որոնք մատուցում էք՝ սաղմոսերգութիւն լինի, թէ՝ Սուրբ Գրքի ընթերցում կամ ժամերգութեան, ինչպէս նաեւ՝ սուրբ Պատարագի եւ այլ սահմանուած կանոնների քահանայական աղօթքներ, այլ՝ յոյժ ուշադիր, եւ եթէ կարելի է, արցունքով ու մեծ երկիւղով, որպէս թէ նոր էք բխեցնում դրանք ձեր սրտից ու մտքից, որովհետեւ դրանք Աստծուն ուղղուած խնդրանքներ են եւ [պատճառ]՝ Նրա կողմից [տրուող] զանազան ու պէս–պէս պարգեւների եւ բարիքների: Եւ Ինքը՝ բարեաց պարգեւատուն՝ Աստուած, երբ տեսնի խնդրողի ջերմեռանդ աղաչանքը, աւելի առատութեամբ կշնորհի խնդրածը՝ ըստ այնմ, թէ՝ «Ով խնդրում է՝ ստանում է» եւ սրան յաջորդող խօսքերը [տե՛ս Մատթ. է 8–11]:

Իմացէ՛ք, որ սկզբում, առաքեալների ժամանակ, երբ նոր ծաղկեց հաւատքի գարունը, բոլորը լեցուն էին Սուրբ Հոգով եւ Հոգու շնորհքով ըստ ժամանակի անհրաժեշտութեան իրենց մտքից էին ասում պատարագի խորհուրդի եւ բոլոր արարողութիւնների աղօթքների խօսքերը, իսկ հետագայ ժամանակներում, քանզի մեղքի ձմեռը պատրաստւում էր խիստ սառնամանիքով սառեցնել բոլորի սիրոյ բորբոքումն առ Աստուած եւ բթացնել նրանց Սուրբ Հոգու շնորհքից, ուստի Եկեղեցու սուրբ եւ հոգեկիր վարդապետները, հոգու աչքերով այս բոլորը տեսնելով, ամէն բան գրաւոր աւանդեցին իրենցից յետոյ եկողներին, որպէսզի, դրանցով անվրէպ եւ անսայթաք առաջնորդուելով, կատարենք Եկեղեցու բոլոր կարգաւորութիւնները: Ահա թէ ինչու ուշադիր, մեծ հաւատքով ու յոյսով պէտք է մատուցել աղօթքը:

Մ՛յս էլ իմացէք, որ քահանայութեան ձեր անուան կոչումը մարդկանցից չէ, ոչ էլ՝ մարդու միջոցով, այլ՝ Նրանից, որ Քահանայ կոչուեց ըստ Մելքիսեդեկի կարգի, որ

Ինքն իսկ ճշմարիտ Քահանայ է, Քահանայապետ եւ Պատարագ՝ Հայր Աստուծոյ: Նա տուեց ձեզ Իր անուան կոչումը՝ միաժամանակ յանձնարարելով Իր գործը՝ հովուել Իր ժողովրդին, միշտ բարի գործեր սովորեցնել, ինքն իրենով բարի օրինակ տալ բոլորին, որի մասին էլ Պօղոսը գրում էր Տիմոթէոսին. «Ջանց մի՛ առ այն շնորհը, որ քո մէջ է, որ տրուեց քեզ մարգարէութեամբ, երէցների ձեռնադրութեամբ» [Ա Տիմ. Դ 14], դարձեալ՝ «Այն քահանաները, որոնք լաւ վերակացու են, կրկնակի պատուի արժանի թող լինեն, որ տքնում են խօսքով եւ վարդապետութեամբ» [տե՛ս Ա Տիմ. Ե 17]: Ուստի աղաչում եմ, որ ըստ ձեր անուան կոչումի նաեւ կատարէք ձեր գործը եւ, որպէս ձեր ժողովրդի հայրեր եւ ծնողներ, ամէն ժամ հոգեւոր խրատնե՛ր տաք նրանց եկեղեցում, հրապարակներում եւ տանը, իւրաքանչիւրին ըստ տարիքի զգուշացնելով եւ յորդորելով՝ միշտ սովորեցնել աստուածայինը:

Թէպէտ եւ ամէն տեսակ բարիքներով եւ առաքինութեամբ կատարեալ լինէք, սակայն անփոյթ մի՛ գտնուէք Եկեղեցու պայծառութեան եւ սուրբ Պատարագի պատուական եւ մաքուր զգեստների հանդէպ, ինչպէս լսում ենք ոմանց մասին, թէ հասարակ զգեստներով եւ աղտոտ տրեխներով են բարձրանում սուրբ բեմ եւ ոչ խորհրդական զգեստներով կատարում սահմռկեցուցիչ խորհուրդը եւ սա իրենց անձերի համար պարկեշտութիւն են համարում՝ ժողովրդին եկեղեցուց դուրս հանելով, դուռը նրանց երեսին փակելով, եւ ոչ միայն՝ այս, այլեւ անմտաբար բամբասում են մի շարք եկեղեցիների եւ մեզ մօտ տիրող բարեզարդ կարգաւորութեան մասին:



Արդ, թող ոչ ոք անիմաստ եւ անխորհուրդ չհամարի քահանայական զգեստը, քանզի ինչպէս Հին [Կտակարանում], Մովսէսի օրօք, սուրբ Պատարագի խորհուրդը նախ օրինակներով յայտնուեց եւ Նորում Քրիստոսով իր աւարտին հասաւ, նոյնպէս էլ Հին Կտակարանի քահանաները Նոր Կտակարանի քահանայութեան տիպարներն էին, եւ Ահարոնի պատմուճանն էլ նոր քահանաներիս զգեստների օրինակն է: Առաքեալները Սուրբ Հոգու գործակցութեամբ կատարելապէս զարդարեցին Եկեղեցու միաբանական կարգը եւ ամէն տեղ քահանաներ եւ սարկաւագներ ձեռնադրեցին՝ պատուիրելով, որ ներքին եւ արտաքին մաքրութեամբ սպասաւորեն փրկական խորհրդին, որի շնորհիւ ամբողջ աշխարհում քրիստոնեայ բոլոր ազգերի եկեղեցիները մեծազարդ պայծառութեամբ զարդարուեցին՝ պայծառազգեստ վայելչութեամբ սպասաւորելու սրբութիւններին, առաւելապէս՝ հայ ազգի եկեղեցիները՝ սկսած մեր սուրբ Լուսաւորչից մինչեւ Հայաստան աշխարհի հիմնովին աւերումը:

Բայց առաջին սուրբ հայրերի այս բարի աւանդութիւններին հակառակուելու պատճառը ոչ այլ ինչ է, եթէ ոչ՝ շատ անհատների տգիտութիւնն ու անձնահաճ կամապաշտութիւնը, որոնք չտեսան [Եկեղեցու] նախկին պայծառութիւնը, երբ երկիրը լի էր Տիրոջ ողորմութեամբ, այլ [տեսան] միայն ժամանակի հալածանքներից ծնուած խրթնատեսակ տգեղութիւնները, որոնցով մեր ազգը ամէնուրեք գամուած է աղքատութեան՝ երկաթեայ շղթաներով օտարների ծառայութեան լծի ներքոյ, եւ չի կարող Եկեղեցու պայծառութեան մասին մտածել, երբ այնքան կարիք ունի անհրաժեշտ պէտքերի, երբ իր հոգին ամենեւին անշարժ է բարիքների մէջ, որովհետեւ ցամաքել է սէրը՝ ըստ տէրունական խօսքի

[տե՛ս Մատթ. ԻԴ 12]: Մինչդեռ, առաջին դարերի հալածանքների ժամանակ նորադարձ քրիստոնեաների մէջ այնքան էր զօրանում Աստուծոյ սէրը, որ հալածանքների մէջ աւելի վայելուչ եկեղեցիներ էին շինում, քան այն ժամանակ, երբ Եկեղեցին խաղաղութիւն էր վայելում:

Արդ, ո՞ր իմաստակը, աղքատութիւնից, աւերումներից եւ Աստուծոյ բարկութիւնից ծնուած այս խաւար անկարգութիւնը աւանդութիւն եւ օրէնք կարծելով, կյանդգնի հակառակել աստուածաւանդ հրամաններին:

Սակայն մենք, մի կողմ թողնելով հակառակորդների անիմաստ վէճերը, Աստուծոյ օրէնքներին հնազանդ եղողներիդ այս խնդրի շուրջ մեր ասածին աւելացնում ենք նաեւ այս պատուիրանը. քահանաները հրաման չունեն Աստծուց եւ մեզանից՝ առանց Պատարագամատոյցում նշուած սուրբ հանդերձներով զգեստաւորուելու մատուցել սուրբ Պատարագը կամ Աւետարան կարդալ կամ ձեռքը Խաչ վերցնել կամ այլ սրբութիւնների մերձենալ: Եւ այս, որոնց մասին համառօտակի գրեցինք, եւ սրանց նմանները զգուշացումներ են արտաքին մարդու համար, որը պատրաստում է աստուածային սպասաւորութեան:

Խօսենք նաեւ ներքին մարդու մասին, որի հոգեւոր պայծառութեամբ է զարդարւում նաեւ արտաքին մարդը: Թող ձեզանից ոչ ոք անարժանութեամբ աստուածային խորհուրդին չսպասաւորի կամ ժողովրդից որեւէ մէկին առանց քննելու հաղորդութիւն չտայ, որպէսզի Յուդայի եւ [Տիրոջը] խաչողների հետ չդատապարտուի:

Ոչ ոք առանց ճշմարիտ խոստովանութեան, ծածկելով մեղքի գործերն իր հոգում, տէրունական խորհուրդի սպասաւորութեանը թող չմօտենայ, որպէսզի Աստուծոյ բարկու-



թիւնը չշարժի իր եւ աշխարհի վրայ եւ դուրս չգցուի աստուածային Հարսանիքից՝ խաւարատեսակ մեղքերի պատմուճանով Աստուծոյ եկեղեցին մտնելու համար, որ երկնային հարսնարանի խորհրդանշանն է, ուր եւ պիտի լսի ահաւոր խօսքերը. «Ընկե՛ր, ինչպէ՞ս այստեղ մտար, երբ հարսանեաց հանդերձ չունէիր» եւ՝ «Դրան դո՛ւրս հանէք» [տե՛ս Մատթ. ԻԲ 12—14], այսինքն՝ արքայութիւնից, նաեւ՝ «Հեռացրէ՛ք դրան մեզանից», այսինքն՝ հաւատը եւ սուրբ Աւազանի եւ քահանայութեան շնորհները հեռացրէ՛ք [դրանից], եւ դրա մասը ոչ թէ հաւատացեալների, այլ անհաւատների հետ լինի: Քանզի չհաւատաց, որ Աստուծոյ Մարմնին եւ Արեանն է սպասաւորում, այլ լոկ հաց եւ գինի համարելով, անարժանօրէն եւ առանց խոստովանութեան յանդգնեց մօտենալ:

Արդ, աղաչում ենք՝ երկնային խորհուրդի կատարումը մարմնական գործ մի՛ համարէք, այլ ահով եւ դողո՛վ սպասաւորէք աստուածային [խորհուրդին], քանզի, օրինակ, եթէ սուրբ սերովբէն ունելիի կարիք ունէր սեղանի վրայ կայծակներին մօտենալու համար [տե՛ս Եսայ. Զ 6], ապա որքան աւելի մենք՝ հողեղեններս ու մեղաւորներս, պարտաւոր ենք մաքուր եւ զգոյշ լինել նմանօրինակ ճշմարտութեանը մերձենալիս: Հետեւաբար, սուրբ խորհուրդի սպասաւորներդ ամէն տեսակ վնասակար բաների դէմ միշտ պէտք է պարըսպէք ձեր միտքն ու զգայարանները, առաւելապէս՝ այն օրը, երբ Աստծուն պիտի մօտենաք: Քանզի եթէ Աստուած Մովսէսին պատուիրեց, որ մեռած մորթերից [կօշիկներով] չկոխի այն տեղը, ուր երեւաց աստուածային հուրը, որքա՜ն աւելի մենք պէտք է նախ՝ մեր միջից սրբենք մեղքի մեռելութիւնը եւ ապա՝ մօտենանք աստուածային խորհրդին,

քանի որ ոչ միայն Մովսէսի նման պիտի խօսենք Աստուծոյ հետ կամ ետեւից տեսնենք Աստուծուն [Ել. ԼԳ 22–23], այլեւ՝ ձեռքով շօշափենք Անշօշափելին, շրթունքներով համբուրենք Սէրը, բերանով ճաշակենք բոլորի Կերակրիչին, մեր սրտերի մէջ ընդունենք ու հոգով միանանք Նրան եւ շնորհքի միջոցով աստուած լինենք՝ Աստուծոյ հետ միաւորուելով: Հետեւաբար, ձեր աչքերը, ականջները, լեզուն եւ բոլոր անդամները կրթեցէ՛ք ի բարին շարժուելու եւ չարի հանդէպ անշարժ մնալու համար եւ ձեր միտքը ողջախոհութեամբ եւ սրբութեամբ աշխարհիկ ցանկութիւններից եւ զբօսանքներից հեռու պահելուց յետո՛յ միայն մօտեցէք երկնային խորհրդի սպասաւորութեանը, որպէսզի չլինի այնպէս, որ ի դատապարտութիւն ձեր անձի ուտէք եւ ըմպէք Տիրոջ Մարմինն ու Արիւնը՝ ըստ առաքեալի [տե՛ս Ա Կոր. ԺԱ 29], այլ՝ ձեր եւ ձեր ժողովուրդի մեղքերի քաւութեան եւ հոգիների մաքրութեան համար:

Չլինի թէ [նմանուէք] քաղաքաբնակ մի շարք աներկիւղ քահանաների, որոնց մասին, ինչպէս լսում ենք, առաւօտանից մինչեւ պատարագի ժամը քաղաքի վաճառափողոցներով են շրջում եւ առեւտրով զբաղւում, ուր անպատշաճ բաներ տեսնելով, լսելով, խօսելով եւ գործելով՝ բազմաթիւ նետեր, զգայարանների միջոցով ներս թափանցելով, խոցոտում են նրանց հոգիները, եւ, այնտեղից վերադառնալով, յանդգնում են եկեղեցի մտնել եւ ուրիշ քահանաների պատրաստած նշխարով, առանց սաղմոսի եւ աղօթքի, պատարագ մատուցել: Այդպիսիներին պատուիրում ենք, որ այսուհետեւ հեռու մնան այդպիսի աներկիւղ եւ չար սովորութիւններից եւ, ըստ վերոգրեալի, նախ մաքրեն իրենց միտքը գիշերային եւ առաւօտեան



աղօթքներով եւ ապա՛ մտնեն սուրբ եկեղեցի սուրբ Պատարագի միջոցով Աստուծոյ առջեւ կանգնելու համար:

Քահանաներից ոչ ոք, առանց մարդու հաւատքի եւ գործերի խոստովանութիւնը լսելու՝ լինի անձամբ իր մօտ, թէ՝ մէկ ուրիշ քահանայի, Քրիստոսի Մարմնի եւ Արեան հաղորդութիւնը թող չտայ՝ ո՛չ առողջ, ո՛չ հիւանդ լինելու դէպքում, եւ կամ, գիտենալով հանդերձ մէկի անարժանութիւնը, մարդահաճոյ լինելու համար չտայ աստուածային խորհուրդը՝ դրանով իսկ ծածկելով նրա մասին չար կարծիքը, քանզի այնպիսին է, որ շներին է տալիս սրբութիւնը եւ խոզերի առջեւ նետում մարգարիտը [տե՛ս Մատթ. Է 6]:

Պատարագիչ քահանաներից ոչ ոք, որեւէ մէկի հանդէպ սրտում ոխ ունենալով, թող չմօտենայ կատարելու աստուածային խորհուրդը՝ անընդունելի դարձնելով պատարագը Աստուծոյ առջեւ, այլ Քրիստոսի պատուիրանի համաձայն նախ պէտք է հաշտուի՛ եղբօր հետ եւ ապա՛ գայ ու մատուցի պատարագը [տե՛ս Մատթ. Ե 24]: Նոյն ձեւով էլ պէտք է մօտենան նաեւ հաղորդուողները, սակայն այս օրէնքը համապատիւ եղբայրների համար է. քահանաները՝ քահանաների, եւ աշխարհականները՝ աշխարհականների: Իսկ եթէ քահանան ժողովրդից մէկին Աստուծոյ օրէնքների հանդէպ պատուիրանազանց լինելու համար բանադրի, եւ նա հպարտանալով դարձի չգայ եւ թողութիւն չխնդրի այն քահանայից, քահանան առանց խղճմտանքի թող մատուցի սուրբ Պատարագը, իսկ դատապարտութեան տակ կմնայ նա, ով չուղղուեց եւ թողութիւն չխնդրեց, քանզի Քրիստոս էլ չի պատուիրում զուր տեղը թողութիւն տալ տրտմեցնողին, այլ, եթէ ծունկի գալով խոստովանի ապաշխարել, միայն այն ժամանակ, ասում է, թողութիւն շնորհիր քո

հանդէպ գործած յանցանքներին: Իսկ եթէ մեղանչողը քահանայի առջեւ ընկնի եւ խոստովանի դարձի գալ, եւ քահանան մարմնական ինչ–ինչ պատճառներով ոխակալ լինի եւ թողութիւն չտայ, նախքան հաշտուելը չպէտք է պատարագ մատուցի:

Քահանաների մօտ եւս սատանան բազում պատճառներ է ստեղծում իրար հետ կռուելու, վիճաբանելու համար եւ ոխակալութեան ու նախանձի ախտերով միշտ տանջում է նրանց հոգին, ինչն աւելի է սաստկանում տգէտների եւ գազանաբարոների մօտ. ոմանք՝ ժողովրդից յափշտակելու ագահութեան ախտով, միւսները՝ փառասիրութիւնից ընկերոջը հարստահարելով, եւ դեռեւս ատելութեան բազմաթիւ այլ պատճառներով նրանցից լուծարւում է սիրոյ պատուիրանը եւ Քրիստոսի աշակերտութեան նշանը, որոնց համար ասաց. «Եթէ դուք միմեանց սիրէք, դրանով բոլորը պիտի իմանան, որ դուք Իմ աշակերտներն էք» [Յովհ. ԺԳ 35]: Այդպիսիներին մենք եւս առաքելական պատուիրանն ենք աւանդում. «Արեգակը ձեր բարկութեան վրայ թող մայր չմտնի, եւ սատանային տեղի մի՛ տուէք» [Եփես. Դ 26], այսինքն՝ խաղաղութիւնը, որ Քրիստոս տուեց աշակերտներին եւ նրանցով՝ մեզ, խռովարարը եթէ փութայ հանել ձեր միջից եւ իր խռովութիւնը խաղաղութեան փոխարէն սերմանի ձեր մէջ, տեղ մի՛ տուէք նրան՝ երկար ժամանակով ձեր հոգում բնակուելու, որպէսզի ձեր մէջ եղած Աստուծոյ տաճարը ատելութեամբ եւ ոխակալութեամբ չարին բնակարան չդարձնէք: Այլ երբ չարի քամին բոցավառի բարկութեան բոցի բորբոքումը, հանգցրէ՛ք այն Հոգու խաղաղարար ջրով՝ նախքան արեգակի մայր մտնելը, որպէսզի խաղաղասիրութեամբ Աստուծոյ որդիներ լինէք՝ երանութեան խոս-



տումի համաձայն [տե՛ս Մատթ. Ե 9], ջանասիրաբար կատարելով Աստուծոյ Որդու ճշմարիտ գործը ձեր մէջ, որ խաղաղութիւն հաստատեց երկնքի եւ երկրի վրայ՝ խաչի վրայ [թափած] Իր արիւնով:

Իսկ եթէ ընկերոջից խռոված մի քահանայ ատելութիւնը նախընտրի սիրուց եւ խռովութիւնը՝ խաղաղութիւնից եւ չլուծի տրտմութեան պատճառը ու չհաշտուի իր եղբօր հետ, երբ վերջինը խոնարհուելով հաշտութիւն խնդրի, այդպիսին թող չհամարձակուի քահանայութիւն անել այնքան ժամանակ, քանի դեռ տրտմութեան եւ բարկութեան դեւը իր մէջ է բնակեցնում, որովհետեւ՝ «Ի՞նչ ընդհանրութիւն լոյսի՝ խաւարի հետ,— ասում է առաքեալը,— ի՞նչ միաբանութիւն Քրիստոսի՝ Բելիարի հետ» [Բ Կոր. Զ 14]: Քանզի ինչպէս գրուած է, թէ՝ «Ով ունի սէրը, իր մէջ Աստծուն է բնակեցնում, քանզի Աստուած սէր է» [տե՛ս Ա Յովհ. Դ 16], նոյնպէս նա, ով ատելութիւն ունի, սատանային է իր մէջ սնուցում, որովհետեւ ատելութիւնն ու բոլոր չար գործերը նրա կերակուրներն են: Հետեւաբար, քանի դեռ ձեզանից մէկն իր մէջ ատելութեան ախտով աւելի ընդարձակ տեղ տայ սատանային, Քրիստոսի Մարմնի եւ Արեան բնակութեան արժանի չէ, եւ եթէ ոխակալ ու նենգ հոգով յանդգնի Նրան ընդունել, մատնիչ Յուդայի նման կլինի, որի մէջ սատանան մտաւ պատառը վերցնելուց յետոյ [տե՛ս Յովհ. ԺԳ 27]:

Արդ, աղաչում եմ բոլորիդ, որ դժուարաշարժ լինէք վիճաբանութեան ու կռուի մէջ եւ դիւրաշարժ՝ հաշտութեան եւ խաղաղութեան մէջ: Եւ ոչ ոք, որ մարմնական զարգացման մէջ զօրաւոր է, չջանայ զրկել եւ անիրաւել ընկերոջը, որպէսզի չլինի այնպէս, որ իր վրայ դատաւոր եւ դատա-

խազ կանգնեցնի Աստծուն, որ զրկուածների իրաւունքն է պահանջում. եւ ինչի մէջ զրկեց այս անցաւոր կեանքում, անանցի մէջ վերադիրով կհատուցի:

Նրանք, ովքեր աւագ են եւ իմաստութեամբ՝ հաստատուն, ներողամտութեամբ եւ համբերութեամբ թող սիրաշահեն կրտսերներին ու տկարամիտներին, որով եղբայրաշահութեան համար Աստծուց վարձք կստանաք: Իսկ կրտսերներին պատուիրում ենք, որ խոնարհ եւ հնազանդ լինեն աւագների եւ իմաստուն քահանաների նկատմամբ եւ, նման բարեկարգութեան մէջ լինելով, պատճառ կլինեք, որ դրսիններն Աստծուն փառաւորեն, իսկ ժողովուրդը բարիքի նախանձաւոր լինի: Իսկ եթէ ձեզ միմեանց հետ վէճի, հակառակաբանութեան եւ հայհոյութիւնների մէջ տեսնեն, որոնց մէջ են շատերը, մանաւանդ՝ ըստ երեւոյթին բոլորը՝ բացառութեամբ քչերի, ձեր պատճառով դրսից տեսնողները Աստուծոյ անունը կհայհոյեն, ձեր ժողովուրդը աւելի կխոտորուի Աստուծոյ պատուիրաններից, եւ ձեր պատճառով աստուածային օրէնքների ուղիղ ճանապարհից շեղուողների դատաստանի պատիժը դուք պիտի կրէք:

Ձեզանից ոչ ոք թող տգիտութեան կուրութիւնը չնախընտրի քահանայական ուսումից ծուլութեան կամ աշխարհիկ զբաղմունքների պատճառով, թէեւ հնարաւոր չէ, որ բոլորը ամէն տեսակ շնորհքներով կատարեալ լինեն, ինչն աստուածային օրէնքն էլ է պահանջում քահանաներից, սակայն անհրաժեշտ բաների մէջ պէտք է անթերի լինել, այսինքն՝ եկեղեցական գրքերը ճիշտ կարդալ, երաժշտական մանր ուսմունքները եկեղեցիներում լաւապէս կատարել եւ ապա գալ քահանայական ձեռնադրութեան: Բայց որոշ սուտ քահանաների մասին լսում ենք, որ ոչ միայն այլ կըր-



թութեան մէջ են տգէտ ծուլութեան, եւ դեռ աւելին՝ անհաւատութեան պատճառով, այլեւ Դաւթի սաղմոսները կատարել չգիտեն, առանց որի՝ Աստուծոյ հետ հարիւր յիսուն փոխ բերանացի խօսելով, սուրբ հայրերի կանոնական աւանդութեամբ Պատարագ չի մատուցւի: Իսկ ոմանք սուրբ Պատարագի աղօթքի խօսքերն անգամ անգիր չգիտեն եւ, մարդկանց աչքին կեղծելով, սուտ պատարագով փորձում են խաբել անխաբելի Աստծուն, մարդկանց եւ ննջեցեալների հոգիներին: Այդպիսիների դատաստանը Աստուծոյ առջեւ բոլոր մեղքերից աւելի է. նրանք այլեւ արժանի չեն Պատարագ մատուցելու, նոյնիսկ եթէ յանդիմանութիւնից յետոյ անգիր սովորեն: Բայց եթէ կամենան իրենց հոգիները դատապարտութիւնից փրկել մեծ ապաշխարութեամբ, թերեւս քաւեն Աստուծոյ առջեւ իրենց մեղքերը:

Քահանաներից ոչ ոք զուր տեղը եւ առանց մեծ զգուշութեան սուրբ Մկրտութիւն թող չկատարի՝ իբրեւ ինչ—որ աշխարհիկ գործ համարելով, եւ աստուածային խօսքերին ծիծաղաշարժ ու կատակի խօսքեր չխառնի, ինչպէս լսում ենք մի շարք տգէտների եւ աներկիւղների մասին, որպէսզի դա պատճառ չլինի, որ իրենք դատապարտուեն, եւ անմեղ երեխաներն էլ Սուրբ Հոգու շնորհները թերի ստանան: Այլ սուրբ Պատարագի նման երկիւղո՛վ կատարեցէք սուրբ Մկրտութեան խորհուրդի պաշտամունքը, Աստուածաշունչի խօսքերի ընթերցումներն ու բոլոր կանոնները: Եթէ այսպէս անէք, հաւատացէ՛ք, որ ինչպէս Սուրբ Հոգին Յորդանանի մէջ Իր Փառակցի վրայ իջաւ, նոյնպէս կիջնի ամէն ուղղափառ հաւատքով մկրտուողի վրայ եւ նրան շնորհքով կվերակոչի որդեգրութեան Հայր Աստծուն. եւ որպէս բնութեամբ

Իր Որդին, այնպէս էլ դուք գործակից ու սպասաւոր էք լինում Սուրբ Հոգու աստուածարար շնորհքին եւ մանաւանդ՝ իբրեւ մանկաբարձներ՝ Աստուծոյ որդիներին՝ ձեր ձեռքով կատարելով [խորհուրդը] եւ ընդունելով իրենց մօրից՝ Աւազանի ծոցից:

Քահանաներից ոչ ոք հաց ուտելուց յետոյ թող չհամարձակուի առողջ մանուկներ մկրտել, բացի մահուան վտանգից, այլ նախ Մկրտութեան խորհուրդը կատարի եւ ապա մատուցի սուրբ Պատարագը, որից եւ մկրտուածին հաղորդի: Եվ այնպէս չլինի, որ անհաւատ այրեր կամ կանայք, որոնք Քրիստոսի երկրպագուները չեն, մկրտուող մանուկներին կնքահայրութիւն անեն, որովհետեւ ինչպէ՞ս կարող են ուրիշին տալ այն, ինչ իրենք չունեն, այսինքն՝ Սուրբ Երրորդութեան խոստովանութիւնը, երբ քահանան մկրտուողի փոխարէն հաւատքի դաւանութիւն է պահանջում: Այս պատճառով թոյլ մի՛ տուէք տգէտ աշխարհականներին, որ մարմնական ընչասիրութեան համար դա անեն, եւ եթէ յանդգնեն՝ դուք յանձն մի՛ առէք մկրտել, որպէսզի թերի չլինի մկրտութեան կատարումը եւ ծիծաղելի չդարձնէք աստուածային մեծ խորհուրդը անհաւատների առջեւ, եւ եթէ հնարաւոր է, մկրտութեան պահին նրանցից ոչ մէկը չմօտենայ սուրբ Աւազանին, որպէսզի ճշմարտութեան հակառակորդների պատճառով Սուրբ Հոգին չհեռանայ մկրտուողներից:

Թող ոչ ոք, ըստ հարկի, դրամ չպահանջի մկրտութեան անգին շնորհի կամ մահամերձին հաղորդութիւն տալու համար: Նրանցից, ովքեր ունեն եւ սիրով տալիս են՝ որպէս Եկեղեցու նուէր, վերցրէ՛ք, իսկ նրանց, ովքեր աղքատ են, մի՛ բռնադատէք:



Խօսենք նաեւ այլազգիների մանուկներին մկրտելու մասին, որը հնուց եկող սովորութիւն է եւ հակառակ է Քրիստոսի պատուիրանին, որն ասում է. «Սրբութիւնը չտալ շներին» [տե՛ս Մատթ. է 6], ուստի պէտք է խափանել եւ ոչ թէ՝ արտօնել, քանզի ի՞նչ օգուտ տակաւին անխօս եւ կատարուածին անգիտակ՝ ուրիշի բերանով Քրիստոս խոստովանելն ու Նրան մկրտութեամբ հագնելը, երբ մեծանալուց յետոյ փոխանակ փառաբանիչ լինելու, ուրանալով Նրան, դարձեալ մերկանում եւ հայհոյում է աստուածային խորհուրդի տնօրինութիւնը՝ ըստ իրենց աղանդի: Ուստի աւելի մեծ դատաստանով պիտի դատուեն սուրբ Աւազանով իրենց մէջ նկարակերտուած տիրական պատկերը եղծելու համար, քան բոլորովին չդրոշմուածները: Բայց քանզի նրա մէջ բարու մի բաժին կայ, այսինքն՝ այդ մկրտուողներից շատերը, մանուկ հասակում մահանալով, ոչ թէ կորուսեալների, այլ փրկուածների հետ արժանանում են փրկութեան, եւ այդ քչերին, սատանայից յափշտակելով, խառնած կլինենք Քրիստոսի գնդին, հետեւաբար, արդար չենք համարում ամբողջութեամբ խափանել այդ սովորութիւնը: Սակայն այս կապակցութեամբ հետեւեալն ենք պատուիրում քահանաներին, որ ի սէր ագահութեան ախտի նրանց չյորդորէք կամ յօժարութեամբ չընդունէք, այլ այսպիսի բաները դժուարութեամբ եւ ստիպուա՛ծ կատարեցէք: Քանզի եթէ հաստատուն մնային իրենց հաւատքի մէջ, բարի էր ձեր յորդորը եւ յօժարութիւնը, սակայն մեր սուրբ Լուսաւորչի տեսիլքի համաձայն, մարմնով ազատողները, վերըս-

տին ջրի միջով անցնելիս, լուսակէզ ոչխարներից սեւ այծերի պիտի փոխուեն*, այդ պատճառով անօգուտ է նրանց համար եղած ջանքը, քանի որ շահը քիչ է, եւ վնասը՝ շատ:

Ձեզանից ոչ ոք թող ոչ մէկի գաղտնի չպսակի, այլ՝ եթէ ծնողներ ունի, եւ միասին են ապրում, նրանց գիտութեամբ եւ կամքով թող լինի, իսկ եթէ ծնողների հետ չի [ապրում], բոլորի ներկայութեամբ թող յայտնապէս դրուի պսակը, որպէսզի բոլորը վկայեն, թէ ուղիղ է եւ Աստուծոյ օրէնքներին՝ ո՛չ հակառակ: Երգերի եւ նուագարանների ձայներն էլ նոյնն են նշանակում, իբրեւ թէ՝ բոլորի ականջներն ու աչքերը վկայ են կանգնեցնում պսակուողներին: Իսկ գաղտնին, որը առանց վկայի է, հաստատ չէ, ոչ էլ՝ օրինաւոր, որից եւ պատուիրում ենք հրաժարուել եւ ագահութեան պատճառով չյանդգնել նման գործ կատարել:

Կնաթող այրերին եւ այրաթող կանանց թող ոչ ոք առանց կանոնական հրամանի չպսակի, որպէսզի ըստ կանոնի դուք չլուծարուէք քահանայական կարգից, եւ դրուած պսակն էլ քանդուի: Իսկ եթէ բռնանան եւ չբաժանուեն, պոռնիկ թող համարուեն:

Առեւանգման դէպքում պսակ չկատարէ՛ք, քանզի Աստուծոյ օրէնքներին հակառակ է եւ բիւր չարիքների պատճառ: Եւ շատ են նրանք, ովքեր, մոլեգին ախտերով սատանայից մղուած, կեղծ պսակից յետոյ, երբ յագենում են դիւական տռփանքից, մեծ ատելութեամբ բաժանւում են իրարից: Այդպիսիների պսակադիրները նոյնպէս մասնակից են լինում նրանց չարիքներին:

---

* Տե՛ս Ագաթանգեղոս ճԱ. Վենետիկ, 1830, էջ 552



Անմեղ տղաների եւս նրանց ժառանգութեան կամ մէկ այլ պատճառով թող որեւէ քահանայ չպսակի, քանզի դրանից բազում վնասներ եւ յետոյ իրարից բաժանուելու պատճառներ են լինում: Պսակուելու համար [ենթակաները] հասուն տարիք պէտք է ունենան. տղաները՝ 15—ը լրացրած, իսկ աղջիկները՝ 12—ը կամ աւելին, որպէսզի կարողանան բանականների նման հաճութեամբ զուգուել իրար հետ, եւ հաստատուն լինի նրանց զուգաւորումը, եւ ոչ թէ անբանների նման՝ առանց կամքի եւ յօժարութեան, անհաստատ եւ ժամանակաւոր պատահմունքի պէս: Այրը աւելի մեծ պէտք է լինի տարիքով, քան կինը, ինչպէս Աստուած նախ Ադամին ստեղծեց եւ ապա՝ Եւային:

Քահանաներից ոչ ոք թող բռնաւորների ստիպումով, առանց ամուսնու եւ կնոջ կամքի, պսակադրութիւն չկատարի, ինչպէս լսում ենք, թէ Հայաստանի կողմերում է լինում, որ այլազգիների իշխանութեան տակ է: Քանզի այդ պսակը անհաստատ է եւ լուծարքի ենթակայ: Թէեւ ակամայ է կատարուած, սակայն պսակադիրներն անպատիժ չեն մնայ, իսկ այդ անիրաւ գործում ջատագով լինելու համար բռնաւորներին կաշառողները առաւել դատապարտութեան եւ անէծքի են արժանի, քանզի Աստուծոյ օրէնքը եւ Եկեղեցու դատաստանը աշխատում են զօրեղների բռնութեամբ խափանել: Նման պսակի լուծարումն ազատ է խղճից, քանզի Աստուծոյ պատուիրանի համաձայն չէ, այլ՝ մարդկանց բռնութեամբ:

Արեան մերձաւորութիւն ունեցող ազգականների պսակը եւս թող ոչ ոք չօրհնի, եթէ երկու կողմերը չորրորդ սերնդի ամբողջութիւնը կատարելապէս չունեն: Թէ ի՞նչ

պատճառով սուրբ հայրերը չորս թիւը կանոնադրեցին որպէս ամուսնութեան սահման, ասենք, որպէսզի իմանաք:

Քանի որ մարմնի բնութիւնը կազմուած է չորս տարրերից, մարմնական ազգակցութիւնն էլ մինչեւ չորս թիւն է հասնում հետեւեալ կերպ. մէկ հօրից երկու եղբայր բաժանուելով հօր գոյացութիւնները հաւասարապէս իրենց մէջ ունեն, իսկ նրանց ծնունդները եղբայրութեան արեան կէսն ունեն. երրորդ ծնունդը, որ եղբայրների որդիներից է, մէկ երրորդը միայն ունի, իսկ սրանցից չորրորդ ծնունդը՝ մնացած արեան չորրորդ մասը: Ահա այս է արեան մերձաւորութեան սահմանակէտը: Եւ քանզի Աստուծոյ եւ աստուածայինների ողջ հոգածութիւնը մարդկանց միմեանց սիրելն է, դրա համար Սուրբ Հոգով օրինադրողները իրաւունք համարեցին, որ իրարից օտարացածները ամուսնութեան սիրոյ կապակցմամբ միանան, իսկ արեամբ մերձաւորներին բաւարար համարեցին, որ միմեանց նկատմամբ միայն համազգակցութեամբ սիրոյ հաղորդութիւն ունենան: Եւ այս է ազգականների ամուսնութիւնը թոյլ չտալու առաջին պատճառը: Կան նաեւ այլ պատճառներ, որոնք թողնում ենք իմաստուններին քննելու:

Արդ, երբ պսակը այսպիսի ընտրութեամբ Աստուծոյ օրէնքների համաձայն լինի, ինչպէս որ գրեցինք, քահանան թող այն միայն առաւօտից մինչեւ ճաշի ժամը կատարի եւ ոչ՝ այլ ժամանակ: Թոյլ մի՛ տուէք մտնել եկեղեցի կերած—խմած ու հարբած մէկի կամ անառակ կանանց եւ արանց, որոնք այլ ժամանակ արժանի չեն եկեղեցուն, որպէսզի նրանցով Աստուծոյ տաճարը չպղծուի, եւ օրհնութեան պսակը չաղտոտուի: Սուրբ Պսակի ժամանակ գուսանների



երգերը պէտք է դադարեն մինչեւ եկեղեցուց ելնելը, որպէսզի դիւական երգերը աստուածայինի հետ չխառնուեն:

Բուն բարեկենդանից մինչեւ Պենտեկոստէին յաջորդող շաբաթպահքի աւարտը քահանաներից ոչ մէկը տգէտօրէն որեւէ մէկին չպսակի, ոչ էլ՝ տարուայ բոլոր կիրակիներին, ինչպէս առաջին ս. հայրերը կանոնով հաստատեցին: Քանզի քառասնօրեայ պահքի օրերը Տիրոջ չարչարանքը խորհրդանշող սգոյ եւ տրտմութեան օրեր են եւ ոչ թէ՝ գինարբուքի եւ հարսանեկան ուրախութիւնների: Իսկ Յինունքը եւ կիրակիները օրինակն են երկնատր Փեսայի՝ Քրիստոսի եւ հարսի՝ Եկեղեցու հարսանիքի, որ լինելու է հանդերձեալում, երբ արդար մարդիկ պիտի խառնուեն հրեշտակների ինը դասերին: Այդ անունն իսկ՝ Յինունք, այդ է նշանակում, որով Տէրը բոլոր հաւատացեալներին էլ հարսանեաց առագաստի մանկունք անուանեց՝ հրամայելով պահք չբռնել այնքան ժամանակ, քանի դեռ Փեսային իրենց հետ ունեն, այսինքն՝ Նրա Յարութեան օրից մինչեւ Համբարձումը: Այս պատճառով ս. հայրերը պատշաճ չհամարեցին հոգեւոր հարսանիքը խորհրդանշող այդ օրերին, երբ ինչպէս Տէրն ասաց. «[Յարութեան ժամանակ] ոչ կին են առնում եւ ոչ՝ մարդու գնում» [Մատթ. ԻԲ 30], մարմնական հարսանիք կատարել, որն ախտաւոր է եւ ծննդական:

Հարսանիքի գնացող քահանաներին աւանդում ենք այս պատուիրանը. երկար մի՛ մնացէք աշխարհական գինարբու երիտասարդների հետ, այնտեղ, ուր դեգերելով շատ անգամ մեղանչում են անպատրաստները՝ անպատշաճ բաներ տեսնելով, լսելով եւ խօսելով, այլ երբ ճաշկերոյթը վերջանայ, երրորդ բաժակի ըմպումից յետոյ պէտք է անմիջապէս ելնէք սեղանից, որպէսզի գինեմոլների հետ չարբէք,

եւ դրսից դիտողները չծաղրեն ձեզ եւ մանաւանդ՝ ի դէմս ձեզ՝ բոլոր քահանաներին: Այսպիսին արբեցութեան մեղքը ծանրագոյն ապաշխարութեամբ քաւելուց յետոյ միայն վերստին արժանի լինի քահանայագործութեան:

Քահանաներից թող ոչ ոք սատանայական յանցանքով, որով նա հակառակուեց Աստծուն եւ կործանուեց, խօսքով կամ գործով չընդդիմանայ իր եպիսկոպոսին, ինչպէս Կորխը եւ Դադանը՝ Մովսէսին եւ Ահարոնին, որպէսզի նրանց նման չկործանուի Աստծուց. մանաւանդ նրանք, ովքեր յանդգնում են Եկեղեցու վրայ տուրք դնել կամ նախօրօք դրուածները աւելացնել, որպէսզի, այլազգիների բռնութեամբ եպիսկոպոսներին աթոռից արտաքսելով, լինեն ժողովրդի հրամանատար եւ նրանց փոխարէն՝ հարկատու՝ Աստուծոյ աններելի դատաստանին եւ անէծքի դատապարտութեանը ենթարկելով իրենք իրենց: Այսպիսիները արժանի չեն կեանքի օրօք քահանայագործելու, ոչ էլ մահուան ժամանակ՝ հաղորդութեան կամ քահանայական թաղման:

Դարձեալ՝ քահանաներից կամ ժողովրդից թող ոչ ոք Եկեղեցու դատաստանը այլազգի կամ քրիստոնեայ մարմնաւոր իշխանների մօտ չտանի, որպէսզի չդատապարտուի առաքելական կանոնական հրամաններից, ինչպէս գրում է Պօղոսը Կորնթացիներին. «Ձեզանից մէկը, եթէ մի խնդիր ունենայ իր ընկերոջ հետ, կհամարձակուի՞ դատուել անիրաւների առաջ եւ ոչ թէ՝ սուրբերի առաջ» [Ա Կոր. Զ 1]: Սուրբ հայրերն իրենց կանոնների մէջ հրամայում են քահանայութիւնից լուծարել նրան, ով դա կանի:

Դարձեալ՝ քահանաներից թող ոչ ոք քաղաքի կամ գիւղի հոգաբարձու չլինի կամ աշխարհական իշխանների գաւառապետ կամ հարկեր եւ սակեր գրող կամ զբաղուի



աշխարհիկ այլ գործակալութեամբ: Քանզի անկարելի է, ըստ տէրունական հրամանի, երկու հակառակ տէրերի ծառայել [տե՛ս Մատթ. Զ 24] եւ հաճոյ լինել, այսինքն՝ Աստուծոյ տանը, որ կենդանի Աստուծոյ Եկեղեցին է, եւ աշխարհականների տանը: Ուստի այնպիսին պէտք է մէկն ու մէկից հրաժարուի՝ կա՛մ աշխարհի հոգաբարձութիւնից, կա՛մ քահանայական գործից, իսկ եթէ աշխարհիկ հոգսերի հետ յանդգնի քահանայական պատիւը եւ ժողովրդի տեսչութիւնը ստանձնել, այդ բռնութեամբ է եւ ո՛չ՝ Աստուծոյ եւ մեր հրամանով, որով այդպիսին կրկնակի յանդգնութեան համար պիտի դատապարտուի:

Քահանաներից ոմանց մասին լսում ենք, թէ զինուորների նման ձիավարժութեամբ են զբաղւում ու զէնք կրում, նրանց հետ ձիարշաւների խրախճանքների ժամանակ մըրցում, երէների որսորդութեան, նետաձգութեան եւ այս կարգի այնպիսի բաների մասնակցում, ինչը վայել է զինուորներին եւ ոչ՝ Եկեղեցու սպասաւորներին, քանզի մեր զինուորութեան զէնքը մարմնաւոր չէ, ինչպէս ասում է առաքեալը, այլ՝ հոգեւոր եւ աստուածային, որով պատերազմում ենք ոչ թէ մարմնի եւ արեան, այլ՝ երկնքի ներքոյ գտնուող չար դեւերի իշխանութիւնների եւ պետութիւնների դէմ [տե՛ս Բ Կորնթ. Ժ 4]: Ուստի աղաչում ենք, որ այսուհետեւ հրաժարուէք այս անկարգ սովորութիւններից: Բայց եթէ հետիոտն կամ ձիով ճամփորդութիւնների ընթացքում պէտք լինի զէնք կրել՝ կարծեցեալ պատահարների վախից, պարկեշտութեամբ լինի այն եւ ոչ թէ ըստ զինուորական կարգի՝ կապարճով եւ սրի պատեանով: Այլ դէպքերում հոգեւորականներին վայել չէ զէնք կրել կամ ձիարշաւել երիտասարդների բարքերի նման՝ պատճառ դառնալով տեսնողների

բամբասանքին: Քանզի Պօղոսը խրատում է լոյսի զրահ հագնել [տե՛ս Հռոմ. ԺԳ 12], այսինքն՝ ուղիղ հաւատքը եւ բարի գործերը, եւ նրանցով կռուել մեր բնութեան թշնամու դէմ, [հետեւաբար] մեզ վայել չէ խաւարային այս զէնքերը կրել եւ նրանցով պատերազմել համազգի մարդկանց հետ կամ խոցոտել անբան կենդանիների բազմութիւնները եւ կամ սիգաքայլ ձիերով պարծենալ, բացի տկարութեան պարագայից, քանզի աստուածային պատուիրանները արգելում են մեզ այսպիսի եւ նմանօրինակ բաներ:

Որեւէ քահանայ, եթէ պատուիրանազանցութեան համար իր ժողովուրդից որեւէ մէկին բանադրի, եւ նա յամառելով նոյն յանցանքի մէջ մնայ ու դարձի չգայ, մէկ այլ քահանայ թող չհամարձակուի նրան ընդունել իր եկեղեցին, ինչպէս տգէտ քահանաներից ոմանք անում են այնպիսիներին սիրաշահելու համար: Ով որ դա անում է, թոյլ է տալիս նրան այն մեղքերից անդարձ մնալ, որով իր անձը կցորդ է դարձնում նրա յանցանքների պատուհասին: Նման պարագաներում հետեւեալ օրէնքը թող հաստատուի ձեր մէջ. որեւէ քահանայից մերժուածին բոլոր նրա քահանայակիցները նմանապէս իրենցից հեռացնեն, մինչեւ որ յանցաւորը զղջալով ետ դառնայ իր խոտոր ընթացքից, ծունկի իջած թողութիւն խնդրի եւ Աստծուն ուխտ անի ապաշխարել եւ այլեւս նոյն չար սովորութեան մէջ չընկնել: Երբ այս ձեւով թողութիւն ստանայ իր քահանայից, այն ժամանակ միւս քահանաներն էլ Աստուծոյ սիրով թող նրան ընդունեն: Ուղղութեան այս օրէնքը եպիսկոպոսութեան մէջ էլ թող հաստատուի, որպէսզի որեւէ եպիսկոպոսից բանադրուած քահանայի կամ որեւէ աշխարհականի մէկ այլ եպիսկոպոս իշխանութիւն չունենայ լուծարելու, բացի բանադրողից:

Այս մի պատուիրանը եւս աւանդում ենք աշխարհում ապրող ամուրի քահանաներին. երբ որեւէ երիտասարդ քահանայի կին մահանայ, եւ նա ուզենայ իր հոգին փրկել մեղքերից եւ բամբասանքներից եւ արժանաւորապէս սուրբ խորհուրդին սպասաւորել, կանոնական հրամանի համաձայն հրաժարուելով աշխարհից՝ կրօնաւորութեան կարգ թող մտնի, քանզի, աշխարհի մէջ սովորական ընտանութեամբ կանանց հետ տեսակցելով եւ խօսակցելով, մանաւանդ՝ քահանայական օրէնքի համաձայն նրանց խոստովանութիւնը ընդունելով, անհնար է, որ սրբութեամբ Աստծուն ծառայի: Եթէ կդժուարանայ նեղ ճամփով գնալ՝ լայնն ու ընդարձակը սիրելով, պէտք է դադարի սուրբ Պատարագի սպասաւորութիւնից, նոյնիսկ եթէ ակնյայտ վատաբանութեամբ չի բամբասւում, քանզի չի կարող երիտասարդ հասակում սրբութիւններին մաքուր կերպով սպասարկել, մանաւանդ նա, ով փոխանակ երկիւղածութեամբ, պարկեշտութեամբ, պահքով ու աղօթքով իր անձի համար զգուշանալու, աներկիւղ կերպով ինքն իրեն կերուխումի եւ սանձարձակ կեանքի է յանձնում: Իսկ նա, ով ծեր հասակում է իր կնոջը կորցնում եւ վստահ է լինում իր անձի վրայ, որ կարող է սրբութեամբ եւ անարատ վարքով եւ առանց բամբասանքի Աստծուն սպասաւորել, որպէսզի տեսնողների գովասանքին արժանանայ եւ ոչ՝ բամբասանքին, այդպիսին եկեղեցում թող մնայ, որքան կցանկանայ:

Արդ, ո՛չ իշխանաբար հրամայելով, այլ՝ որպէս ծառայակից աղաչելով՝ քահանաներիդ գրած մեր սակաւ խրատները բաւական ենք համարում, իսկ այն, ինչ պակաս է մեզ

մօտ, պէտք է կատարելապէս իմանաք առաջին հայրերի կանոնական գրքերից, որոնցով օրինադրեցին Եկեղեցու մանկանց՝ ի փառս Աստուծոյ:



## ԱՇԽԱՐՀԻ ԻՇԽԱՆՆԵՐԻՆ

Աստուածային պատուիրանների խրատը ուղղենք նաեւ ձեզ՝ աշխարհիկ կենցաղավարութիւն ունեցողներիդ: Նախ եւ առաջ՝ իշխաններիդ, որ մեր այս դժուար ժամանակներում տարբեր վայրերում տիրում էք զօրքերի եւ գաւառների վրայ՝ շատ, թէ՝ քիչ: Աղաչում եմ՝ անհնազանդ մի՛ եղէք Աստուծոյ օրէնքներին, այլ, ինչպէս դուք կցանկանայիք, որ ձեր ծառաները ձեր հրամանները հնազանդութեամբ եւ անթերի կատարեն, եւ ովքեր հրամայուածներից եթէ որեւէ բան անկատար թողնեն, կպատժուեն ձեր կողմից, նոյնպէս էլ դո՛ւք Տիրոջը ծառայեցէք երկիւղով եւ հնազանդութեամբ, քանզի բնութեամբ Աստուծոյ ծառաներ էք, որպէսզի իբրեւ Տիրոջ դէմ ապստամբածներ չպատժուէք, այլ որպէս մտերիմ ծառաներ պատիւ ընդունէք երկնաւոր Թագաւորից:

Արդ, առաջինը այս պատուիրանն ենք աւանդում ձեզ. անիրաւութեամբ մի՛ վարուէք հպատակների հետ՝ ծանր եւ դժուարակիր հարկեր դնելով, որոնք չեն կարող կրել, այլ իւրաքանչիւրին օրէնքով եւ ըստ իր կարողութեան չափի՛ դատէք. յիշէ՛ք, «որ դո՛ւք էլ Տէր ունէք երկնքում, եւ Նրա առջեւ աչառութիւն չկայ» [Եփես. Զ 9], ինչպէս ասում է առաքեալը :

Ոչ ոքի մի՛ զրկէք եւ մի՛ նեղէք աղքատներին ու տնանկներին, որպէսզի Աստուծոյ առջեւ չբողոքեն ձեր դէմ, եւ Աստուած էլ լսի նրանց բողոքը, ինչպէս Սողոմոն իմաստունն է ասում. «Աղքատին քեզ անիծելու պատճառ մի՛ տուր» [տե՛ս Առակ. Լ 10], որպէսզի Նրա Արարիչը, նրան լսելով, քեզ չարիքով չհատուցի:

Ձեր երկրի վրայ չար եւ անիրաւ գործավարներ եւ գաւառապետեր մի՛ նշանակէք, որպէսզի նրանց գործած անիրաւութիւնների պատճառով դուք էլ նրանց հետ չդատուէք Աստծուց. այլ մարդկանց վրայ գործավարութիւն անելու համար արդարամիտ ու արդարադատ մարդկա՛նց ընտրեցէք, որպէսզի արքունիքի սահմանած իրաւունքները չթողնեն վաստակաւորներին՝ մի փոքր կաշառքի փոխարէն զիջելով բազումը, կամ իրենք գողանան, եւ նրանց չնեղեն եւ հրամայուածից աւելի գանձեն, քանզի երկուսն էլ անիրաւութիւն են Աստուծոյ համար: Այլ այնպիսի իրաւադատ լինեն, որ կայսրինը տան կայսրին եւ Աստծունը՝ Աստծուն [Մատթ. ԻԲ 21]:

Անիրաւութեամբ մի՛ դատէք որեւէ մէկին, այլ ուղիղ դատաստա՛ն արէք, որպէսզի Աստուած էլ ձեզ քաղցրութեամբ դատի եւ ոչ՝ խստութեամբ: Կաշառքը, կողմերից մէկին սիրելը, ատելութիւնն ու ոխակալութիւնը կամ որեւէ մէկից սպասուելիք պատիւը թող պատճառ չլինեն, որ դատի ժամանակ անիրաւին արդարացնէք եւ արդարի իրաւունքները խեղաթիւրէք, որպէսզի սրանց պատճառով ձեր հոգիները արժանի չլինեն Աստուծոյ օրէնքների անէծքին:

Մի՛ անտեսէք այրու եւ աղքատի իրաւունքները, երբ ձեր առջեւ բողոքեն իրենց զրկողներից, այլ որբի դատը տեսէ՛ք եւ այրու իրաւունքը տուէ՛ք, ինչպէս Աստուած է պատուիրում մարգարէի միջոցով [տե՛ս Եսայ. Ա 17]: Անսացէ՛ք նրանց աղաղակին, փրկեցէ՛ք նրանց իրենց կեղեքիչներից, անիրաւների կողմից նրանց յափշտակուած ինչքերը վերադարձրէ՛ք, եւ այն ժամանակ Աստուած էլ ձեր աղաչանքները կլսի եւ կկատարի ձեր սրտի խնդրածները:



Ձեր իշխանութեան ենթակայ մարդկանց մի՛ ծառայեցրէք անբան կենդանիների նման, որոնք բնութեամբ ծառայ են մարդկանց, եւ խիստ ու անտանելի գործեր մի՛ տուէք նրանց, ինչպէս փարաւոնն էր անում Իսրայէլի որդիներին, ոչ էլ առանց կերակրի՛ թողէք նրանց, այլ ներողամտութեամբ եւ քաղցրութեա՛մբ [վարուեցէք]: Աշխատաժամերը պակասեցրէ՛ք, առատ կերակուրներով գոհացրէ՛ք նրանց աշխատանքի ընթացքում եւ չափից աւելի մի՛ [ծանրաբեռնէք], որպէսզի կարենան իրենց վաստակով իրենց աղքատ տների եւ զաւակների կեանքն ապահովել եւ արքունական հարկերը վճարել:

Ձեր աշխատաւորների վարձը բռնութեամբ մի՛ կտրէք, որպէսզի չնմանուէք նրանց, որոնց առաքեալներն ու մարգարէները ամբաստանում են. «Ձեզանից զրկուածն աղաղակում է, եւ հնձողների աղաղակները հասան զօրութիւնների Տիրոջ ականջին» [Յակ. Ե 4]: Թող ձեզ բաւ լինի, որ նրանց վաստակով հարստանում էք եւ չափից աւելի փափկանում, քանզի նրանց բնութիւնը ձերինից տարբեր չէ, այլ նոյն կաւից եւ շաղախից էք ստեղծուած. նոյնն է տէրերի եւ ծառաների, հարուստների եւ աղքատների աշխարհ գալու սկիզբը եւ աշխարհից ելնելու վախճանը: Ամէնքն էլ զուգահաւասար ծննդեամբ են աշխարհ գալիս եւ մահով ելնում այստեղից: Իսկ հարստութիւնն ու աղքատութիւնը, բարձրութիւնն ու խոնարհութիւնը, բարեբախտութիւնն ու պանդխտութիւնը ծննդեան եւ մահուան միջեւ պատահող բաներ են, որոնք երազի են նմանւում, սա փորձով յայտնի է բոլորին՝ ե՛ւ իմաստունին, ե՛ւ տգէտին: Սրանցից ոչ մէկը հաստատ չէ: Ուստի անցաւոր այս կեանքի համար մի՛ կորցրէք յաւիտենական կեանքը: Քանզի թէեւ Քրիստոս ուղ-

տի՝ ասեղի ծակից անցնելու օրինակով ասաց, թէ հարուստները դժուարութեամբ երկնքի արքայութիւն պիտի մտնեն [տե՛ս Մատթ. ԺԹ 24], սակայն եթէ ձեր հարստութիւնը Աստուծոյ կամքի համաձայն գործածէք, դժուարինը ձեզ դիւրին կլինի: Աբրահամն էլ հարուստ էր, բայց ոչ միայն արքայութեան արժանացաւ, այլեւ նրա գիրկը Աստուծոյ արքայութիւն եղաւ եւ կոչուեց բոլոր արդարների օթեւան, նոյնպէս էլ՝ Յոբը եւ բոլոր արդար հարուստները, ինչպէս վկայում է Տէրը. «Կտեսնէք Աբրահամին, Իսահակին, Յակոբին եւ բոլոր մարգարէներին Աստուծոյ արքայութեան մէջ» [Ղուկ. ԺԳ 28]: Դո՛ւք էլ նրանց օրինակով արդարութեան ճանապարհով գնացէք, որովհետեւ նրանք ո՛չ նեղում էին, ո՛չ որեւէ մէկի ունեցուածքը յափշտակում, ո՛չ որեւէ մէկին անիրաւութիւն կամ նենգութիւն անում, այլ իրենց արդար վաստակով քաղցածներին կերակրում էին, մերկերին՝ հագցնում, հիւրերին՝ ընդունում, կարօտեալների պէտքերը հոգում, նեղեալներին՝ մխիթարում եւ տկարներին՝ զօրացնում, աղքատներին եւ տնանկներին ոչ միայն չէին նեղում, այլեւ փրկում էին իրենց կեղեքիչներից: Եւ ինչպէս որ նրանց մարմնաւոր փարթամութիւնը արգելք եւ խոչընդոտ չեղաւ՝ երկնքի արքայութիւնը ժառանգելու, նոյնպէս էլ ձեր հարստութիւնը ձեզ չարիքի պատճառ չի լինի, եթէ նրանց պէս արդարութեամբ վարէք այն, այլ մանաւանդ՝ առիթ կլինի բարիքի՝ ըստ [Սողոմոն] Իմաստունի, որ ասում է. «Մարդու կեանքի փրկանքը իր հարստութիւնն է» [Առակ. ԺԳ 8]:

Իսկ նա, ով փոխանակ իրենը կարօտեալներին տալու, նրանց [ունեցածն] է յափշտակում եւ կողոպտում նրանց, եւ փոխանակ հիւրընկալ եւ յոգնած ճամփորդներին հանգստացնող լինելու, գողակից է դառնում գողերի եւ ճանապարհին դարանակալ՝ նրանց, ովքեր անմեղութեամբ գնում են իրենց ուղիղ ճանապարհով, եւ իր տունը լցնում է անիրաւ այդ ստացուածքներով եւ հարստանալ է կարծում... Էլ չեմ խօսում այն աններելի յանցանքների մասին, որով ոչ միայն անմեղների ունեցուածքն են յափշտակում, այլեւ նրանց արիւնն են հեղում, որպէսզի նրանք վկայ չլինեն ունեցուածքը յափշտակողներին, եւ չեն մտաբերում, որ ամէն ինչ իմացող մէկ այլ Դատաւոր կայ, Ումից չեն կարող պահել իրենց գաղտնի չարագործութիւնները: Այսպիսի հարուստների մասին է, որ Քրիստոս իրաւամբ ասում է, թէ դժուար պիտի մտնեն երկնքի արքայութիւն, նրանց օթեւանը արքայութիւնը չէ, այլ՝ գեհենի հուրը, ասպնջական անքուն որդը եւ յաւիտենական տարտարոսը:

Եւ ճշմարիտ է սա, թէ նրանք, որ իրենց արդար ունեցուածքից չեն կերակրում քաղցածներին, չեն հագցնում մերկերին եւ չեն հիւրասիրում օտարներին, Դատաստանի Օրը Քրիստոսից պիտի լսեն. «Գնացէ՛ք Ինձանից, անիծեալնե՛ր, յաւիտենական հուրը» [Մատթ. ԻԵ 41], հապա նրանք, որ աղքատի առաւել քաղցի՛ պատճառ են լինում, տառապեալի՝ մերկութեան, օտարի՝ ունեցուածքի եւ անձի կորուստեան պատճառ են դառնում եւ, փոխանակ բանտարկեալներին տեսնելու եւ խօսքով ու գործով մխիթարելու, նպաստում են, որ անմեղ արձակուածները բանտի եւ կապանքի մատնուեն, ու՞ր եւ ի՞նչ չափով պիտի պատժուեն արդեօք, եթէ ոչ՝ սատանայի եւ իր արբանեակների հետ, որոնց կամքն էլ կատարեցին:

Հետեւաբար, աղաչում եմ ձեզ՝ բոլորիդ, որ հեռանաք կորստական այս գործերից: Ոչ ոք թող չարդարացնի մեղ-

քերի պատճառները՝ ասելով. «Եթէ չզրկենք եւ չյափշտակենք, մեր իշխանութիւնը չենք կարող հաստատուն պահել»: Այս մասին նախ հետեւեալն ենք ասում. եթէ իշխանութիւն ունեցողներին անկարելի լինէր Աստծուն հաճոյ լինել, ապա ինչպէ՞ս Սուրբ Գրքում յիշուած թագաւորներից եւ իշխաններից շատերը գովելի եղան Աստուծոյ եւ մարդկանց առաջ: Դարձեալ՝ եթէ, ըստ ձեր ասածի, անկարելի լինէր առանց զրկելու իշխել, այն ժամանակ իմաստունը պէտք է փախչէր անցաւոր իշխանութիւնից՝ անանց տանջանքներով սատանայի հետ չտանջուելու համար: Սակայն անհնարին չէ առանց անիրաւութեան իշխանութիւնը վարել, այլ՝ դիւրին եւ հեշտ՝ սիրողի ու կամեցողի համար, եւ մենք վկայում ենք Աստուծոյ առջեւ եւ երաշխաւորում բոլորին, որ եթէ մէկը իր տունը մաքուր պահի զրկանքներից եւ արդար վաստակածը միայն հաւաքի այնտեղ, թէեւ թուայ, թէ՝ սակաւ է, աւելի շահեկան կլինի եւ պատճառ՝ հարստութեան, քան անիրաւաբար ձեռք բերուած շատը: Սողոմոն Իմաստունը եւս նոյնն է յայտնում՝ ասելով. «Անէծք կայ ամբարիշտների տանը, իսկ արդարների յարկերն օրհնուած են» [Առակ. Գ 33]: Քանզի անիրաւութեամբ ձեռք բերուած քիչը կրակի նման այրում եւ ապականում է իրաւունքով ձեռք բերուած շատը, քանզի զրկուածներից անիրաւ հաւաքուածը անէծքով եւ դառնութեամբ է, եւ աղքատների անէծքի հետ Աստուծոյ անէծքն էլ է մտնում զրկողի տունը: Իսկ արդարի տունը, որ մաքուր է զրկանքից եւ կերակրող՝ քաղցածների, աղքատների օրհնութեան հետ Աստուծոյ օրհնութիւնն էլ, ծածուկ եւ անյայտ մտնելով այնտեղ, սակաւը բազմացնում է, ինչպէս Սարեփթացի այրու [ալիւրն ու իւղը] [տե՛ս Գ Թագաւորաց ԺԷ 8–17], սովնացի



կնոջ [իւղը] [տե՛ս Դ Թագաւորաց Դ 8–17] [կամ հացն ու ձուկը], որոնցով Տէրը [բազմութիւններ] կերակրեց անապատում [տե՛ս Մատթ ԺԴ 13–21 եւ ԺԵ 32–38]:

Անմիտներն ու մարմնասէրները, տեսնելով, որ զրկողները եւ ամբարիշտները բազում ունեցուածքներ ունեն, իսկ արդարութեամբ ստացողները՝ սակաւ, թող չծաղրեն մեր խօսքը: Այնպիսին թող լսի աստուածահայր Դաւիթ մարգարէի խօսքը. «Աւելի լաւ է արդարի քիչը, քան մեղաւորի շատ հարստութիւնը» [Սաղ. ԼԶ 16]: Նոյնն է ասում նրա որդին՝ Սողոմոնը. «Արդարի համար աշխարհը լի է ինչքերով, իսկ ամբարշտի համար մի դանգ իսկ չկայ» [Առակ. ԺԷ 4] եւ դարձեալ՝ «Աւելի լաւ է կերակրուել բանջարով՝ հանդարտութեամբ, քան թէ մեծամեծ զուարակներով՝ անիրաւութեամբ» [Առակ. ԺԵ 17]: Ճշմարիտ է սա, քանզի նրանք, ովքեր իրենց իրաւացի եւ արդար ունեցուածքից են կերակրւում, ոչ մի պատիժ չեն կրում Աստծուց, իսկ նրանք, ովքեր զրկելով, գողութեամբ կամ յափշտակութեամբ են լցնում իրենց սեղանները, Դատաստանի Օրը տոկոսով պիտի հատուցեն այն բոլորի համար, ինչը, ուրիշներից առնելով, առատապէս վայելում են:

Հաւատքի պահքը մի՛ խախտէք իշխանաբար՝ ձկով եւ գինով, որպէսզի անժուժկալների հետ չդատուէք:

Դարձեալ՝ ասենք նաեւ այս, որ ստութիւնն ու խաբէութիւնը, որոնք, ըստ Քրիստոսի, չարից՝ սատանայից են, թէեւ բոլորին են վնասում, բայց առաւելապէս՝ մեծամեծներին եւ իշխաններին, քանզի փոքրը ջանում է ստութեամբ իր խօսքը հաստատել եւ հաւատացնել, որովհետեւ անզօր է, իսկ մեծը, որ իշխանաբար կարող է իր ուզածը անել, աւելի յանցաւոր է լինում, երբ արհամարհում է իրաւունքը: Դար-

ձեալ՝ ռամիկ մարդը, երբ ստում է կամ մի այլ վատ բան գործում, այնքան ակնյայտ չի լինում, ոչ էլ՝ հրապարակայնօրէն նախատւում, իսկ մեծի պարագայում փոքր սխալն իսկ պատճառ է դառնում, որ մերձաւորներն ու հեռաւորները հայհոյեն եւ թշնամութիւն անեն: Մեծերի պատուիրանազանցութիւնները նաեւ առիթ են տալիս, որ չարը սիրողները չարութեան օրինակ առնեն նրանցից: Ուստի աղաչում եմ՝ մի՛ խաբէք եւ մի՛ ստէք՝ ո՛չ ձեր հպատակներին, ո՛չ էլ՝ օտարներին, այլ երբ որեւէ մէկին խօսքով բարիք խոստանաք, նոյնը գործով կատարեցէ՛ք, քանզի այն հաճոյ է ե՛ւ Աստծուն, ե՛ւ մարդկանց, եւ բոլոր բերաններից ձեզ գովութեան պատճառ կլինի:

Նաեւ ձեր զինուորների եւ բոլոր ծառայողների սահմանուած թոշակը մի՛ պակասեցրէք, քանզի մեծ զրկանք ու անիրաւութիւն է դա: Ինչպէս նրանք ձեզանից ստացած պարգեւների փոխարէն պարտական են արիւն թափելու ձեզ համար, նոյնպէս էլ դուք պէտք է նրանց խոստացուած թոշակը անթերի հատուցէք: Բռնութեամբ չափից աւելի ոչինչ մի՛ պահանջէք նրանցից, որպէսզի ձեզանից կողոպտուելու եւ անիրաւ կերպով բանտ ու պատիժ կրելու վախից գաղտնի չփախչեն եւ չուրանան ձեզ տուած իրենց երդումը. եւ դա երկու կողմերից էլ՝ թէ՛ նրանց եւ թէ՛ ձեզ համար մեղք կլինի: Իսկ եթէ համամիտ լինէք մեր խորհրդին ու խրատին, հետեւեալ կա՛րգը հաստատէք բոլոր ձեր ծառայողների համար. այնքան ժամանակ, որքան մէկը ցանկանում է ձեզ ծառայել, հաւատարմութեամբ եւ առանց նենգութեան թող ծառայի, երբ ցանկանայ դուրս գալ ձեր ծառայութիւնից, առանց վախի յայտնապէս հրաման թող խնդրի ձեզանից, եւ դուք խստութեամբ ու բռնութեամբ արգելք



մի՛ եղէք, այլ եթէ չէք ուզում իր մեկնելը, ջանացէ՛ք սիրով եւ իր կամքով պահել, իսկ ուրիշներին քաղցրութեա՛մբ արտօնէք եւ եթէ որեւէ բան պարտական էք, հատուցէ՛ք նրանց: Երբ նման արդարութիւն տեսնեն ձեզանից, կա՛մ երբէք չեն գնայ եւ կա՛մ էլ, թէ գնան, շուտով դարձեալ ձեզ մօտ կվերադառնան: Այսպիսով երդմնազանցութեան խղճմըտանքից կազատէք թէ՛ նրանց եւ թէ՛ ձեզ եւ դրանով Աստծուց մեծ վարձքի կարժանանաք:

Դարձեալ՝ յօժարութեամբ մի՛ երդուէք Աստուծոյ անունով, սուրբ Աւետարանի եւ Խաչի վրայ, եթէ չկայ ծայրագոյն անհրաժեշտութիւն, քանզի Աւետարանում Քրիստոս երդումի մասին ասում է. «Ամենեւին մի՛ երդուիր, ոչ միայն Արարչով, այլեւ՝ արարածներով, ո՛չ երկնքով եւ ո՛չ երկրով եւ ո՛չ էլ իսկ՝ քո գլխով» [տե՛ս Մատթ. Ե 34], այլ դուք ձեզ այնպէս ճշմարտախօ՛ս ցոյց տուէք բոլորին, որ մարդիկ մինչեւ իսկ ձեր պարզ խօսքին հաւատան երդումի պէս: Իսկ եթէ ծայրահեղ պատճառ լինի երդուելու, թող ոչ ոք աններելի յանցանքով չմեղանչի՝ երդումը ուրանալով եւ երդմնազանց լինելով, քանզի աւելի չար է երդումն ուրանալը, քան անհաւատների առաջ մահուան սպառնալիքի տակ [հաւատքը] ուրանալը, որովհետեւ այն բռնութիւնից է եւ տանջանքի ու մահուան վախից, իսկ միւսը՝ կամաւորաբար եւ կորստական մի չնչին շահի համար: Եւ սրանք իրարից տարբերւում են այնպէս, ինչպէս կամաւոր մեղքը տարբերւում է ակամայ մեղքից:

Ոչ միայն հաւատակից քրիստոնեաների նկատմամբ պէտք է առանց ստութեան երդումը պահել, այլ նաեւ՝ այլազգիների եւ մա՛նաւանդ՝ նրանց նկատմամբ, որպէսզի պատճառ չլինէք, որ նրանք հայհոյեն Աստուծոյ անունը եւ

քրիստոնէական հաւատքը: Եթէ Աստուած հրեաների երդմնազանցութեան պատճառով նրանց ազգը եւ քաղաքը* մատնեց կռապաշտ Նաբուգոդոնոսոր թագաւորին, որքան աւելի հիմա կպատժի նրանց, ովքեր ստում եւ ուրանում են այլազգիներին տրուած երդումը: Ոչ ոք թող չպատճառաբանի, թէ նրանք ստում են մեզ տուած երդումները, պէտք է մենք եւս նրանց նկատմամբ նոյնը անենք: Նրանց եւ մեր տուած երդումը հաւասարազօր չէ, քանզի մերը ճշմարտութեան հանդէպ է, մինչ նրանցը՝ ո՛չ: Ուստի մենք որպէս իրենց Տիրոջ կամքը գիտեցող, բայց չկատարող ծառաներ, աւելի ծանր պատժի պիտի ենթարկուենք, իսկ նրանք որպէս տգէտներ՝ թեթեւ պատժի:

Դարձեալ՝ աղաչում ենք՝ չլինի, որ բարկութիւնից դրդուած եւ անարդար իրաւունքով որոշում տաք՝ կա՛մ մէկին պատժէք, կա՛մ մահուան վճիռ կայացնէք, քանզի Նոր օրէնքը այս բանը չի թոյլատրում, իսկ Հին օրէնքը թէեւ թոյլատրում է իւրաքանչիւրին պատժով կամ մահուամբ դատել, բայց ոչ՝ անտեղի, այլ՝ ըստ յանցանքների արժանի լինելու: Ուստի դուք, որ իշխանութիւն ունէք, թէեւ [այս մասին] Նոր օրէնքով շարժուելը անկարելի էք համարում, կատարեցէ՛ք Հին օրէնքի հրամանները՝ այդ պարագաների համար տրուած: Իսկ եթէ, առանց օրէնքի դատելով, մարդկանց անիրաւաբար սպանէք ու պատժէք, հաստա՛տ իմացէք, որ Դատաստանի Օրը Աստուած պիտի պահանջի ձեզանից սպանուածների արիւնը ու պատժուածների կտրուած անդամները:

---

* ի նկատի ունի Երուսաղէմը



Այս պատուէրը ե՛ւս աւանդում ենք ձեզ. վրիժառու եւ քէնախնդիր մի՛ եղէք, որի համար Եսայի մարգարէն նախատում է Իսրայէլի իշխաններին [տե՛ս Եսայ Ա 23], այլ, ըստ Քրիստոսի պատուիրանի, եղէ՛ք ներող եւ համբերող բոլոր նրանց հանդէպ, ովքեր ձեր դէմ մեղանչել են, որպէսզի դուք էլ քաղցրութիւն ու բարերարութիւն ընդունէք Նրանից՝ ըստ խօսքի, թէ՝ «Մի՛ դատէք, եւ չէք դատուի, [մի՛ պատժէք, եւ չէք պատժուի], որովհետեւ [ինչ դատաստանով որ դատէք, նրանով պիտի դատուէք] եւ ինչ չափով որ չափէք, նրանով կչափուի ձեզ» [Մատթ. է 1]:

# ԶԻՆՈՒՈՐՆԵՐԻ ԴԱՍԵՐԻՆ

Ըստ կարգի խօսենք նաեւ զինուորներիդ դասերի մասին, որ իշխանութիւնների ու պետութիւնների էք ենթակայ: Նախ եւ առաջ ձեզ յիշեցնում ենք առաքելական խօսքը, որ պատուիրում է ամէն ինչում հնազանդուել ձեր տէրերին. «Ցուցադրաբար մի՛ ծառայէք որպէս մարդահաճոներ, այլ՝ սրտի միամտութեամբ որպէս Աստծուն» [տե՛ս Եփես. Զ 6]: Քանզի նաեւ ասում է՝ Տէրն է հատուցողը, այսինքն՝ նա, ով հաւատարմութեամբ է ծառայում նրան, որի իշխանութեան տակ է, թէեւ նրանից ինչ—որ զրկանք կրի, թող չտրտմի, քանզի Աստուած է, որ հատուցում է նրան բարիքների փոխարէն՝ ըստ իր ուղիղ վաստակի [Նոյն. Զ 8]: Իսկ նա, ով նենգութիւն անի խօսքով կամ գործով իր տիրոջ անձի կամ նրա ամրոցի կամ ունեցուածքի հանդէպ, Աստծուն կանի այդ նենգութիւնը եւ ոչ թէ՝ մարդուն, եւ Աստծուց պիտի ընդունի իր չարիքների հատուցման վրէժը: Այդպիսին մերժուած է հաւատքից եւ անհաւատներից էլ աւելի չար է, քանզի նրանք թէեւ ճշմարիտ հաւատքից եւ Աստուծոյ օրէնքներից մոլորուած են, բայց իրենց տէրերի նկատմամբ հաւատարմութիւնը եւ մտերմութիւնը հաստատուն են պահում իրենց հոգում:

Ի՞նչ ասենք քրիստոնեայ իշխանների մասին. [Նրանց նկատմամբ] միամտութիւն եւ սէր պէտք է ունենալ՝ թէ՛ յայտնապէս եւ թէ՛ ծածուկ: Իսկ եթէ քրիստոնեան այլազգիի իշխանութեան ներքոյ է եւ նրա պարգեւներից է կերակրւում եւ հանդերձաւորւում, նոյն հաւատարմութիւնը պէտք է ցուցաբերի նրա նկատմամբ եւ առանց նենգութեան ծառայի: Քանզի երբ Պօղոս առաքեալը գրում էր, թէ՝ «Ծառաներ, հնազա՛նդ եղէք ձեր տէրերին» [Կողոս. Գ 22], ծառաների տէրերը ոչ թէ քրիստոնեայ էին, այլ՝ կռապաշտ, բայց սրանով յայտնապէս ցանկացաւ հեթանոսներին ցոյց տալ քրիստոնեաների ճշմարիտ օրէնքը, թէ՝ մեր օրէնքներով ատելի է տիրոջ հանդէպ նենգութիւնը, եւ սիրելի՝ հաւատարմութիւնը, որպէսզի չլինի, թէ, քրիստոնեաներից մէկին նենգութեան մէջ տեսնելով, հայհոյանքով խօսեն մեր օրէնքի եւ հաւատքի մասին:

Եթէ ձեր տէրերը ձեզ որեւէ գործի վերակացու կարգեն կամ որեւէ բան տնօրինելու ուղարկեն, արդարութեամբ եւ իրաւունքո՛վ վարուէք հպատակների հետ, անխղճօրէն եւ անիրաւաբար որեւէ մէկին մի՛ նեղէք, անկարեկից հոգով մի՛ զրպարտէք որեւէ մէկին՝ դահիճների օրէնքով հանդէս գալով նրանց առաջ, եւ ձեզ հրամայուածից աւելի մի՛ վերցրէք՝ ըստ սուրբ Մկրտչի խրատի [տե՛ս Ղուկ. Գ 13], այլ գոհացէ՛ք ձեր թոշակով: Ողորմութեամբ ու սիրո՛վ վարուեցէք բոլորի հետ, որպէսզի դուք է՛ւս ողորմութիւն գտնէք Աստծուց: Զինուորութիւնը պատճառ թող չլինի, որ արհամարհէք Աստուծոյ պատուիրանները եւ անհնազանդ գըտնուէք ձեր [հոգեւոր] առաջնորդներին, որոնք ձեզ խրատում են Աստուծոյ պատուիրանները պահել, կամ սուրբ պահքը անօրինաբար լուծարէք կամ աղքատների ունեցուածքի յափշտակութիւնն ու անմեղ արեան հեղումը մեղք չհամարէք, քանզի բացի ընդհանուր պատերազմի մէջ գործուած սպանութիւններից, որոնք թագաւորների հրամանով են լինում, ձեր բոլոր գործածների համար Աստուած ծանր եւ անաչառ դատաստանով հաշիւ պիտի պահանջի ձեզանից:

Նաեւ ձեզ համար սահմանուած ռոճիկից դուրս, աղքատներից անիրաւաբար եւ բռնութեամբ յափշտակուածի

կամ ձեր տէրերի ինչքերից գողացածի դիմաց Դատաստանի Օրը լիովին պիտի հատուցէք:

Հասարակ ժողովուրդից առաւել պէտք է դո՛ւք վախենաք Աստծուց եւ Նրա պատուիրանները պահէք, քանզի ամէն ժամ թշնամիների սրի դէմ էք պատերազմում: Հետեւաբար, մարմնական զէնքերից աւելի հաւատքի՛ զէնքերով սպառազինուէք, այսինքն՝ աստուածպաշտութեամբ, արդարութեամբ, սրբութեամբ, պահքով, աղօթքով եւ ողորմութեամբ, որպէսզի պատերազմներում Աստուած լինի ախոյեանը եւ թշնամիներին հալածի ձեր առջեւից:



## ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ

Պատուիրում ենք նաեւ քաղաքացիներին, առեւտրականներին եւ արհեստաւորներին, որ ուղիղ եւ անարատ կենցաղավարութեամբ վարէք ձեր կեանքը: Թող որեւէ մէկը խաբէութեամբ եւ նենգութեամբ իր ապրանքները չվաճառի անմեղ գնողներին եւ մանաւանդ՝ չխաբի ռամիկին ու տգէտին՝ ստախօսութեամբ եւ սուտ երդումով, քանզի Դատաստանի Օրը այդպիսին պիտի դատուի գողերի եւ յափշտակողների հետ, եւ Աստուած, վերցնելով իր բարեգործութիւնը, պիտի տայ նրանից զրկուածներին:

Երկու կշռաչափ մի՛ գործածէք՝ մեծ եւ փոքր, քանզի երկուսն էլ պիղծ են Տիրոջ առջեւ, ինչպէս ասաց Սողոմոնը [տե՛ս Առակ. Ի 10], այլ արդարութեամբ եւ շիտակութեա՛մբ վաճառէք ձեր ձեռքի գործերը եւ ձեր վաճառքի նիւթերը, որպէսզի զրկուածների անէծքը չայրի ձեր գոյքը, այլ Աստուծոյ օրհնութիւնը մտնի ձեր տները:

Մի՛ արհամարհէք շինականներին իբրեւ տգէտ իրենց պարզամտութեան համար, քանզի Աստուած աւելի շատ է սիրում նրանց արդարամիտ կեանքը, քան արատաւոր ու խաբեբայ մարդկանց:

Ինչպէս մարգարէն է պատգամում՝ ձեր դրամը վարձով մի՛ տուէք նրանց, որոնք իշխողների բռնութիւնից նեղւում են [տե՛ս Եզեկ. ԺԸ 8], եւ վաշխերի շահով մի՛ կերէք նրանց աղքատ վաստակը, այլ որպէս եղբայրներ կարեկից եւ օգնակա՛ն եղէք միմեանց: Ինչ որ փոխ էք տալիս նրանց, ա՛յն միայն պահանջեցէք նրանցից եւ անանց կեանքում բազմապատիկ վարձք կշահէք Աստծուց, քանզի Քրիստոս հրամայում է ոչ միայն առանց վաշխի տալ, այլեւ՝

«Տուէ՛ք նրանց, որոնցից ստանալու ակնկալիք չունէք» [Ղուկ. Զ 34]:

Նաեւ՝ ձեր բոլոր ունեցուածքից ողորմութի՛ւն տուէք կարօտեալներին եւ աղքատներին, որպէսզի դրանով սըրբուի ձեր ամէն ինչը, եւ Դատաստանի Օրը Քրիստոսից ստանաք փոխարէնը:



# ԵՐԿՐԱԳՈՐԾՆԵՐԻՆ ԵՒ ՀԱՄԱՅՆ ԺՈՂՈՎՐԴԻՆ

Լսեցէ՛ք եւ դուք, երկրագործներ եւ համա՛յն ժողովուրդ, Աստուծոյ պատուիրանի խրատը, որն աւանդում ենք ձեզ: Առաւելաբար դո՛ւք պէտք ունէք հոգեւոր դեղի ձեր հոգիները բժշկելու համար, որպէսզի առողջանաք մեղքերի հիւանդութիւնից:

Ուստի աղաչում եմ ձեզ՝ անցաւոր կեանքի մարմնական հեշտութեամբ մի՛ կորցրէք հոգիների յաւիտենական հանգիստը, որ երկնքի արքայութեան մէջ վայելում են սուրբերը: Եւ որովհետեւ տաճարն էք Աստուծոյ, ինչպէս ասաց առաքեալը [տե՛ս Կորնթ. Գ 16], եւ Աստուծոյ Հոգին բնակուած է ձեր մէջ Աւազանի մկրտութեամբ, պղծալի պոռնըկութեամբ եւ շնութեամբ մի՛ ապականէք Աստուծոյ տաճարը՝ ձեր հոգիները, որպէսզի Աստուած էլ ձեզ չապականի Դատաստանի Օրը գեհենի հրով, ինչպէս գրում է Պօղոսը [տե՛ս Ա Կորնթ. Գ 17]:

Մի՛ արբէք գինով, որում զեխութիւն եւ յիմարութիւն է, որ մայր է պոռնկութեան, ամէն տեսակ պղծութիւնների, անիրաւութեան, վէճի, անարգալից աղտոտ խօսքերի, որից լինում են նաեւ սպանութիւններ, որպէսզի, ըստ առաքելական խօսքի, մարդասպանների եւ չարագործների հետ չարտաքսուէք Աստուծոյ արքայութեան ժառանգութիւնից [տե՛ս Գաղ. Ե 20—21]: Եթէ ձեզանից մէկը այս կամ այլ յանցանքներով մեղանչի Աստուծոյ դէմ, մինչեւ վախճանի օրը չմնայ միշտ նոյն աղտեղի սովորութեան մէջ, այլ խոստովանութեամբ եւ ապաշխարութեամբ քաւի իր յանցանքները եւ այնուհետեւ չարի փոխարէն բարի գործի:

Դարձեալ՝ ձեր լեզուն սատանայի գործիքի մի՛ վերածէք՝ չար եւ դառը հայհոյանքներով, մանաւանդ՝ որոնցով անարգւում է թէ՛ հաւատքը, թէ՛ Հոգին, թէ՛ Աւազանի մկրտութիւնը, թէ՛ մկրտիչ քահանան, թէ՛ անձը եւ թէ՛ բերանը: Այս անարգանքը աւելի մեծ յանցանք է, քան ուրացումը կամ թլփատութիւնը, քանզի այլազգիները, որոնք քրիստոնեային ստիպում են ուրանալ հաւատքը, Աստծուն անարգել չեն ստիպում: Իսկ նա, ով հաւատքն է անարգում, ոչ թէ մարդուն է անարգում, այլ՝ Աստծուն, քանզի ամէն աստուածապաշտի հաւատքը Աստուած է: Նոյնպէս էլ նա, ով մկրտութիւնն ու մկրտիչ քահանային է անարգում, այդ անարգանքը Սուրբ Հոգու նկատմամբ է, քանզի մկրտուողը Նրանով է ծնւում Աւազանից: Իսկ նա, ով մարդու հոգին եւ անձն է անարգում, նորից Աստծուն է վերաբերւում հայհոյութիւնը, քանզի հոգին Աստծուց է փչւում, եւ անձը Աստուծոյ պատկերն է, ինչպէս եւ բերանը ընդունողն է Քրիստոսի Մարմնի եւ Արեան: Արդ, մի՛ տրտմեցրէք Աստուծոյ Սուրբ Հոգուն նման զազրելի եւ աղտոտ խօսքերով, որպէսզի Աստուծոյ Հոգին չհեռանայ ձեզանից, որ ձեր մէջ բնակուեց Աւազանով, եւ Նրա փոխարէն՝ սատանայի հոգին մտնի եւ բնակուի ձեր սրտում:

Դարձեալ՝ առհասարակ բոլոր հաւատացեալներիդ այս պատուիրանն էլ ենք տալիս, որ ձեր մանուկներին Աստուծոյ երկիւղո՛վ սնուցէք՝ խրատելով նրանց, որ մանուկ տարիքից լինեն աստուածասէր, ողորմած եւ աղօթասէր: Աղօ՛թք սովորեցրէք նրանց եւ սաստեցէ՛ք, որ աղտոտ խօսքեր եւ հայհոյանքներ չսովորեն, քանզի մանուկ հասակում ծնողների խրատը աւելի անջնջելի յիշողութեամբ է դրոշմւում մանուկների մտքում. դրա փոխարէն բարիքների վարձքը պիտի ընդունէք Տիրոջից:



Եւ գլխաւորը ամէն բարիքների՝ իրար հանդէպ սէ՛ր ունեցէք, նաեւ աղքատների, մերկերի, հիւրերի, բանտարկեալների եւ հիւանդների նկատմամբ՝ կարեկցութիւն եւ ողորմութիւն, որով արքայութեան ժառանգորդ կլինէք Յիսուս Քրիստոսով:

## ԿԱՆԱՆՑ

Պատուիրում եմ նաեւ ձեզ՝ կանանց, որ պարկեշտ եւ բարեձեւ լինեք ամեն ինչում, ինչպես վայել է քրիստոնեաներին: Ոսկուց ու արծաթից աւելի ձեր անձե՛րը զարդարէք ամօթխածութեամբ եւ պատկառանքով: Թող ոչ ոք օտար ներկերով իր երեսը չայլագունի՝ մեղքի գայթակղութեան պատճառ դառնալով անմիտ երիտասարդներին, որպէսզի իր հոգին եւ իրեն ցանկացողին անօրէնութեան գուբը չնետի:

Ոչ ոք թող չնմանուի օձին՝ անօրէնութեան գործիք դառնալով սատանային, ում նաեւ կաւատ են անուանում, քանզի ինչպես նա խաբէութեամբ մահուան պտուղը ուտել տուեց Եւային, նոյնպէս էլ անմիտ կանանց եւ արանց ճաշակել է տալիս մահաբեր մեղքերի պտուղը, որը սկզբում անմիտներին քաղցր է երեւում, իսկ վերջում՝ լեղուց աւելի դառը: Այդպիսին Աստծուց օձի անէծքը պիտի ժառանգի նրա գործը կատարելու համար:

Դարձեալ՝ թող որեւէ մէկը սատանայական կախարդութեան ու աղանդաւոր դեղատուութեան չհետեւի. եթէ այլ մեղքերը վնասում են [հաւատքի] գործերին, ապա սա՝ հաւատքին, քանզի կախարդութիւնը սատանայից է, եւ եթէ մէկը նախ Աստծուց չհեռանայ եւ իրեն սատանայի պաշտօնեայ եւ երկրպագու չանի, չեն յաջողուի կախարդութիւնները: Հետեւաբար, աղաչում ենք՝ հեռացէ՛ք այդպիսի մեծ եւ աններելի չարիքներից, որպէսզի սատանայի հետ գեհենի հրին չդատապարտուէք, քանզի սա կռապաշտների՛ գործն է եւ ոչ՝ քրիստոնեաների, եւ Քրիստոս իր գալստեամբ վերացրեց կուռքերի մոլորութիւնները ու սատանայի չար գործերը:

Արդ, թող ոչ ոք վերստին գործակից չլինի սատանային՝ կախարդութեան չար գործերով, եւ նրա հետ գեհենի հրում յաւիտեան չայրուի:

Կան նաեւ բազում այլ բաներ աստուածային պատուիրաններից ձեզ գրելու համար, որպէսզի զգուշանաք մեղքից եւ բոլոր չար գործերից: Բայց ինչ որ պակասում է մեր այս գրութիւնից, կարող էք սովորել ձեր քահանաներից եւ եպիսկոպոսներից, որոնք Աստուծոյ կողմից տեսուչ են կարգուած ձեր հոգիների համար՝ օր ըստ օրէ ձեզ աւանդելու ճշմարտութեան խօսքը: Եւ մենք կաղաչենք Տիրոջը, որ հանի ձեր միջից քարեղէն սիրտը եւ ձեզ տայ մարմնեղէն սիրտ՝ արգաւանդ հող լինելու եւ արդիւնաւորելու մեր խօսքի սերմը ձեր հոգիներում եւ բազմապատիկ՝ մէկի փոխարէն հարիւր, պտուղ տալու համար, եւ մենք զուարթագին եւ անտրտում երեսով Դատաստանի Օրը Դատաւորի առջեւ ասենք. «Ահա ես եւ իմ մանուկները, որոնց ինձ տուեցիր» [Եբր. Բ 13], եւ ձեզանով հանդերձ աջակողմեանների հետ դասուենք յաւիտենական կեանքում՝ մեր Տէր Յիսուս Քրիստոսով, որ օրհնեալ է յաւիտեանս. ամէն:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երկու խօսք
Ս. Նրսէս Շնորհալի 6
Խմբագրութեան կողմից 17
Հայոց Ներսէս Կաթողիկոսի ընդհանրական թուղթը համայն հայ ժողովրդին, որի առաջնորդութիւնը վստահուեց նրան Տիրոջ կողմից 19
Վանքերի խարազնազգեստ կրօնաւորներին 38
Վանական սուրբ ուխտերի առաջնորդներին 59
Աշխարհի մէջ գտնուող Եկեղեցու առաջնորդներին, որոնք եպիսկոպոս են կոչւում 65
Քահանաների դասին 80
Աշխարհի իշխաններին 103
Զինուորների դասերին 114
Քաղաքացիներին 117
Երկրագործներին եւ համայն ժողովրդին 119
Կանանց 122